Ֆ 9

ԵՍՐԻՇԻՆ

1984

Ս.

Ախ 146

ԽԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

1984



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (1984 թ. հունվարի 6)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ դավակներ Մեր,

Շատ ու շատ դարեր առաջ, հեռու մի փոքրիկ, մոռացված քաղաքում Բեթղեհեմ կոչված, մի անշուք իջևանի հարկի ներքո, մի բարեպաշտ մայր՝ անունը Մարիամ, ծնունդ տվեց մի արու երեխայի: Այդ պահին, գիշերվա խոր լռության մեջ, երկնակամարի վրա մի լուսավոր աստղ ծագեց և երկնքի բարձունքներից լսվեց մի քաղցր երգ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ծնվում էր Փրկիչը աշխարհի՝ Հիսուս: Նրա ծնունդը ավետում էին երկնքից շողացող աստղը պայծառ և ուռնման երգը հրեշտակների, որ դարավոր երազն էր աշխարհի ժողովուրդների խոնարհ զանգվածների:

Սուրբ Ավետարանը վկայում է, որ «նա մեծ պիտի լիսի և պիտի կոչվի Որդի Բարձրյալի ... և նրա թագավորությունը վախճան չի ունենալու...» և որ նա գալիս է պատվիրանի զորությամբ, այն Աստուծո, «որ հզորներին տապալեց իրենց աթոռներից և բարձրացրեց խոնարհներին: Քաղցածներին լիացրեց բարիքներով և մեծատուններին ձեռնունայն արձակեց» (Ղուկաս Ա 32—54): Այսպիսով, Հիսուս լինելով արդարության արեգակ և խաղաղության իշխան, ճանաչվեց որպես Փրկիչ ազգի մարդկան:

Եվ այսօր էլ, համայն մարդկային աշխարհը նույն երազանքներով, նույն սպասումներով ոգեորված, իր հայացքը դեպի երկինք հառած, Նոր տարվա լուսաբացին, հուսացյալ սրտով ողջունում է մանուկ Հիսուսի հրաշալի ծննդյան ավետիսը: Այս ավետիսով այսօր էլ միսիթարվում են հավատավոր հոգիները, միսիթարվում են արդարության և խաղաղության ծարավի բոլոր մարդիկ, բոլոր ազգերը:

Հիսուսի ծնունդը երկնքի պատասխանն է արդարության և խաղաղության ծարավի մահաբխուճապ սերունդների:

Հին Կտակարանի իմաստունը հոգեպես պարտված և հուսախաբ՝ կյանքից, մարդկանցից, դարավոր մեղքերից ու անարդարություններից, աղաղակել էր՝ «Ունայնութիւն ունայնութեանց, ամէն ինչ ունայնութիւն է»:

Հիսուս եկավ փարատելու ունայնությանց մշուշը, քանդելու տիրապետող հպորների աթոռը և բարձրացնելու խոնարհներին, բարիքներով հագեցնելու քաղցյալներին, անիրավվածներին:

Հիսուս բերեց աշխարհին իր հոգու խաղաղությունը և խաղաղությամբ սերմանեց արդարության սերմերը: Հիշենք Հակոբոս առաքյալի մարգարեական խոսքերը, թե՝ «Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ որ առնեն վխաղաղութիւն» (Յակոբ. առաքելոյ Գ 18):

Մանավանդ ատոմական մեր դարաշրջանում հրամայականորեն այժմեական է՝ արդարությունը խաղաղությամբ սերմանելու այս պատգամը:

Այլևս չի կարելի խոսել մարդասիրության ու արդարության մասին առանց ապահովելու նախ խաղաղ գոյակցությունը աշխարհի պետությունների:

Աստված այնքան սիրեց մարդկանց, որ իր Որդուն աշխարհ ուղարկեց խաղաղության և բարի կամեցողության պատգամներով: Եվ ինքը Հիսուս՝ Աստուծո Որդին, հավատարիմ իր Հոր արարչագործ կամքին, այնքան սիրեց մարդկանց, որ նրանց փրկելու համար վոհվեց խաչափայտի վրա խաղաղության պատգամը շրթներին:

Աստուծո և նրա Որդու՝ Հիսուսի սերը դեպի մարդիկ, հիմնականում և առաջին հերթին արտահայտվում է խաղաղարար տնօրինությամբ:

Ավետարանի բոլոր մեծ պատգամների կիսկակետը սիրո և խաղաղության գաղափարներն են:

Մեր օրերին աշխարհի խաղաղությունը պահպանելու և ընդհանուր կամ գոնե մասնակի վինաթափման հրամայականը՝ ամենաքրիստոնեական, ամենաբարոյական գաղափարն է: Այսօր ու ապագայում, եթե մարդկությունը իր գոյատևումը ապահովելու համար կարիք ունի մի գաղափարախոսության, դա անպատերազմ խաղաղ գոյակցության գաղափարախոսության հաստատումն է մարդկային աշխարհում:

Մեկ համար մխիթարական է, որ աշխարհի բոլոր Եկեղեցիները մեր օրերին դեպի երկինք են բարձրացնում իրենց աղոթքը ի խնդիր աշխարհի խաղաղության:

Հոյժ մխիթարական է նաև, որ Միացյալ Ազգերի Կազմակերպությունը մեկ ամիս առաջ, գրեթե միաձայնությամբ արձանագրեց իր պատմական վճիռը, ատոմական պատերազմը հայտարարելով «իբրև ամենահրեշային ոճիրը ժողովուրդների դեմ և ժխտումը մարդու ամենահիմնական իրավունքի, ապրելու իրավունքի»: Այս վճիռը լուսեղեն տառերով արձանագրված պիտի մնա պատմության և մարդկության խղճի երկնակամարի վրա:

Ու չմոռանանք, որ մենք՝ հայերս, առանձնապես շահագրգռված ենք խաղաղության պահպանման հարցում, որովհետև լավ ենք հիշում մեր ազգի տխուր անցյալը, լավ ենք հիշում դարեր շարունակ մեր մայր երկրի ավերումները, կոտորածները, լավ ենք հիշում 1915 թվականի յաթաղանի սարսափը:

Պետությունների խաղաղ գոյակցությունը հայ ազգի ու հայրենիքի գոյատևման միակ ապահով ճանապարհն է:

Այս է թելադրում մեկ մեծ Եղեռնի երկու միլիոն նահատակների սուրբ հիշատակը:

Այս է թելադրում մեզ Սարգարապատի հերոսամարտը:

Այս է թելադրում մեզ մեր օրերի վերածնված ու վերաշինված Մայր Հայաստանի աշխարհագրական դիրքը:

Արդ, սիրելյալ ժողովուրդ Մեր որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, եթե կամենում եք հայկական հայրենասիրության դիրքերի վրա անշարժ կենդանած մնալ, ապա ձեր միակ իդեալը թող լինի համախմբումը՝ Մայր Հայաստանը և նրա բնակչությանը խաղաղ ու անվտանգ պահպանելու հրամայականի շուրջը:

Արտերկրի Մեր կավակները թող մնան, այո՛, միշտ օրինապահ ու շինարար քաղաքացիները իրենց բնակված հյուրընկալ երկրների, բայց և միշտ ապրե՛ն ի խնդիր իրենց Մայր հայրենիքի և սնտեղ ապրող իրենց քույրերի ու եղբայրների անվտանգության և խաղաղ ծաղկման:

Մեր ապգի Մայր Եկեղեցու գերագույն հույսն ու երազանքը կա ու կմնա լրումը Եսայի մարգարեի տեսիլքի՝ «Թող իրենց սրերից խոփեր ձուլեն և իրենց սվիններից մանգաղներ, և ազգ ազգի դեմ սուր չբարձրացնի, և այլևս չսովորեն պատերազմել» (Եսայի Բ 4):

Սիրելի հավատացյալներ, ա՛յս երազանքով դիմավորենք այս տարի ևս մեծ ավետիս Սուրբ Ծննդյան և աղոթենք, որ «խաղաղության և ի մարդիկ հաճության» հրեշտակների երգը ավելի ու ավելի ճառագայթի մեր աշխարհի մարդկանց սրտերում ու կյանքում, «որովհետև Աստված խառնության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության» (Ա Կորնթ. ԺԴ 33):

Ես աղոթում եմ նաև, որ «Խաղաղության Տերն ինքը միշտ խաղաղություն սա՛ ձեզ տվեն ինչում» (Բ Թես. Գ 16), ձեր ընտանեկան հարկի տակ, ձեր ձեռաց գործերին, ձեր աշխատանքի վայրում, ձեր եկեղեցական համայնական կյանքում:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մեր Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ», ամեն:

Բոլոր Եկեղեցիներ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա);

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հունաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի Հունաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Ե-ԻՆ (Կահիրե),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռուսին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ).
Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա).
Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԷԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս).
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք. Նորին
Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս).
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք. Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ).
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք.
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս).
Քենթբրերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն).
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս. Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք).
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք. Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ).
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա).
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա).
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոսիա).
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք. Նորին Ամենապատվություն
ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՐ ԽՈՐԵՇԻՆ (Կերկե).
Մարսելի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել).
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՖՐԱՆՑ ՔՅՈՆԻԳԻՆ (Վիեննա).
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին
Ամենապատվություն կարդինալ
Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան).
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ).
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԲԵՐ ԴԵԿՈՒՐՏԵԻՆ (Լիոն).
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերապանցություն ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա).
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերապանցություն ԷԴԳԱՐ ԽԱՐՔԻՆ (Տալլին).
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ,
Նորին Սրբազնություն ՔԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա).
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև).

Մխիթարյան ուխտի Աբբահայր, Գերապայծառ Հայր
ՀՈՎՀԱՆՆԵՍ վարդապետ ԴԵՐՁԱԿՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այսօր երկինք և երկիր միանում են հրեշտակների երգովը աննման, որ ավետում է աշխարհին ծնունդը Որդվոյն Աստուծո, Փրկիչը ապգի մարդկան:

Այսօր հոյսով լի սրտերը բոլոր մարդկանց, բոլոր ժողովուրդների դեպի երկինք են բարձրացնում իրենց աղոթքները խնկաբույր, աղերսելով երկնքից, որ «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» պատգամը փրկարար լուսավորի կյանքի հորիզոնը մեր օրերի ուղեկորույս մարդկության, և ապգերը բոլոր գտնեն իրավ ճանապարհը համերաշխ ու արդար գոյակցության, որ դարավոր երազանքն է նաև մեր Մայր Եկեղեցու և քանի՞-քանի անգամ եղեռն տեսած մեր ժողովրդի:

Այս աղոթքով ու այս սուրբ զգացումով ոգեշնչված, ավետում ենք Ձերդ Սրբությանը՝ հրաշալի ծնունդը «խաղաղութեան իշխան» Փրկչին մեր Քրիստոսի, մաղթելով Ձերդ Սրբությանը հովվապետության արևոտ ու խաղաղ բազում տարիներ և Ձեր աստվածահաճո առաքելության մշտական ճառագայթում, ի գլուխ Ձեր պատմական Սուրբ Եկեղեցու:

Սուրբ Ծննդյան շնորհներով ավելի լույս, ավելի սեր և ավելի խաղաղություն համայն մարդկության:

Եղբայրական հարգալից սիրով՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Փառք ի բարձունս Աստծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այսօր երկինք և երկիր միանում են հրեշտակների երգովը աննման, որ ավետում է աշխարհին ծնունդը Որդվոյն Աստուծո, Փրկիչը ապգի մարդկան:

Այսօր հուսով լի սրտերը բոլոր մարդկանց, բոլոր ժողովուրդների դեպի երկինք են բարձրացնում իրենց աղոթքները թնկսրույր, աղերսելով երկնքից, որ «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» աստղամը փրկարար լուսավորի կրանքի հորիզոնը մեր օրերի ուղեկորույս մարդկության, և ապգերը բոլոր գրտնեն իրավ ճանապարհը հաշտաշխ ու արդար գոյակցության, որ դարավոր երազանքն է նաև մեր Մայր Եկեղեցու և քանի՞-քանի անգամ եղեռն տեսած մեր ժողովրդի:

Այս աղոթքով ու այս սուրբ սպասումներով ոգեշնչված, ողջունում ենք Նոր տարին և ավետում Ձեզ՝ հրաշալի ծնունդը «խաղաղութեան իշխան» Փրկչին մեր Քրիստոսի, սաղթելով Ձեզ, Սուրբ Աթոռիդ միաբանությանը, թեմական-եկեղեցական վարչական մարմիններին և հատկապես ձեր հավատացյալ ժողովրդին, կենաց արևոտ ու խաղաղ բազում տարիներ ու եկեղեցաշեն հոգեշահ իրագործումներ, բերելով բոլորին տիրավանդ կենարար օրհնություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Եղբայրական սիրո ողջույններով՝

ՎԱՉԳԵՆ Ա
ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեղուն բալմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորակնների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՀԱՐԳԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ

Երևան

Նոր տարվա տոների առթիվ Ձեզ ենք հղում Մեր ջերմագին շնորհավորանքը և բարի մաղթանքները, որ 1984 տարին լինի խաղաղության տարի համայն աշխարհի համար, և Մեր մայր հայրենիքը արձանագրի նորանոր շինարար նվաճումներ՝ ի բարօրություն մեր հարազատ ժողովրդի:

Ձեզ մաղթում ենք նաև արևշատ երկար տարիներ՝ քաջառողջությամբ ու ընտանեկան երջանկությամբ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԳԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երևան

Սուրբ Էջմիածնից Մեզ հաճելի է Ձեզ բերել Մեր խնդակցությունը և ամենաբարի մաղթանքները ամանորյա տոների առթիվ ու ցանկանալ Ձեզ և Ձեր բարձրաստիճան գործակիցներին քաջառողջություն և մշտանորոգ եռանդ Ձեր հայրենաշեն աշխատանքներում՝ ի բարօրություն մեր ժողովրդի:

Մաղթում ենք նաև, որ նոր տարին դառնա մի վճռական հանգրվան աշխարհի ժողովուրդների խաղաղ և շինարար գործակցության:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԳԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա լուսաբացին, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, շնորհավորում ենք Ձեզ և Ձեր աշխատակիցներին ու մաղթում ենք Ձեզ արևշատ քաջառողջ տարիներ և միշտ հաջողություններ Ձեր հայրենանվեր աղաքելության մեջ:

Մնում ենք նաև աղոթող, որ 1984 տարին լինի խաղաղության և շինարար վերելքի տարի մեր մայր երկրի ու ժողովրդի համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք իմ շնորհակալությունը Նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարի ցանկությունների համար: Իմ կողմից ես ևս ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ:

Թող 1984 թվականը մեր հայրենիքի համար լինի հետագա ծաղկման, բարգավաճման ու երջանկության տարի: Թող հաղթանակի բանականությունը, և 1984 թվականը լինի կայուն խաղաղության տարի:

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և մեծ հաջողություններ խաղաղասիրական Ձեր ակնիվ գործունեության մեջ:

ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎ
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՅԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Նոր տարվա գալստյան առթիվ ընդունեցեք իմ ջերմագին շնորհավորանքները: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, բարօրություն, նորանոր հաջողություններ Ձեր հայրենասիրական, խաղաղասիրական գործունեության մեջ:

Թող 1984 թվականը լինի խաղաղության և մեր սովետական հայրենիքի հետագա բարգավաճման տարի:

Հարգանքներով՝

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՅԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, ընդունեցեք իմ սրտագին շնորհավորանքը և լավագույն մաղթանքները տարեմուտի առթիվ:

Թող 1984 թվականը լինի հայրենի երկրի հետագա բարգավաճման ու ծաղկման տարի, առողջության, խաղաղության և երջանկության տարի: Անսպառ եռանդ ու կորով Ձեզ աշխարհում ժողովուրդների բարեկամության ու խաղաղության ամրապնդման Ձեր հայրենանվեր գործում:

Խորին հարգանքներով՝

ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱՂԶՎԱՆՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ 265-ԱՄՅԱԿԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ, ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ բազմադարեան պատմութեան տարածքի վրայ գործել են բազմաթիւ շնորհաշատ նուիրեալ հոգևորականներ, որոնք Սուրբ Հոգով ներշնչուած, ամէն ճիգ ու ջանք թափել են մեր Մայր Եկեղեցւոյ պայծառութեան և ժողովրդի լուսաւորութեան համար:

Այսպէս, ԺԸ դարի ընթացքում Կ. Պոլսի պատրիարքական Աթոռին բազմած երախտաշատ երկու հոգեկարդ պատրիարքներ՝ Տ. Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցին և Տ. Յակոբ Նալեան Զմարացին, ուղիղ կէս դար, 1715—1764 թթ., իրենց հաւատասէր, եռանդուն մեծագործութիւններով, հանդիսացել են արևմտահայութեան հոգևոր ու կրթական կարթօնքի ռահվիրաները:

Նրանց արժանի յաջորդը հանդիսացել է Տ. Զաքարիա պատրիարք Կաղզուանցին, իբրև հոգևոր լուսաւորական շարժման շարունակող, ԺԸ դարի վերջին քառորդին (1773—99 թթ.), նոյնքան արդիւնաւորութեամբ, հիմքը դնելով Կ. Պոլսում հայոց համայնքների առաջին ազգային վարժարանների:

Նա ծնուել է 1719 թ. Կարսի նահանգի Կաղզուան աւանում, սովորել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դպրեվանքում, ապա 1755 թ. վարդապետ է ձեռնադրուել Մայր Տաճարի լուսարարապետ Եղիազար եպիսկոպոսի ձեռամբ, իսկ յետագայում եպիսկոպոս օծուել Տ. Յակոբ Ե Շամախեցի կաթողիկոսի օրհնութեամբ:

Տ. Զաքարիա պատրիարքի ծննդեան 265-ամեակը լրանում է այս տարի:

Տ. Զաքարիա արքեպիսկոպոսը երկու անգամ բազմել է Կոստանդնուպոլսի պատրիարքական Աթոռին՝ 1773—81 և ապա 1782—99 թթ., և շուրջ քսակ-

հինգ տարիներ շարունակ բախտորոշ դեր է կատարել արևմտահայոց հոգևոր-կրթական ու գրական վերակարգավորման ճանապարհի վրայ:

Տ. Զաքարիա Կաղզուանցին վարել է մի շարք պատասխանատու պաշտօններ և ոչքի ընկել իր խղճամիտ գործունէութեամբ: Այսպէս, Յակոբ Ե Շատախեցի կաթողիկոսի հրամանով, նա նշանակուել է Եւդոկիոյ շրջանի նուիրակ, ապա 1764—67 թթ. գործել Մայր Աթոռում, որից յետոյ Սիմէոն Ա Երևանցու կամքից առաքուել է Կ. Պոլիս, կրկին որպէս նուիրակ: 1773 թ. Նոյեմբերին Սուրբ Էջմիածնի նուիրակ Զաքարիա եպիսկոպոսը ընտրում է Կ. Պոլսի հայոց պատրիարք և անցնում այդ խիստ պատասխանատու պաշտօնի կատարման: Իր պատրիարքութեան տարիներին շինարարական և վերանորոգչական բազում կարևոր գործեր է կատարել, կառուցելով Գուրուչէշմէի Ս. Խաչ եկեղեցին, Գումգափուի եկեղեցու շրջափակի պարիսպը և ջրհան կայանը, մայրաքաղաքի մէջ հիւանդանոց և այս բոլորը յաճախ իր սեփական միջոցներով: Նա Թուրքիայի հայաբնակ բազում քաղաքներում կարկ է տուել եկեղեցիների, վանքերի ու դպրոցական շէնքերի կառուցման կամ վերանորոգութեանց, ինչպէս օրինակ՝ Եւդոկիոյ, Պրուսայի, Ակնի, Այրիանապոլսի, Ռոտոսթոյի, Մարզուանի և այլ քաղաքներում:

Օրմանեան պատրիարքի վկայութեամբ, Տ. Զաքարիա Կաղզուանցին՝ «Ներքին նկարագրով կը ցուցուի իբրև կամքի և գործի տէր անձ, ապգին պատուոյն և Եկեղեցւոյ պայծառութեան նախանձախնդիր, ուսման նուիրեալ և դաստիարակութեան հետապնդող, և իր նպատակին աշխատելու մէջ դժուարութենէ չընկճող և ուժգին միջոցներէ չխուսափող»:

Սիրով ընդառաջելով ամենապատիւ Մեր Եղբօր, Կ. Պոլսի այժմու պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեանի 14 Նոյեմբեր 1983 թուակիր խնդրանքին, սոյն Մեր կոնդակով հրաւիրում ենք մեր Մայր Եկեղեցին և համայն մեր հաւատացեալ ժողովուրդը, որ ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, այս տարի աշնանը արժանավայել կերպով տօնախմբելու պայծառ յիշատակը և անկորնչելի վաստակը Տ. Զաքարիա Բ Փոքուկեան Կաղզուանցի սրբազան պատրիարքի, նաև ջերմապէս աղօթելու նրա հոգու խաղաղութեան ու լուսաւորութեան համար երկնային արքայութեան մէջ:

Ջերմապէս կը յանձնարարենք նաև, որ մեր եկեղեցական և մշակութային կազմակերպութիւններն ու հայ մամուլը կենդանի խօսքով և հրատարակութիւններով, ոգեկոչեն անմոռաց յիշատակը և վաստակը հոգեղոյս պատրիարքի:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 17): Ամէն:

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 20 Յունուարի
1984 Փրկչական ամի,
և ի տուամարիս Հայոց ՌՆԼԳ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1239



ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Հիսուսի գերբնական հրաշալի ծնունդով մեկ բոլորիս, մեր օրերի աշխարհին համայն, նույն աստվածային պատգամն է տրվում՝ որ փշրվեն քարե սրտերը, և մարդիկ ու ազգություններ «նոր սիրտ ու ոգի» կգեցած, իրենց կյանքի ճանապարհին՝ արդարությամբ և խաղաղությամբ գործեն, որ արդարությամբ՝ խաղաղություն լինի և խաղաղությամբ՝ արդարություն» (Վեհափառ Հայրապետի 6 հունվարի 1982 թ. Ս. Ծննդյան քարոզից):

Հիսուսի «գերբնական հրաշալի ծնունդը» նվիրական դարձավ քրիստոնեական բոլոր Եկեղեցիների համար: Դեռևս Դ դարի սկզբներից Հայ Եկեղեցին սրբությամբ որդեգրեց Փրկչի հրաշափառ Ծննդի տոնակատարությունը, և այն ավանդաբար փոխանցվեց սերնդե սերունդ մինչև մեր օրերը:

Այս տարի ևս Ս. Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում նշվում են մեծ շուքով ու ոգևորությամբ:

Հունվարի 5-ին, հինգշաբթի.—Ճրագալույց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր տաճարում երեկոյան հանդիսավոր ժամերգությունից հետո սկսվում է Ճրագալույցի ս. պատարագը: Ավագ խորանի վրա պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողպատյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի այնպէս սիրեաց Աստուած կաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ» (Հովհ. Գ 16) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում Ս. Ծննդյան նախատոնակի կարգը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» ու «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականները հավատացյալ ժողովրդին ավետում են Քրիստոսի Ս. Ծնունդը:

Հունվարի 6-ին, ուրբաթ.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր տաճարում առավոտյան տոնական ժամերգությունից հետո, ժամը 11-ին, սկսվում է հանդիսավոր ս. պատարագը:

Ավագ խորանի վրա ս. պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը: «Հայր մեր»-ից առաջ Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով Նորին Սրբությունը Հայրապետական Իր պատգամն է տալիս համայն հավատացյալ հայ ժողովրդին (Վեհափառ Հայրապետի պատգամը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Նույն օրը, երեկոյան, Հայոց Հայրապետի վերոհիշյալ պատգամը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը կատարում է Զրօրհնյաց հանդիսավոր կարգը՝ ոգեկոչելով հիշատակը Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով Հորդանան գետում Քրիստոսի մկրտության:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը Վեհափառ Հայրապետի կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը:

Ճաշկերույթին ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում ողջույնի և շնորհավորական խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գեղեցիկ ավանդություն է դարձել Մայր Աթոռում, որ տարեմուտի վերջին օրը, դեկտեմբերի 31-ին, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ Մայր Աթոռի միաբանները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսները և ուսանողները, ինչպես նաև Մայրավանքի պաշտոնեությունը հավաքվում են միաբանական սեղանատանը՝ հրաժեշտ տալու անցնող տարվան և ուրախությամբ ու լավագույն տրամադրություններով դիմավորելու Նոր տարին:

Ամեն անգամ, երբ հաշված վայրկաններ են մնում հին տարվա ավարտին, և որ որ է, մարդկությունը պետք է ոտք դնի Նոր տարվա սեմին, բոլոր խաղաղասեր մարդկանց միակ ցանկությունն է լինում, որ Նոր տարին մեր ժամանակների փոթորկալից աշխարհի համար լինի խաղաղության տարի: Եվ պատահական չէ, որ այս նվիրական ցանկությունը միշտ բանկ և հարազատ է եղել թե՛ Հայ Եկեղեցուն և թե՛ հայ ժողովրդին:

Ամանորի երեկոն սկսվում է Տերունական աղոթքով, որից հետո հոգևոր ճեմարանի սաները երգում են «Ճեմարանի քայլերգը»:

Հոգևոր ճեմարանի տեսչության անունից Վեհափառ Հայրապետին և ներկաներին ուղղված շնորհավորական իր խոսքն է ասում ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը.

«Սովորաբար կյանքում հրաժեշտի պահերը թախիծ և տխրության զգացումներ են պարունակում: Սակայն այսօր մեր սրտերում խինդն ու ուրախությունը ավելի շատ է: Այսօր մեր սրտերը լեցուն են բերկրալից սպասումով՝ եկող 1984 տարվա ծննդյան սպասումով:

Առանձնահատուկ գոհություն ենք մատուցում առ Աստված անցնող տարվա համար, քանի որ այդ տարվա մեջ Հայ Եկեղեցին և ի մասնավորի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երերջանկությունն ունեցան հանդիսավորապես տոնելու Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ծննդյան 75 և քահանայական ձեռնադրության 40-ամյակները: Իր հերթին Նորին Սրբությունը, սրբազույն մեռոնի օրհնությամբ, աստվածային շնորհներ բաշխեց Հայ Եկեղեցուն և նրա միլիոնավոր զավակներին:

Անցնող տարվա մեջ հիշատակելի է նաև «Հիսուս Քրիստոս կյանքն աշխարհի» նշանաբանով տեղի ունեցած ԵՀԽ-ի 6-րդ համագումարը, որի աշխատանքներին իր գործուն մասնակցությունը բերեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ ութ պատգամավորներով: Եթե այս ամենին ավելացնենք Նորին Սրբության հովվապետական այցելությունը Անգլիայի և Ֆրանսիայի հայ ժողովրդին, ապա կարծում եմ բավականին լուրջ հայտեր կունենանք 1983 թվականը Հայ Եկեղեցու պատմության մեջ արձանագրելու որպես բարեհաջող տարի:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի համար նույնպես անցնող տարին եղավ արդյունավետ մի ժամանակաշրջան: Ցանկանում եմ միայն նշել, որ մի քանի օր առաջ հոգևոր ճեմարանի ավարտական լարանի ութ սաներ դարձան Հայաստանյայց Եկեղեցու սարկավագներ:

Կյանքի հիմնական օրենքներից մեկն է այն, որ մարդ չի բավարարվում իր ձեռք բերածով և միշտ ձգտում է ավելիին, բարձրին: Կյանքի այդ օրենքով էլ ապասում ենք Նոր տարվան:

Սիրելի սեղանակիցներ, ահա այս մտածումներով թույլ տվեք բաժակ բարձրացնել

մեր բոլորի սիրելի Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության համար՝ մաղթելով Նորին Սրբությանը արդյունաբեր տարի, երջանիկ հովվապետություն, որպեսզի եկող տարվա ընթացքում Հայ Եկեղեցին և Ս. Էջմիածինը նորանոր հաջողություններ արձանագրեն ի փառս մեր Եկեղեցու, մեր ժողովրդի և մեր հայրենիքի»:

Տեր հոր շնորհավորանքի խոսքից հետո. ներկաները ոտքի են կանգնում և միասին ոգևորությամբ երգում «Հայրապետական մաղթանքը»: Ապա Գ լսարանի ուսանող Ռաֆիկ Իսախանյանը արտասանում է Եղիշե Չարենցի «Էլի գարուն կգա» բանաստեղծությունը, իսկ քիչ անց սեղանատանը թընդում է «Կենաց երգը» ճեմարանի երգչախումբի կատարմամբ:

Ապա միաբանության անունից շնորհավորական խոսք է ասում Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը՝ նշելով. «Պատմությունը, որ կոչվում է մարդկության հիշողություն, կարմանալիորեն երբեք չի կրկնվում: Թեև տարին կրկնվում է իր 365 օրերով, բայց այդ օրերը հանդես են գալիս նոր իրադարձություններով, նոր դեպքերով: Եթե մենք թերթենք 1983-ի էջերը, ապա կտեսնենք, որ այդ ընթացքում Հայ Եկեղեցին, գլխավորությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, հաւավ նորանոր հաջողությունների և նվաճումների: Այսօր, հավաքված այստեղ, գոհունակությամբ հիշում ենք Մայր Աթոռում այս տարվա մեջ կատարված գործերի մասին և այդ բոլորի համար շնորհակալություն հայտնում Վեհափառ Հայրապետին, որ, իբրև հոգևորական, արդեն քառասուն տարի անխոնջ կերպով իրեն նվիրել է ի պաշտառություն Հայաստանյայց Ս. Եկեղեցու»: Իր խոսքի վերջում Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը իր միաբան եղբայրների անունից շնորհավորում է Վեհափառ Հայրապետին Նոր տարվա առթիվ՝ ցանկանալով նրան երկար տարիների քաջառողջ կյանք և աշխատանքային մեծ եռանդ, որպեսզի Նորին Սրբությունը կարողանա ի կատար ածել իր բոլոր եկեղեցաշեն ծրագրերը ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Այնուհետև ճեմարանի երգչախումբը կատարում է «Սեղանն է առաստ» և «Փրկչի ծնունդը» երգերը: Իսկ Գ լսարանի ուսանող Ի. Ղասաբյանը արտասանում է բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի «Նոր տարի» բանաստեղծությունը:

Հոգևոր ճեմարանի դասախոսների անունից Վեհափառ Հայրապետին ուղղված իր շնորհակալական խոսքի մեջ ճեմարանի գրաբարի դասախոս Պետրոս Բեդիրյանն ասում է. «Այս տարի Մայր Աթոռի, ինչպես նաև հայոց ազգի համար բարեբաստիկ տարի էր: Չնայած որ ունեցանք համազգային կորուստներ, բայց դրանց փոխարեն ինչպիսի օրինյալ ընտանիքներում, օրինյալ օրորոցներում ծնվեցին մանուկներ, որոնք, ով գիտե, ազգի ապագան և կարկառուն դեմքերն են լինելու, ինչպես 75 տարի առաջ Պալճյանների օրինյալ ընտանիքում ծնվեց նա, որի ծնողները դեռ չգիտեին, թե ինչ են պարգևում ազգին: Բայց, այնուամենայնիվ, այդ պարգևը բոլորի կողմից ընդունված պարգև եղավ»: Շարունակելով իր խոսքը՝ պարոն Բեդիրյանը նշում է, որ շուտով բոպեները մեկ կբաժանեն հին տարուց, հին հուշերից և կմտցնեն Նոր տարվա մեջ, նոր սպասումներով և նոր հույսերով: Ապա դասախոսական կազմի անունից շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ ասում է. «Եւ մեք միաբան առ Տէր կարդասցուք, զի նա երկար կենօք կեցուսցէ զՎեհափառ Հայրապետն եւ զՀայրն ազգիս Հայոց»:

Նորից ելույթ են ունենում ճեմարանի սաները: Ա լսարանի ուսանող Մկրտիչ Դավթյանը արտասանում է իր գրած «Նոր տարի» բանաստեղծությունը, իսկ Վահագն Դավթյանի «Իմ ժողովուրդ» բանաստեղծության արտասանությամբ հանդես է գալիս Ա լսարանի ուսանող Ս. Նազարյանը:

Ճեմարանի ուսանողության անունից շնորհակալական խոսք է ասում ավարտական լսարանի ուսանող Հակոբ Գալթագճյանը, որը իր խոսքն ավարտում է Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ բարեմաղթություններով.

«Վեհափառ Տեր, հայրական ջերմ հոգատարությունն ու վերաբերմունքը, որ տածում եք մեր՝ ուսանողներիս հանդեպ, կանչում է մեկ պատասխանի: Խոնարհաբար հայտնելով Ձեզ մեր որդիական ջերմ ու երախտագիտական զգացումները՝ ի սրտե մաղթում ենք, որ այս նոր տարին լինի Ձեզ համար առողջության ու երջանկության տարի: Թող Աստված էլ ավելի բեղմնավոր դարձնի Ձերդ Սրբության ազգաշեն ու հայրենանվեր գործունեությունը:

Օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր»:

Ավանդություն դարձած կաղանդչեքերի ընթերցումը կրկնապատկում է բոլորի ուրախությունը, և նույն ուրախությամբ էլ սկսվում է Նոր տարվա նվերների վիճակահանությունը:

Երեկոյի վերջում Նոր տարվա օրհնության և շնորհավորանքի խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՄԻԱԲԱՆՆԵՐ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՄԵՏՄԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԲԱԿՈՒՄ, ԱՄԱՆՈՐԻ ՏՈՆԱՑԱՆԻ ԱՌՋԵՎ

ՀԱՍՏ
ԱԿ'ՊԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱՄԱՆՈՐԻ ՀԱՅԴԵՍԻՆ
(31 դեկտեմբերի 1983 թ.)

Ես պետք է գոհություն հայտնեմ Աստծուն, որ արդեն 28-րդ անգամն է, ինչ առիթ եմ ունենում հայրենի երկրում, պատմական այս կամարների ներքո դիմավորելու ձեզ հետ Նոր տարին: Իրոք բախտավոր եմ զգում ինձ, որ ձեզ հետ միասին եմ: Թե ինչքան նոր տարիներ կդիմավորեմ, այդ արդեն Աստծո կամքն է:

Հարկ է նշել, թե տարիները գալիս ու անցնում են, և անցնում են թե՛ լավ, թե՛ վատ օրերը: Այստեղ անցնող տարվա նկատմամբ արտահայտվեցին ճշմարտացի մտքեր և շեշտվեցին այն բոլոր հաջողությունները, որոնք նվաճվեցին Մայր Աթոռում, բայց տրխրությամբ հիշում եմ ես, որ 1983-ին մենք ունեցանք նաև կորուստներ: Ընդհանուր հեռացան մեզանից այնպիսի վաստակաշատ անձինք, ինչպիսիք էին՝ Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ դոկտոր, պրոֆեսոր Հայկ Մելքոնյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիսյանը, Մայր Աթոռին մոտիկ ճարտարապետների հանձնաժողովի անդամ Ալեքսանդր Սահինյանը, որոնք երեսուն տարիներ մեր նվիրյալ գործակիցներն էին:

Բայց այսօր տոնական օր է, և բոլորս պետք է ուրախ լինենք, քանի որ ամեն մարդու ուրախություն է պատճառում հին տարվա ավարտը և նորի դիմավորումը: Քրիստոնեական ըմբռնմամբ, նույն իմաստն ունի նաև Սուրբ Ծննդյան տոնը, որովհետև Քրիստոսի ծնունդը քրիստոնյա մարդկանց համար բուսաբացն է մի նոր կյանքի: Հայ Եկեղեցին ավանդությամբ այս երկու տոները գրեթե անբաժան է նշում, և մենք միշտ շնորհավորում ենք Նոր տարին ու Սուրբ Ծնունդը միասին:

Այսօր պետք է ցանկություն հայտնել, որ այս տոնական ուրախությունը, որ վայելում ենք, և այն, ինչ որ մեզ ներշնչում են այս երկու տոները՝ իբրև վերանորոգումը մեր կյանքի, լավատեսությունը ապագայի նկատմամբ, բարի զգացմունքները, շինարար մտածումները, եռանդը, չլինեն լոկ մեկ օրվա խաբուսիկ պահեր, այլ տարածվեն հաջորդ օրերի վրա՝ մինչև մյուս կարևոր տոնախմբումը, ասենք՝ Հարության տոնը:

Վերջերս մի ընթերցման առիթով հանդիպեցի «տոն» բառի բացատրությանը: Հետաքրքրական է, որ այդ բառը եբրայեցերեն ելնում սերվում է «շրջանագիծ» բառից: «Թալմուդի» միջնադարյան մեկնաբաններից մեկը հետևյալ ձևով է մեկնաբանել «տոն» բառի իմաստը: Նա բացատրում է, որ տոնական օրը շրջագծի կենտրոնն է հանդիսանում և հավասար չափով միացած է շրջագծի վրա գտնվող բոլոր կետերի հետ: Գաղափարական իմաստով՝ տարվա օրերը հաջորդաբար միացած են տոն օրերի հետ: Այսպիսով, այն տրամադրությունները, իղձերը, ելույթները, որ ներշնչում են մեզ տոնական օրերը, անցողական չլինեն և տարածվեն բոլոր հաջորդող օրերի վրա:

Օգտագործելով այս մեկնաբանությունը՝ ցանկանում եմ, որ ուրախ տրամադրություններով և վերանորոգված ներշնչանքներով, տենք բոլորս դիմավորենք առաջիկա տարին, և մեր այս բարի զգացումներն ու եռանդը չտկարանան գալիք մյուս օրերի ընթացքում, որպեսզի կատարենք մեր պարտքը այնպես, ինչպես մեզանից պահանջվում է, այնպես, ինչպես ցանկանում ենք: Եվ մեր կյանքը քայլ առ քայլ առաջ ընթանա, և մեր եկեղեցական գործը առավել զարգանա ու ծաղկի մեր երկրում և արտասահմանում:

Այս Նոր տարվա սեմին երջանիկ ենք նաև հաստատելու, թե մեր օրերում մեր վերածնված հայրենիքը բարվոք պայմաններում, գրեթե բոլոր բնագավառներում, հերոսական հիգեր է գործադրում, որպեսզի հայ ժողովուրդը ավելի լավ ճանաչի իր անցյալի արժեքները, այդ անցյալով գնահատի ներկան ու նոր սխրագործություններով կերտի իր էլ ավելի պայծառ ապագան:

Այս բարենպաստ պայմաններում, մաղթում եմ բոլորին ուժ, եռանդ, նվիրվածություն, որպեսզի ամեն մեկը ունենա այն գիտակցությունը, եկեղեցական առումով, թե մենք վերածնության սկզբնական շրջանի մեջ ենք գտնվում և պետք է շարունակենք, մինչև որ հասնենք այն բարձունքներին, որոնց վրա գտնվել է մեր Եկեղեցին անցյալում:

Թող հաստատ մնա և տևապես զարգանա Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և 1984 թվականը լինի բեղմնավոր աշխատանքի, բարի իրագործումների և աշխարհի խաղաղության տարի:

Կեցցե՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

* * *

Ամանորի ուրախ երեկոն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Կեսգիշերին Մայրավանքի զանգերի խորհրդավոր զողանջները ողջունում են հին տարվա ավարտը և Նոր տարվա սկիզբը:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս Մայր Աթոռում նշվեց Ս. Ստեփանոսի տոնը:

Ս. Ստեփանոսը իրապես դարձավ Հիսուս Քրիստոսի փրկչական և անմահ գործի համար նահատակված առաջին մարտիրոսը: Նրա արյունը թափվեց հանուն սրբական գործի՝ Տիրոջ ճշմարտացի խոսքը տարածել ասնհավատների մեջ և լուսավորել նրանց մութ հոգիները աստվածային լույսով: Նրա հիշատակը միշտ վառ մնաց քրիստոնեական Եկեղեցում:

Այս սուրբ տոնը, դարերի խորքից եկած, նվիրական է դարձել Հայաստանյայց Եկեղեցու համար: Այն նշվում է Ավագ Տոների հետ դեկտեմբերի 25-ին, իսկ եթե այդ օրը կիրակի կամ պահոց օր լինի, նշվում է հաջորդ օրը:

Ս. Ստեփանոսի տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշանավորվում է նաև հոգևոր ճեմարանի վերջին լսարանի սարկավագական ձեռնադրությամբ: Այդ գեղեցիկ ավանդույթի շարունակությունն է այս տարեվերջին սարկավագների նոր հունձը:

Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի.—Տօն Սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին.

Այսօր, առավոտյան, Մայր տաճարում տեղի է ունենում հանդիսավոր ժամերգություն, որի ընթացքում կատարվում են օրվա սրբին նվիրված «Նահատակ բարի Քրիստոսի», «Այսօր դասք» և «Ընդ երկնայնոց» շարականների հանդիսավոր երգեցողությունները:

Ժամերգության ընթացքում, «Փառք ի բարձունս Աստուծոյ...» փառաբանական օրհներգության ժամանակ, Մայր Աթոռի սարկավագները սաղավարտներով և բուրվառ ի ձեռին դուրս են գալիս եկեղեցական ատյան ու խնկարկում հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին:

Սուրբ արարողությունը նույն հանդիսավորությամբ շարունակվում է մինչև ժամերգության ավարտը:

Ժամը 10.30-ին Մայր տաճարի Ս. Ստեփանոս նախասարկավագի խորանի վրա սկսվում է տոնական ս. պատարագի արարողությունը: Օրվա պատարագիչն է Մայր Աթոռի միաբան Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը: Պատարագի սուրբգրական ընթերցումներից առաջ սկսվում է հոգևոր ճեմարանի վերջին լսարանի յոթ ուսանողների սարկավագական ձեռնադրությունը: Նորընծաները իրենց սարկավագական կոչումը ստացել էին դեկտեմբերի 24-ին՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանի: Նույն օրը սրբական հայրը դպրության չորս աս-

Մի պահ սարկավագական Ձեռնադրության արարողությունից

տիճաններ էր շնորհել ճեմարանի մի խումբ ուսանողների:

Մոտենում է ձեռնադրության խորհրդավոր պահը: Հնչում է «Աստուածային և երկնաւոր շնորհս...» շարականի հանդիսավոր երգեցողությունը: Յոթ նորընծաները ծնրադիր, ձեռքները ուսերից վեր բարձրացրած, աշխարհիկ կյանքից հրաժարվելու խորհրդանշական դիրքով դառնում են դեպի ժողովուրդը: Շարունակելով սրբական արարողությունը, ձեռնադրության որոշ աղոթքներից հետո, ձեռնադրող սրբական հայրը հերթով սարկավագական խորհրդանիշ սուրբ ուրար կրելու, ճաշու Ավետարանը ընթերցելու և սրբական խորանին սպասարկելու, «վերաբերում» կատարելու իրավունք է շնորհում նորընծաներին:

Ձեռնադրության արարողությունից հետո Տ. Ներսես եպս. Պոլատյանը արտասանում է ուգեշունչ մի քարոզ (Տ. Ներսես եպիսկոպոսի քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 24):

Հավարտ ս. պատարագի Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը Վեհարանում Վեհափառ Հայրապետին է ներկայացնում Մայր Աթոռի ավագ և յոթ նորընծա սարկավագներին: Սույն ընդունելությանը ներկա էին Տ. Ներսես եպս. Պոլատյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը, փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը, ճեմարանի դասախոսներ Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը և Տ. Հովնան աբեղա Տերտերյանը:

Վեհափառ Հայրապետը ջերմորեն շնորհավորում է իր հոգևոր զավակներին, խոսում Ս. Ստեփանոսի նահատակության մեծ խորհրդի մասին և մաղթում, որ նորընծաները ունենան նախասարկավագի խոր հավատը, ունենան անկեղծ նվիրում դեպի Հայ Առաքելական Եկեղեցին և հայ ժողովուրդը:

Ժամը 14.30-ին միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի սարկավագների: Ճաշկերույթին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

Նորընծա սարկավագներին ուղղված շնորհավորության խոսք են ասում Մայր Աթոռի միաբաններ Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը և Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը:

Հանուն սարկավագների պատասխան շնորհակալական խոսք է ասում բարեշնորհ Սարգիս սրկ. Գուտուլյանը՝ խոստանալով, որ իրենք առանց թերանալու կկատարեն իրենց վրա դրված բոլոր պարտականությունները:

Սիրո ճաշկերույթն անցնում է ուրախ և ջերմ մթնոլորտում:

*
* *

Սարգիս սարկավագ Գուտուլյան. ծնվել է 1965 թ. փետրվարի 12-ին Բեյրութի Պուրճ-Համմուտ թաղամասում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Սահակ-Մեսրոպյան վարժարանում, որից հետո ուսումը շարունակել է Սահակյան քոլեջում: 1978 թ. ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

*
* *

Մկրտիչ սարկավագ Ներսիսյան. ծնվել է 1959 թ. հոկտեմբերի 30-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում: 1977 թ. ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը: 1980 թ. գարնանը, զինվորական ծառայությունից հետո, ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

*
* *

Հակոբ սարկավագ Գալթագճյան. ծնվել է 1962 թ. դեկտեմբերի 17-ին Լիբանանում: Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Պուրճ-Համմուտի Սահակ-Մեսրոպյան վարժարանում, որից հետո ուսումը շարունակել է Սահակյան քոլեջում: 1979 թ. ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

*
* *

Վահան սարկավագ Խաչատրյան. ծնվել է 1958 թ. հունիսի 26-ին Եղեգնաձորի շրջանի Եղեգնաձոր ավանում: Եղեգնաձորում թերի միջնակարգ կրթություն ստանալուց հետո, 1973-ին ընդունվում է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը: Զինվորական ծառայությունից հետո, 1980 թ. ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

*
* *

Ալեքսանդր սարկավագ Սարգսյան. ծնվել է 1962 թ. Երևանում: 1978 թ. ավարտել է Երևանի № 139 միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

*
* *

Հակոբ սարկավագ Մարտիրոսյան. ծնվել է 1958 թ. հունվարի 23-ին Արարատի շրջա-

նի Շիրակցու գյուղում: 1975 թ. ավարտել է Մենդելեևի միջնակարգ դպրոցը: 1978 թ., զինվորական ծառայությունից հետո, ընդունվել է Էջմիածնի ակումբագրադարանային տեխնիկում և ավարտել 1980 թ.: 1981 թ. ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

* * *

Գուրգեն սարկավագ Մարտիրոսյան. ծնվել է 1954 թ. մարտի 20-ին Ադրբեջանական ՍՍՀ Սումգայիթ քաղաքում: 1966 թ. ավարտել է Երևանի № 132 մաթեմատիկական թերամոլ դպրոցը: 1976 թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի ռուսերեն լեզվի և գրականության բաժինը: 1976—1977 թթ. եղել է զինվորական ծառայության մեջ: 1980 թ. ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա սարկավագներին և մաղթում, որ նրանք հոգևոր ճեմարանում ուսումնառության և Մայր Աթոռի ծառայության տարիներին մշտանորոգ եռանդով կատարեն իրենց պարտականությունները և իրենց անմնացորդ նվիրումը բերեն Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին:



Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԻՆ
(26 դեկտեմբերի 1983 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ստեփանոս, այր լի շնորհօք եւ զօրութեամբ» (Գործք Զ 8):

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Նոր Կտակարանի, Գործք Առաքելոց գրքի Զ և Է գլուխներում նկարագրվում է քրիստոնեական առաջին համայնքի կազմության, նրա կյանքի և նրան հուզող հարցերի մասին: Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի համբարձումից հետո, նրա հետևորդները, աշակերտների գլխավորությամբ, կազմեցին առաջին քրիստոնեական համայնքը՝ Եկեղեցին: Համայնքի անդամների թիվը օրավուր աճում էր. նոր Եկեղեցուն էին անդամակցում ոչ միայն տեղացի հրեաներ, այլև եկվորներ՝ Միջերկրականի ավազանը շրջապատող մի շարք երկրներից: Այս իսկ պատճառով սկսվել էր անհասկացողությունը և դրանով վեճը բույն էր դրել նորահաստատ համայնքում: Այդ շրջանում, առաջին հավատացյալների մոտ, սովորություն կար ամեն կիրակի՝ Տիրոջ Հարության օրը, սիրո սեղաններ մատուցել: Եվ քանի որ համայնքները օրավուր աճում և բազմանում էին, առաքյալները, լինելով սահմանափակ թվով, չէին կարողանում և՛ քարոզությամբ, և՛ ուսուցմամբ զբաղվելուց բացի, նաև ծառայել համայնքային ճաշի սեղաններին: Հետևաբար, նրանք ի մի հավաքվելով, համայնքի ծերերի հետ համախոհ, որոշում են, որ համայնքից ընտրվեն յոթ անձեր՝ սպասարկելու համար սեղաններին: Այդ օրերին քրիստոնեական նորահաստատ հանրությունում աչքի էր ընկնում մի երիտասարդ՝ Ստեփանոս անունով, որի մասին Գործք Առաքելոցի հեղինակն ասում է. «Այր լի շնորհօք և զօրութեամբ»: Նա համարձակությամբ քարոզում էր Քրիստոսի Ավետարանը և օժտված էր աննկուն հավատքով և նվիրումի ոգով:

Հիսուսի աշակերտները, իրենց ձեռքերը դնում են ընտրված յոթ հավատավոր երիտասարդների վրա, գլխավորությամբ Ստեփանոսի, և նրանց, հանուն Սուրբ Երրորդության, ձեռնադրում սարկավագներ՝ ծառայելու համար սեղաններին, որպեսզի դրանով անհասկացողությունները վերացնեն նոր համայնքի ծոցից:

Քրիստոսի հրաշափառ հարությունից հետո, քրիստոնեական նոր կրոնի հետևորդների դեմ հալածանքը բազմապատկվել էր: Մովսիական կրոնի ղեկավարները կազմակերպել էին խիստ հետապնդում և հալածանք բոլոր նրանց դեմ, որոնք հետևում էին նոր կրոնին: Այսպիսի մի հալածող խմբակի գլուխն էր եղել Սողոսը՝ Ս. Պողոս առաքյալը, իր դարձից առաջ, իբր հետևանք Դամասկոսի ճանապարհին պատահած հրաշքի:

Հակառակ այս հալածանքներին, Ստեփանոս սարկավագը համարձակությամբ ամեն տեղ քարոզում էր խաչյալ Քրիստոսին, որ մահվանից հարություն առավ և մարդկության նոր կյանք պարգևեց: Նրա երկայրի խոսքերը պատճառ դարձան, որ հրեա մեծամեծները ձերբակալել տան նրան և ատյանի դատաստանի առաջ բերեն:

Ստեփանոսը բերվեց ատյանի առաջ: Այստեղ ևս, երբ խոսքը իրեն տրվեց, նա համարձակաձայն բարբառով խոսեց և հրեա ժողովրդի ողջ պատմության միջից կարմիր թելի նման անցկացրեց հայտնի մարգարեների, մեծամեծ մտածողների ակնկալությունը Մե-

սիրի գաղտնի մասին: Նշենք, որ այդ Մեսիան հենց ինքը Քրիստոսն էր, որին իրենք՝ երեսները խաչեցին և նրա անմեղ արյան հեղման պատճառը եղան:

Այս խոսքերի վրա ատյանը և ներկաները ընդվզեցին: Նրան մեղադրեցին իրրև աշակերտ և հետևող Քրիստոսի, ինչպես նաև հայհոյիչ ազգային սրբությանց: Քաղաքից դուրս տարան և այնտեղ, իրենց ծանր զգեստները հանելով և ի պահ դնելով Սողոսի մոտ, քարկոծեցին Ստեփանոսին: Քարերի հարվածների տարափի տակ, Սուրբի դեմքի վրա դեպում էր հոգու խաղաղության և Քրիստոսի պարգևած մխիթարության ժպիտը: Նա աչքերը հանդարտորեն փակելուց առաջ ասաց. «Տեր Հիսուս, ընդունիր իմ հոգին» և ծունկի գալով՝ բարձրաձայն աղաղակեց. «Տե՛ր, սա մեղք մի՛ համարիր դրանց»: Եվ ավանդեց հոգին:

Ճիշտ է, Ս. Ստեփանոսի անմեղ արյունը թափվեց, բայց ինչպես Երանելի Օգոստինոս հայրապետն է վկայում՝ «Մարտիրոսների արյունը եկեղեցու՝ քրիստոնեության սերմն է»: Քրիստոնեական կյանքի վաղ պատմության, առաջին մարտիրոսը, նախավկան եղավ Ս. Ստեփանոսը, սակայն նրա մարտիրոսությամբ ո՛չ քրիստոնեությունը վերջ գտավ և ո՛չ էլ սարկավագությունը վերացավ: Նրա մարտիրոսությունից, մոտավորապես երկու հարյուր տարի հետո, որքան ճշմարիտ է հնչում Ս. Օգոստինոսի այս վկայությունը:

Այսօր Ս. Էջմիածնի Մայր տաճարի՝ Ս. Ստեփանոս նախավկայի հիշատակին նվիրված Սուրբ Սեղանի առաջ յոթ նոր Ստեփանոսներ ենք ձեռնադրում: Նրանք հոգևոր ճեմարանի վերջին լարանի ուսանողներ են արդեն, հատուն հոգով և մարմնով, որոնք իրենց հոժար կամքով եկել են ծնրադրելու Տիրոջ Սեղանի առաջ, ստանալու այն շնորհը, որ Սուրբ Ստեփանոսն ստացավ բարում դարեր առաջ սուրբ առաքյալների նվիրական ձեռքից:

Ինձ համար հոգևոր մխիթարության օր է այսօր, իրրև տրուպը առաքելական շնորհաց արժանացածներից՝ տալու իմ հերթին խորհրդավոր թվով յոթ նոր թեկնածուներին վեհ ու սուրբ աստիճանը սարկավագության:

Սիրելի հավատացյալներ,

Ձեռնադրության պահին հնարավոր չափով փորձում էի հատակ ընթերցել աղոթքները, որպեսզի հասկանալի լինեն դրանք ձեզ համար: Աղոթքներում նշվում էր, թե սարկավագության թեկնածուներից ինչ է պահանջվում: Ի՞նչ բարում այդ առաքինությանց՝ պահանջվում է. մաքրություն՝ հոգևոր իմաստով, նվիրում՝ հավատքով, և՝ կոչման գիտակցություն: Սա պարզիսի վեհ առաքինություններով պատված՝ երանք ծառայելու են Աստծուն ժողովրդի ծառայության ճանապարհով և լինելու են «Բանին կենաց» կենդանի արտահայտությունը:

Ստացած իր ստեղծած արարածի՝ մարդու հետ կապված է երկնքի և աներևույթ կապերով: Ձեր կոչման գիտակցությունը ձեր հոգի կապն է լինելու Աստուծո հետ, ձեր ամբողջ կյանքի ընթացքում անապրաք կերպով նվիրվելու և ծառայելու համար Հայաստանյաց Սուրբ Եկեղեցուն: Ձեր կոչման ձայնը պետք է լինի ուժեղ, անկորնչելի, բարձրագագաթվող արձագանքով, որպեսզի այդ ուժգնությամբ ոգեստացնի ինչպես ուրիշներին, այնպես էլ ձեզ, անվարան կերպով ընթանալու թեև դժվարին, բայց միշտ դեպի բարձունք տանող ճանապարհով: Կյանքի արտաքին շքեղությունները, փառքը, պատիվը և ինչքի հրապույրները ստատանք են, որոնց հրապուրանքին հանձնվողը սանդարամեան անդունդները կընկնի հավետ կորչելու ճակատագրով: Դուք, ընդհակառակն, ծառայության միջոցով զարգացրեցեք ձեր կոչման գիտակցությունը, սուտվածգիտության լույսով զարգացրեցեք՝ օգտակար լինելու համար մեր ստատված, բայց հավետ բաց ժողովրդին և Եկեղեցուն:

Սիրելի հավատացյալներ, իմ աղոթքներին դո՛ք ձեր մաղթանքները ևս միացրեք, որպեսզի Սուրբ Հոգու շնորհը իջնի մեր նորապսակ սարկավագ եղբայրների վրա և պայծառակերպի նրանց հոգիները: Եկեղեցին մեկ ամբողջություն է՝ ժողովուրդ և սպասավոր, դուք և մենք: Մենք միջոցն ենք՝ հավատքով ծառայությունը, և դուք՝ կամքն ու ոգեորը հոգևորապես սնվելու պատակով: Այս երկուսի միությունից է կազմվում Եկեղեցին իր ճշմարիտ բարոյական վեհ ուժով:

Թող Սուրբ Ստեփանոսի հավատքի ջերմությունը փոխանցվի մեր երիտասարդ հին ու նոր սարկավագներին, ինչպես նաև մեզ բոլորիս, որպեսզի այդ հավատքով կարողանանք վինմել չարի դեմ և հաղթական դուրս գան կյանքի մարտից: Եվ հանապազ ոգեկոչենք Ս. Ստեփանոսին նվիրված Ս. Ներսես Շնորհալու հետևյալ խոսքերը.

Ստեփանոս բազդրիկ տատրակ
Սուրբ զուարթուն անուն պսակ.
Գեղեցկացար անօրինակ
Բայց ներկեցար, արեան գունակ.
Տեառն Յիսուսի քաջ նահատակ,
Այգոյ նորին, մարդ, մանուշակ,
Թէպէտ մարմնով, սակայն հրեշտակ,
Ի Քրիստոսէ, ասեր պսակ: Ամեն:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, կիրակի.—Նոր տարվա առաջին օրը Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը:

Հավարտ ս. պատարագի տեր հայրը քարոզում է «Զքէն գոհանամք, Տէ՛ր Աստուած մեր, որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութեամբ, և զարթուցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել յերկրպագութիւն սահաւոր և փառատրեալ անուանդ քում սրբոյ» (Ժամագիրք) բնաբանով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հայրապետական մաղթանքի հանդիսավոր արարողություն:

*
* *

Նույն օրը, ժամը 14-ին, Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը առաջնորդվում են Վեհարան՝ շնորհավորելու Նորին Սրբությանը Ամանորի առթիվ և ստանալու նրա հայրական օրհնությունը:

Հայոց Հայրապետը Նոր տարվա առթիվ շնորհավորանքի ջերմ խոսքեր է ուղղում բոլորին և մաղթում, որ այս տարին ևս Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար լինի խաղաղության և բարի արդյունքներով լի մի տարի, որպեսզի հաջողությամբ իրականանան Հայ Եկեղեցու և ազգի բոլոր ազնիվ երազանքները:

*
* *

Հունվարի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր Երուսաղեմից ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Տ. Շահե արքեպ. Աճեմյանը:

*
* *

Հունվարի 7-ին, շաբաթ.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Հունվարի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն վրդ. Նա-

շարքանը և «Հայր մեր»-ից առաջ հավատ պատշաճի քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը. Վեհարանում, Վեհափառ Հայրապետին է այցելում Ֆուտբոլի միջազգային Ֆեդերացիայի պրեզիդենտ Ժան Ամկանժը իր տիկնոջ՝ Աննա-Մարիա Ամկանժի հետ:

Վեհափառ Հայրապետի և պրն. պրեզիդենտի միջև տեղի է ունենում շերմ զրույց:

*
* *

Հունվարի 10-ին. երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում վերսկսվում են 1983—1984 թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացները:

*
* *

Հունվարի 11-ին. չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում 1984 թ. առաջին միաբանական հավաքույթը:

Հավաքույթի ընթացքում Տ. Շահե արքեպ. Աճեմյանը ներկաների ուշադրությանն է հանձնում ԵՀԽ-ի կողմից սշակված ծրագիրը «Մկրտություն», «Հաղորդություն» և «Զեղեցկություն» խորհուրդների մասին:

Այնուհետև սրբազան հայրը խոսում է Հայ Եկեղեցու մկրտության խորհրդի ուսումնաբանական մեկնության շուրջ:

*
* *

Հունվարի 13-ին, ուրբաթ.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը:

*
* *

Հունվարի 14-ին, շաբաթ.—Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին:

Այսօր Մայր տաճարում, Ս. Հովհաննես Մկրտչի խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը:

*
* *

Հունվարի 15-ին. կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Թորգոմ աբեղա Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ ոչ ոք ծնցի ի շրոյ և ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Հովհ. Գ 5) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 18-ին. չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Տ. Շահե արքեպ. Աճեմյանը հրաժեշտ է տալիս Վեհափառ Հայրապետին և մեկնում Երուսաղեմ:

*
* *

Նույն օրը. երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում «Փորձի կամ չարի հետ առնչվող մի քանի հարցեր» ասուլածաբանական նյութի շուրջ զեկուցումով հանդես է գալիս Տ. Հակոբ վրդ. Գլըլնճյանը:

*
* *

Հունվարի 22-ին. կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատաթյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Տ. Հակոբ վրդ. Գլըլնճյանը «Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա» (Հովհ. Բ 19) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 23-ին. երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, ներկայությամբ Մայր Աթոռի միաբանների, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության, տեղի է ունենում դասախոսություն «Պետրոս Նախիջևանցին և նրա հոգևոր բանաստեղծությունը» թեմայի շուրջ: Բանախոսությամբ հանդես է գալիս Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Շուշանիկ Նազարյանը:

*
* *

Հունվարի 25-ին. չորեքշաբթի.—Այսօր հո-

գլոր ճեմարանի սաները. գլխավորությամբ ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանի և երաժշտության դասախոս Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի, այցելում են Երևանի Կոմիտասի անվան կբոսայգի և թարմ մեխակներ կետեղում Կոմիտաս վարդապետի և Արամ Խաչատրյանի շիրիմներին:

Այնուհետև նրանք այցելում են Ալ. Սպենդիարյանի անվան տուն-թանգարան:

* * *

Նույն օրը Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը խոսում է ԵԽՀ-ի Վանկուվերյան 6-րդ Ասամբլեայից հետո պատգամավորների կողմից առաջարկված նոր կարևոր հարցերի մասին:

* * *

Հունվարի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հայր մեր... եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո...» (Մտթ. Զ 10) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ԽԱՉԲԱՐ ԺԴ ԴԱՐԻ ԲԵՐՎԱԾ Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔԻՑ ԵՎ ՁԵՏԵԼՎԱԾ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՐՋԱՊԱԿՈՒՄ



ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ս. Ծնունդան տոնակատարությունների առթիվ սույն թվականի հունվարի 4-ին Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպիսկոպոսի հրավերով Բաքու ժամանեց Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Մասիս վարդապետ Գալստյանը:

Հունվարի 5-ին, երեկոյան ժամը 17-ին, Ճրագաւոյցի ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա եպիսկոպոսը:

«Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը ողջունչ մի քարոզ է խոսում՝ վեր հանելով Ս. Ծնունդան տոնի նշանակությունը, ապա հայ հավատացյալներին ներկայացնում հոգեշնորհ Տ. Մասիս վարդապետին:

Հունվարի 6-ին, Ս. Ծնունդան տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Մասիս վարդապետը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը խոսում է բովանդակալից մի քարոզ՝ վեր հանելով Ս. Ծնունդան տոնի հոգևոր նշանակությունը: Վերջում հայր սուրբը եկեղեցում հավաքված հավատացյալներին փոխանցում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Հունվարի 8-ին Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում վերստին ս. պատարագ է մատուցում Տ. Մասիս վարդապետը: Ջրօրհնեքի արարողությունից հետո պատարագիչ հայր սուրբը հոգևոր դպրության աստիճաններ է շնորհում Արմեն Գաբրիելյանին և Աշոտ Պողոսյանին:

Նույն օրը, երեկոյան, Ադրբեջանի հայոց թեմի թեմական խորհուրդը ճաշկերույթ է տալիս ի պատիվ Տ. Մասիս վարդապետի:

Հունվարի 9-ին հոգեշնորհ հայր սուրբը լավագույն տպավորություններով վերադառնում է Մայր Աթոռ:





ՆԵՐՍԵՍ ԿԱՏԱՐ

ԷՋՄԻԱԾԻՆ

(Շինության 1680-ամյակին առթիվ)

ԷՋՄԻԱԾԻՆ, տեղի իջման,
Միածինին աստվածարժան.
Տեսիլքին մեջ մեր մեծ Սուրբին՝
Հայրապետին մեր առաջին:

Քրիստոնյա ոչ մեկ խորան,
Եկեղեցի և կամ տաճար՝
Ունի անունն այս եկական
Կոչումն այս սուրբ ու սրբարար:

Այս շնորհը մերն է միայն,
Մեծ շնորհն այս անկուգական,
Որ խորհուրդ մ'է անհաս, խորին,
Անճառապես աստվածային:

Էջմիածին, մեր Մայր տաճար,
Վերք ու վիշտին մեր՝ մխիթար,
Պատսպարան, պաշտպան հզոր,
Ձախորդությանց մեջ մեր բոլոր:

Ակնարկ աղու, ժպիտ շաղոտ,
Կաթոգին կանչ, խոսք խոհական,
Ձեռք ցավաբույժ, գիրկ գուրգուրոտ՝
Մեր փորձությանց մեջ այլական:

Արժեքներուն մեր հոգեկան,
Մշակույթի մեր գանձերուն
Դուն սնուցիչ ու պահապան՝
Ամենախնամ Մայր սրնավուն:

Քեզ Հիսուս է ծներ, սներ,
Պահեր, պաշտեր են քեզ հայեր,
Դուն ալ, կարգիդ, ու տիրաբար
Անոնց պարիսպ ու բերդ եղար:

Եղար Աթոռ, ու մերթ ալ՝ Գահ.
Հոտիդ համար, հոտիդ ի շահ.
Խաչին հետ՝ սուրն ալ՝ ի հարկին,
Պակաս չեղավ քու Սուրբ Աջին:

Կյանքդ դարով մենք կհաշվենք.
Թող ժամանակն ըլլա անհետ,
Քեզ հավերժին կմղենք մենք,
Որ հավերժին դիմենք քեզ հետ...:

Նիկոսիա, 1983



ՀԱՅՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵԼԵՂՃՅԱՆ

ՓՈՐՁԻՉԻ ԿԱՄ ՉԱՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ*

Ծննդոց գրքում շարադրված դրախտապատմությունից տեղեկանում ենք, որ նախամարդը դեռ գնաց մի փորձության և ընկավ իրեն հատկացված վայելքներից: Փորձիչի դերը առանձնեց օձը: Թե ո՞վ կար թաքնված օձի ետևում, կամ ո՞վ մղեց նրան՝ Աստծուց այդ ստեղծվածին, գործելու այդ չարիքը, մնում է խորհրդավոր:

Այս հարցի շուրջ խոսելու համար չպետք է բավարարվել միայն Ծննդոց գրքով և, ինչո՞ւ չէ, նաև Հին Կտակարանի մյուս գրքերով: Հարկավոր է ամբողջ Աստվածաշնչի միջից, ուշադիր քննությամբ, փորձել մի գոհացուցիչ պատասխան գտնել:

Մեր կատարած պրպտումների ընթացքում մի բան հատակ է դառնում մեզ, որ Աստծու ամբողջ ստեղծագործությունը **բարի** է (Ծնող. Ա 31), որովհետև Աստված ինքը բարի է, նրա պատգամները ուղիղ են, նրա ողորմությամբ է լցվել ամբողջ երկիրը (Սղմս. ԼԲ 3, 5): Մյուս կողմից, սակայն, հանդիպում ենք բարուն հակառակվող մի **չար** իրականության, որ ստեղծվածներին շեղում է իրենց իսկական նպատակից և փորձության ենթարկելով նրանց՝ հաճախ կործանում: Այդ իրականությունը իր բոլոր ատորոգելիներով մարմնավորված է սատանայի կերպարանքում:

Այսպիսով, ուրեմն, **սատանան** դասնում է մեր ուսումնասիրության առարկան:

Նախնական բավարար կրոններում և կրոնական առասպելներում առկա է բարու կողքին չար ուժը: Մազդեական կրոնում, օրինակ, Ահուրա Մազդայի մրցակիցն է Անգրա Մանեուն (Ահրիմանը): Նմանապես բուդդայական կրոնի տարատեսակների, իսլամի, ինչպես նաև տարբեր աղանդների մեջ, մանիքեականների, եզիդիների և այլն, հանդիպում ենք չարին կամ այն մարմնավորող սատանային և դևերին:

Վերոհիշյալ կրոնները կամ աղանդները չարի մասին այլ ըմբռնում ունեն, քան քրիստոնյաները: Հատկապես մազդեականները ու մանիքեականները բարու կողքին ընդունում են մի չար աստվածություն: Նրանց ըմբռնումները դուալիստական են, թեև չարը միշտ չէ, որ հավասարակշիռ է լինում բարուն:

Չարի առկայությունը կյանքում սկզբից ի վեր պրպտեցրել է մարդկանց միտքը, և մարդիկ տեսակ փորձել են գոհացուցիչ մի պատասխան տալ նրա էության և ծագման մասին: Այսօր էլ դեռ, երբ, շնորհիվ աստվածաբանության, ձերբազատվել ենք առասպելներից, և քրիստոնեական Եկեղեցին դեռևս ամուր պահում է աստվածային ավանդը, գտնվում են տարբեր գաղափարների ու մտածելակերպերի տեր մարդիկ, որոնք կա՛մ մերժում են չարի գոյությունը, կա՛մ էլ այն վերագրում Աստծուն: Այս երկու տեսակետներն էլ խորթ են Եկեղեցու համար: Սրանց

* Սույն հոդվածը շարունակությունն է «Էջմիածին» ամսագրի 1982 թ. Ժ համարում հրատարակված «Աստվածային ժառանգական մեղքը» հոդվածի:

հավասար խորթ է նաև մարդկությունը չարի պատասխանատվությունից կերծ համարելը:

Նույն տեսակետներ, որ ընդհանրապես արտահայտում են ավետարանական դավանության պատկանող աստվածաբաններ, դըժբախտաբար սկսել են արձագանք գտնել նաև կաթողիկե հատվածի մեջ: Նրանցից է, օրինակ, Հերբերտ Հաագը[1], որի «Հրաժեշտ Սատանայից» գրքի հրատարակիչն է Կաթողիկե Եկեղեցու աստվածաբան պրոֆ. Հանս Կյունգը: Հիշյալ գրքում մատնանշվում է, թե **մեղքը** նույն ինքը **սատանան** է, և այնտեղ, որտեղ այդ բառին կամ **չար** և **դև** բառերին ենք հանդիպում, կարող ենք դրանք նաև **մեղք** թարգմանել: Մեկ խոսքով՝ սատանան պատկերավոր արտահայտությունն է մեղքի: Նույն գրքում, ի շարս այլոց, կարդում ենք նաև. «Որ Աստված ինքն է սատանային ստեղծել, այդ ոչ միայն աներևակայելի է, այլև՝ անհնար: Հրեշտակի գործած մեղքի կամ նրա անկման վերաբերյալ ուսմունքը հենվում է մի առասպելի վրա: Վերջապես, երբ հաճախ պնդում են, թե մարդկային մեղքը անպայման մի փորձիչի պետք է վերագրել, ուրեմն, նույնպես հրեշտակի մեղանչումն էլ պետք է վերագրել մի փորձիչի, և այսպիսով ոչ մի վախճանի չենք հասնի: Մեղքը մի խորհուրդ է և մնում է այդպիսին. և որպես այդպիսին, այն միևնույնն է՝ սատանայով էլ, առանց նրան էլ»[2]:

Վերոհիշյալ տեսակետի մեկ մասը միայն կարելի է ընդունելի համարել, այն, որ Աստված չի ստեղծել սատանային որպես չար ուժի, և այն, որ մեղքը մի խորհուրդ է: Սակայն երբ ընդունում ենք, որ երկնային զորությունները ու մարդիկ ազատ կամքով են ստեղծվել, ուրեմն մարդը, առավել ևս անմարմին ստեղծվածները, այդ կամքի ազատությունը կարող են չարաշահել և հեռանալ Աստծուց, բարու հակառակը գործել: Ավելին՝ նրանք ի վիճակի են իրենց չարացած նկարագրի ազդեցությունը բանեցնել: Հրեշտակները ու մարդիկ, երբ իրենց ազատ կամքը չարաշահում են և բարու հակառակն են գործում, նշանակում է նրանք անձնատուր են լինում նրան, ով առաջին անգամ ինքն իր ազատ կամքով փորձեց բարուն հակառակվել և ուրիշներին էլ մարակել: Ըստ ռուս փիլիսոփա Վլադիմիր Սոլովիևի (1853—1900), մարդը սկզբում ներդաշնակության մեջ էր բոլոր արարածների հետ և միացած Աստծուն, որը կյանք է և համակ սեր: Սերը, սակայն, չի բռնանում, դրա համար էլ մարդու և Աստծու սկզբնական միությունը իր մեջ պարփակում էր ազատությունը: Ազատությունը նրանում էր կայանում, որ մարդը իր ներդաշնակ վիճակից և Աստծու հետ ունեցած միությունից կարող էր դուրս գալ: Այսպիսով, մարդ փոխանակ Աստծու մեջ լինելու, ինքն իր մեջ է լինում: Սատանան իշխանն է «ԻՆՔՆ ԻՐ ՄԵՋ ԼԻՆԵԼՈՒՆ». ով մնում է ԻՆՔՆ ԻՐ ՄԵՋ, չի կարող ԱՍՏԾՈՒ ՄԵՋ լինել և, այդպիսով, նպաստում է չարի հակաստվածային ուժերին:

Այսուհանդերձ, ըստ Սոլովիևի, չարը Աստծու ստեղծագործության մեջ հավետ ներգործող մի սկզբունք չէ: Նա, ով ցանկանալու կարողություն ունի, ի վիճակի է բարու փոխարեն չարը ցանկալ և այդպիսով, սկզբունքով, չար դառնալ ու իր պատասխանատվությամբ ընկնել «ԻՆՔՆ ԻՐ ՄԵՋ ԼԻՆԵԼՈՒ», այսինքն ինքնիշխան լինելու անդնդի մեջ և խորտակվել: Հենց այս ձևով պետք է բացատրել սատանայի անկումը, որն իր կամքով վերջնականապես բարուց երես դարձրեց: Դրա համար էլ նրան փրկություն չկա: Մարդը, սակայն, որ սատանայի խաբեության հետևանքով անկում կրեց, իր քայլերը դեպի Քրիստոս ուղղելով և դուրս գալով իր եսականությունից՝ կարող է վերստին Աստծու հետ լինել[3]:

Հին Կտակարանում աղոտ կերպով, իսկ Նոր Կտակարանում հստակորեն խոսվում է ինչպես հրեշտակների, այնպես էլ սատանայի և դևերի մասին: Հիսուս Քրիստոսի վկայություններն էլ կան այս մասին: Անջուշտ պետք չէ ծայրահեղության մեջ ընկնել՝ ասելով, որ կա՛մ պետք է ընդունենք ամբողջովին Ս. Գրքի հաղորդածը սատանայի մասին, կա՛մ էլ պետք է ժխտենք Ս. Գիրքը: Ո՛չ, սատանային ընդունելը կախում չունի Աստծուն ընդունելու հետ. առաջինի գոյությունը ընդունում ենք, մինչ երկրորդին հավատում ենք: Մեր մտքում Ս. Գրքից ինչ-ինչ հատվածներ կարող են շփոթ առաջացնել: Կրոնական լայնախոհությունը ոչ թե դատապարտում և լռության է մատնում այլ կերպ մտածողներին, այլ փորձում է Ս. Հոգու առաջնորդությամբ վերստին ու վերստին պարզաբանելով՝ հիմնավորել իր տեսակետները:

Այժմ վերադառնանք մեկ կբաղեցնող հարցին: Չարի մարմնացումը համարվող **սատանա** բառը գալիս է եբրայեցերեն **շատան** բառից, որ նշանակում է հակառակորդ. հունարեն թարգմանվել է նույն իմաստով՝ διάβολος — դիաբոլոս: Այս բառն ունի նաև իրավաբանական իմաստ և մատնանշում է դա-

[1] **Herbert Haag**, Abschied vom Teufel.

[2] Անդ, էջ 51—52:

[3] Վ. Սոլովիևի այս տեսությունները քաղված են Fritz Hubner, Wladimir Solowjew գրքից:

տարանում հանճառողի կամ սատանայի անձը. օրինակ՝ ՃԸ Սաղմոսի 6-րդ հատորում «սատանան նրա աջ կողմը կանգնեցու է» նախադասությունը նշանակ ունի ոչ թե չարը, այլ՝ դատարանում հակառող անձը, որովհետև հարակից համարներից հայտնի է դառնում, որ խնդիրը դատարանական պատկերի հետ է առնչվում:

Հրեշտակների կողքին սատանան առաջին անգամ Հին Կտակարանում հիշվում է Հոբի գրքում (Ա 6—12, Բ 1—7), որտեղից պարզվում է, որ նա դեմ է մարդկանց աստվածապաշտությանը, և նրա գործունեությունը կախված է Աստծուց: Նույնպես և Իմաստության Գրքում, թեև այնտեղ ակնարկություն չկա սատանայի ծագման մասին, սակայն մատնանշվում է Ծննդոցի Գ 1—3 համարներում հանդես եկող, օձի կերպարանք ստացած փորձիչի հանգամանքը. «Աստված ստեղծեց մարդուն և իր բարերար պատկերի համաձայն ստեղծեց նրան: Սատանայի[4] նախանձի հետևանքով մահն աշխարհ եկավ»[5]: Այստեղ հեղինակը մահ ասելով հասկանում է մեղաց մահը, որ կատարվեց սատանայի խաբեբայությամբ, որովհետև, ըստ հեղինակի, արդարները մահ չեն հաշվում, նրանց ոգիները «Աստծու ձեռքում են, մահը նրանց չի մոտենում: Անզգամների աչքին թվում է, թե նրանք մեռան, ... բայց նրանք խաղաղության մեջ են: Թեպետև հաչս մարդկանց նրանք տանջվեցին, բայց նրանց հույսը լի է անմահությամբ, ...որովհետև Աստված փորձեց նրանց և իր համար արժանի գտավ»[6]:

Նոր Կտակարանում, սակայն, միանգամայն նոր դառնում սատանայի պատկերը մեր առաջ: Քրիստոս հետևյալն է վկայում նրա մասին. «Նա ի սկզբանե մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, որովհետև նրա մեջ ճշմարտություն չկար»[7]: Միաժամանակ նա իշխանն է այս աշխարհի (հմմտ. Հովհ. ԺԲ 31, ԺԴ 30, ԺԶ 11): Պողոս առաքյալը նրան անվանում է «այս աշխարհի աստվածը»[8]: Սատանայի անկյալ հրեշտակ լինելու մասին Պետրոս առաքյալը հետևյալն է վկայում. «Քանզի Աստված չխնայեց մեղանչած հրեշտակներին, այլ խավարի մեջ կապանքներով նրանց գցեց տարտարոսը»[9]: Իսկ Հուդա առաքյալը գրում է. «Եվ այն հրեշտակներին, որ չպահեցին իրենց իշխանությունը, այլ թողեցին իրենց բնակության տեղը, հավիտենական կապանքներով խավարի մեջ պահեց մեծ օրվա դատաստանի համար»[10]: Սատանան ստանվում է նաև **թշնամի** (Մտթ. ԺԳ 39, Ղուկա. Ժ 19) և **չար** (Մտթ. ԺԳ 19, 30, Զ 13. Հովհ. ԺԷ 15. Եփես. Զ 16. Ա Հովհ. Բ 13, Ե 18):

Այս բոլոր վկայությունները մեջբերվել են ոչ թե մարդկանց սարսափի մեջ պահելու, այլ պարզապես նրանց զգաստության հրավիրելու համար, որովհետև չարը որոշ դեր է կատարում աշխարհում և հատկապես ներգործում է անհավատության զավակների վրա (Իմաստ. Բ 24. Հովհ. Ը 44. Եփես. Բ 1—12, Զ 12. Ա Հովհ. Գ 8): Նրա դեմ սակայն պետք է պայքարել: Այս առթիվ Պողոս առաքյալն ասում է. «Սատանային տեղի մի՛ տվնք»[11]: Իսկ պայքարելու համար պետք է «զգեստավորվել ճշմարտությամբ և արդարության զրահներ հագնել, քայլերը պատրաստ՝ խաղաղության Ավետարանին, ձեռքում համատքի վահանը, որով կարելի պիտի լինի հանգցնել չարի բոլոր միացող նետերը. փրկության սաղավարտը և Հոգու սուրը, որ Աստծու խոսքն է, պետք է պատրաստ ունենալ»[12]:

Քանի որ առաջին Ադամը՝ նախամարդը, փորձվեց չարից և պարտվեց նրանից, որովհետև պետք է, որ երկրորդ Ադամն էլ, այսինքն՝ Քրիստոս, նրանից փորձվեր: Այս փորձությունը մեկն է Փրկչի երկրավոր կյանքի սրտառուչ դրվագներից. նա, որպես մարդացած Աստված, չէր կարող խուսափել մարդկանց պատահող փորձությունից, սակայն նա հաղթեց փորձությանը՝ ցույց տալու համար, որ մարդո՛ւց կախում ունի չարի հաղթանակը: Դրա համար էլ Հիսուս մեղքի գլխավոր պատասխանատուն մարդո՛ւն նկատեց. «Քանի որ սրտից է, որ ելնում են չար խորհուրդները, սպանությունները, շնությունները, պոռնկությունները, գողությունները, սուտ վկայությունները, հայհոյանքները»[13]: Քրիստոսի օրինակով, որովհետև, դատապարտվեց սատանան ու դուրս նետվեց, այսինքն՝ նախաձվեց, և Տերը, երկրից բարձրանալիս, խոստացավ դեպի իրեն քաշել ամենքին[14]:

Այստեղ ցանկանում եմ մի օրինակ բերել ռուս մեծ գրող Ֆ. Դոստոևսկուց: Երբ կարդում ենք նրա «Դևեր» անուն վեպը, տեսնում ենք, թե որքան ահարկու և այլասան են մեղ-

[4] ՍԱՏԱՆԱ բառի փոխարեն գրաբարն ունի ԲԱՆՍԱՐԿՈՒ:

[5] Իմաստ. Բ 23—24:

[6] Իմաստ. Գ 1—5:

[7] Հովհ. Ը 44:

[8] Բ Կորնթ. Դ 3—4:

[9] Բ Պետր. Բ 4:

[10] Հուդա 6:

[11] Եփես. Դ 27:

[12] Հմմտ. Եփես. Զ 15—17:

[13] Մտթ. ԺԵ 19:

[14] Հմմտ. Հովհ. ԺԲ 31—32:

քի տեսակները: Դրանք թեև ինչ-որ դիվային արմատավորում ունեն, սակայն մարդ կարող է նաև դիմադրել դրանց: Նիկոլայ Ստավրոգինը, սակայն, հագուրդ է տալիս իր նողկալի կրքերին՝ իրեն համար էլ անմեկնելի թվացող ինչ-որ երևույթից դրդված, բայց, այսուհանդերձ, նա սառնասրտությամբ կատարած իր խոստովանության մեջ հետևյալն է ասում. «Համոզված եմ, որ ես կարող էի ամբողջ կյանքս մի վանականի նման անցկացնել, հակառակ ինձ հետ ծնված այն անասնական ցոփությանը, որ ես ինքս եմ հրահրում: Եթե ես կամենամ, կարող եմ ուղածս բոպեին ցսպել ինձ: Այսպիսով՝ պարզ է, որ ես պիտի չկամենայի իմ հանցանքների պատասխանատվությունը միջավայրի կամ ինչ-որ մի հիվանդության վրա բեռցնել»[15]:

Ի դեպ, ուշ եբրայական գրականության մեջ էլ հանդիպում ենք հրեշտակների ըմբոստության և անկման վերաբերյալ դրվագների, որոնցից հատկանշական է **Գիրք Ենովքա** կոչվածը, որը գրված է շուրջ 170 թ. Ն. Ք. և հավանաբար օգտագործված Քումրանի Եսսենական համայնքում: Այս գիրքը, ինչպես և **Համբարձումն Մովսեսի** կոչվածը, ծանոթ է եղել քրիստոնյաներին: Հուդա առաքյալը իր թղթում նույնիսկ մեջբերում է կատարել այս գրքից, որի 7-րդ և 14-րդ համարները համապատասխանում են Ենովք. Զ 7 և Ա 9 համարներին, իսկ Հուդայի 9-րդ համարը վերագրվում է **Համբարձումն Մովսեսի** գրքին, որից միայն պատառիկներ են մնացել:

Ենովքի գրքում մեղանչող հրեշտակների գլխավորը կոչվում է Սեմեապա կամ Ապպել: Ա Ենովքի Ժ գլխում (4—8) կարդում ենք.

«Եվ Աստված ասաց Ռաֆայելին.
«Կապի՛ր Ապպելի ձեռքերն ու ոտքերը
և շպրտի՛ր նրան խավարում.
Դուդաելի անապատում բա՛ց արա մի գուբ
ու նրան այնտեղ գցիր»:
Ամբողջ աշխարհը ապականվել էր
Ապպելի սովորեցրած գործերով:
Բոլոր մեղքերը նրանից էին»:

Ինչո՞ւ սակայն այս պատիժը: Ա Ենովք ԺԵ գլխում հանդիպում ենք մի պատմության, որի նախօրինակը կարելի է գտնել Ծննդոցի Զ գլխում և որի համաձայն՝ Աստծու որդիները իրենց համար կնության են առնում մարդկանց գեղեցիկ աղջիկներին և նրանցից հրեշներ ծնում: Սույն պատումը թեև դիցաբանական ծագում ունի, սակայն Ենովքի գրքում հատկանշական դեր է կատարում՝ ցույց տալու համար հրեշտակների անկման պատճառը.

«Ինչո՞ւ թողեցիք բարձր, սուրբ և
հավիտենական երկինքը
ու պառկեցիք կանանց հետ,
արատավորեցիք ձեզ մարդկանց դուստրերի
հետ,
ձեզ համար կնության առաք կանանց
ու մարդկանց կավակների նման վարվեցիք
և հսկայական կավակների ծնունդ տվեցիք:

Դուք սուրբ էիք, ոգեղեն և անմահ,
այսուհանդերձ կանանց արյամբ
արատավորեցիք ձեզ
և արյունով մսրմնավոր որդիներ ծնեցիք.
ձգտելով մարդկանց արյան՝
մարմին և արյուն գոյացրիք,
ինչպես նրանք, ովքեր մահկանացու են:

Բայց այն հսկաները, որ ոգեղեններից ու
մարմնից ծնվեցին,
երկրի վրա չար ոգիներ պիտի կոչվեն
և երկրի վրա էլ բնակություն պիտի
հաստատեն»:

Վերոհիշյալ և նմանօրինակ պատումները, սակայն, որևէ ազդեցություն չեն ունեցել քրիստոնեական մտածելակերպի վրա, որի համաձայն՝ հրեշտակային կոչվող կամ պատմականորեն մարդկային առաջին մեղքը ոչ թե մարմնական ցանկության մեջ է կայանում, այլ՝ գոռոզության, որովհետև «Մեղքի սկիզբը ամբարտավանությունն է»[16], որի հետևանքով կորստյան որդին, հակառակորդը «գոռոզամտում է այն ամենի վրա, որ կոչվում է Աստված կամ պաշտամունքի առարկա, մինչև այն աստիճան, որ նա նստի Աստծու տաճարում և ինքն իրեն ցույց տա, թե Աստված է»[17]: Ոգեղենների կենակցելն էլ մարդկանց դուստրերի հետ բացարձակապես անընդունելի է: Այս մասին մեր մատենագիր Եղիշեն գրում է.

«Հարց.—Բոլոր դևերի բնությունը նո՞ւյնն է, թե՞ ոմանք անմարմին են և ոմանք էլ մի նուրբ մարմին ունեն:

Պատասխան.—Բոլորն էլ հավասարապես անմարմին են:

Հարց.—Սակայն ինչպե՞ս են նրանցից ոմանք ուտում և խմում, կանանց հետ կենակցում, երգեր և մեղեդիներ ասում: Շատերը լսել են նրանց ձայնը, մարդիկ նրանց քաջ են անվանում:

Պատասխան.—Այն, որ բոլոր դևերը անմարմին են, հայտնի է. իսկ եթե նրանք երե-

[15] F. M. Dostojewski, Die Dämonen, էջ 479.

[16] Սիր. Ժ 15:

[17] Բ Թեսղ. Բ 4—5:

վում են, այդ չի նշանակում, որ պետք է նրանց անպարտան մարմնավոր համարել, որովհետև թեև հրեշտակներն էլ մարմնեղեն կերպարանքով հայտնվեցին, սակայն նրանք էլ անմարմին են: Դևերն էլ այսպես առ աչք են երևում, սակայն նրանք մարմին, ոսկորներ չունեն: Այս մասին Քրիստոս ինքը վկայեց, երբ վերնատուն մտնելիս՝ աշակերտները կարծեցին, թե նրա փոխարեն ինչ-որ ոգի են տեսնում[18]: Երբ դևերը աչքով տեսանելի են դառնում, որևէն ամեն բան առերևույթ են կատարում և ոչ թե իրականում, որովհետև նրանք ո՛չ ուտում են, ո՛չ էլ խմում, և հնարավոր չէ կանանց հետ նրանց ամուսնանալը ու նրանցից զավակ ունենալը, քանի որ նա, ով անմարմին է, նաև անսերմ է: Սերմը մարմնավորներին հատուկ է և ոչ թե անմարմիններին, որոնց համար ո՛չ ծնունդ գոյություն ունի և ո՛չ էլ մահ, որովհետև արարիչն Աստված անմահություն շնորհեց հրեշտակներին, դևերին և մարդկանց ոգիներին, ինչպես նաև հարությունից հետո էլ՝ հոգիներին և մարմիններին: Դևերը ո՛չ աճում ունեն և ո՛չ էլ նվազում, միայն մարմնավորները ծերնդով աճում են և մահով՝ պակասում: Հրեշտակներից և դևերից բացի, էլ ուրիշ արարածներ գոյություն չունեն, որ տարբերաբերբ կերպարանքներ են ստանում, ինչպես ասվում է վիշապների կամ պայերի մասին»[19]:

* * *

Հին Կտակարանում Բ Թագավորաց ԻԴ և Ի Մնացորդաց ԻԱ գլուխներում պատմվում է Դավիթ թագավորի կատարած մարդահամարի մասին, որը Իսրայելում մեղք էր համարվում, որովհետև այն հակառակ էր Իսրայելը բազմացնելու աստվածային օրհնությանն ու խոստմանը: Դրա համար էլ Աստված տալիս է նրա պատիժը: Երկու միևնույն պատմությունների մեջ, սակայն, հանդիպում ենք հետևյալ հատկանշական պարագային. Բ Թագավորաց ԻԴ 1-ին համարն ունի «և Աստծու բարկությունը նորից բորբոքվեց Իսրայելի վրա, և նա գրգռեց Դավթին նրանց դեմ ու ասաց՝ գնա հաշվի՛ր Իսրայելն ու Հուդան»: Ի Մնացորդաց ԻԱ 1-ին համարում **Աստված** բառը փոխարինվել է **սատանա** բառով, որ գրաբար տեքստում **բանսարկու** է թարգմանվել. «Եվ բանսարկուն հանդես եկավ Իսրայելի դեմ ու դրդեց Դավթին հաշվելու Իսրայելը»: Մեր կարծիքով Մնացորդացի հեղինակը դիտավորյալ կերպով Աստված բառը սատանայով է փոխարինել, որպեսզի մարդը Աստծուն չարի պատճառ չնկատի: Սկզբնական ճիշտ ձևը պետք է Բ Թագավորացի հեղինակի օգտագործածը համարել, որովհետև այն հանապատասխանում է ժամանակակից հրեաների ըմբռնմանը, որոնք Աստծու կողքին ոչ մի այլ ուժի գոյությունը չէին ընդունում և հատուկ կերպով դիմադրում էին, որպեսզի Պաղեստինում պարսկական տիրապետության ժամանակ (538—331 մ.թ.ա.) ոչ մի իրանական կրոնական ըմբռնում, որ դուալիստական էր, չթափանցեց իրենց մեջ: Այդ չի նշանակում, սակայն, որ չարի հեղինակը Աստված է: Նման արտահայտությունների հանդիպում ենք նաև Ս. Գրքի զանազան մասերում: Օրինակ՝ Եսայի ԽԵ 7-րդ համարում կարդում ենք. «Ես տարածեցի լույսը և ստեղծեցի խավարը, ես խաղաղություն եմ անում և բերում չարիք»: Մեկ ուրիշ տեղ՝ «Տիրոջից չարիք իջավ Երուսաղեմի դարպասների վրա»[20], կամ՝ «Քաղաքում գոյություն ունի՞ մի չարիք, որ Տիրոջ կողմից եղած չլինի»[21], կամ՝ «Տեսե՛ք, տեսե՛ք, որ ես եմ, և ինձանից բացի ուրիշ Աստված չկա. ես եմ սպանում, ես եմ ապրեցնում, ես եմ հարվածում, ես եմ բժշկում»[22]:

Վերոհիշյալ խոսքերը գեղեցիկ կերպով մեկնաբանում է Բարսեղ Կեսարացի հայրապետը. «Նա, որ ասում է՝ ես տարածեցի լույսը և ստեղծեցի խավարը, իրեն ճանաչել է տալիս որպես ստեղծագործության վարպետի և ոչ թե պատճառ ինչ-որ վատ բանի: Ո՛չ, որպեսզի դու չհավատաս, թե մեկ ուրիշն է արարիչը լույսի և մեկ ուրիշը՝ խավարի: Աստված ինքն իրեն արարիչ և վարպետ է ցույց տալիս բնության մեջ նույնիսկ իրար հակառակ թվացող երևույթների: Այսպիսով, դու չպետք է փնտրես տարբեր ստեղծիչ օդի և տարբեր ստեղծիչ հողի՝ նկատի ունենալով եիշյալ այլական տարրերի իրար հակառակ հատկությունները: Արդարև, շատերն այսպես անելով՝ ընկան բազմաստվածության մեջ: «Աստված խաղաղություն է տալիս և չարիք է բերում», հատկապես այն ժամանակ է տալիս քեզ խաղաղություն, երբ իր բարի ուսուցումների շնորհիվ խաղաղեցնում է քո ներաշխարհը և հանդարտեցնում քո հոգու դեմ գրոհող կրքերը: «Նա սակայն չարիք է բերում», սա նշանակում է, որ նա վերափոխում է կրքերը և դրանք ուղղում դեպի բարին, այնպես որ դրանք այլևս չար չեն և բարու բնությունն են ընդունում: «Ո՛վ Աստված,

[18] Տես. ԻԴ, 36—39:

[19] Եղիշէ վարդապետի հարցմունք և պատասխանիք ի գիրս Ծննդոց, Վիեննա, 1928, էջ 12—14:

[20] Միք Ա 12:

[21] Ամոս Գ 6:

[22] Բ Օրինաց ԼԲ 39:

սուրբ սիրտ հաստատիր իմ մեջ»[23]. սա նշանակում է՝ հաստատիր այն ոչ թե հենց այս րոպեին, այլ՝ նորոգիր այն, որովհետև չարության մեջ ծերացել է: ...Նույնպես և մյուս խոսքը. «Ես եմ սպանում և ես եմ ապրեցնում» ...Ես սպանում եմ՝ մեղաց համար, և ես ապրեցնում եմ՝ արդարության համար: «Թեպետև մեր այս արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդը նորոգվում է»[24]. այսպիսով, նա մեկ ուրիշին չի սպառնում և մեկ ուրիշին չի կենդանացնում, այլ միևնույնին հենց սպանելով՝ կենդանացնում ու փրկում է, համաձայն հետևյալ առակի. «Թեև նրան գավազանով պիտի հարվածես, բայց նրա անձը (հոգին) մահից պիտի փրկես»[25]: Մարմինը հարվածվում է, որպեսզի ապրի արդարությունը: ...Սա նշանակում է, որ նա կասեցնում է անարդարությունը, նախքան որ այն հորդի և ափերից դուրս գալով ընթանա, այնպես, ինչպես մարդ վորավոր ամբարտակներով ու թումբերով կասեցնում է գետի հոսանքը»[26]:

Եկեղեցու ուղղափառ հայրերը իրենց գրություններում հաճախ են անդրադարձել չարին և նրա ծագմանը: Այստեղ տեղին է նրանցից մի քանի մեջբերում կատարել:

Եզնիկ Կողբացին իր «Եղծ Աղանդոց» գրքում հրաշալիորեն բնութագրում է չարը և հանդես գալիս չարի և բարու դուալիզմի դեմ: Նա ամեն ինչ համարում է բարի և բարի Աստծուց ստեղծված. «Աստված բարի է և բոլոր բարությունների արարիչը: Չարը նույնիսկ չի կարող ջոջափել նրան, ոչ էլ Աստված փափագ ունի նրան մերձենալու, այլ նա գարշում է նրա աշխատանքից և գործակիցներից, որովհետև չարը նրա բնության հետ համատեղելի չէ»:

Իսկ որտեղի՞ց է չարը, և ի՞նչ է նրա կապը Աստծու հետ: Այս մասին Կողբացին գրում է. «Սատանան ինքն իրենից չար չէ, ոչ էլ անստեղծ ու հակառակ Աստծուն, այլ Աստծուց բանական է ստեղծվել և հմտությամբ գիտե, որ Աստծու հրամանին հակառակվելը չար է. և հանդգնեց այդ բանին, որը գիտեր, թե չար է. անհնազանդության մասին ենք ասում: Եվ անհնազանդությունը նախապես եղած ինչ-որ գոյակ չէր, որի մասին իմացավ սատանան, այլ՝ կամային դիպվածից առաջացած բան»:

Այնուհետև շարունակում է. «Մենք գիտենք, որ սատանան Աստծուց սատանա չի ստեղծվել, այլ խոտորելու պատճառով իր համար անվանում ստացավ **սատանա** անունը, որովհետև եբրայեցերեն և ասորերեն լեզուներով **սատան** նշանակում է **խոտորված**: Աստծուց նա ստեղծվեց որպես լավ բաները հասկացող մի էություն, բայց մարդու նկատմամբ ունեցած թշնամությունից իր կամքով բանսարկու դարձավ. թողնելով Աստծուն հնազանդվելը՝ սկսեց ընդվզել ու մարդկանց սովորեցնել հակառակվել Աստծու հրամաններին և, որպես ապստամբ, խոտորվեց ու հեռացավ Աստծուց»:

Կողբացին հարց է տալիս, թե Աստված գիտե՞ր արդյոք, որ սատանան լավից դեպի վատն է փոխվելու և հնազանդից դեպի անհնազանդը: Եթե գիտեր և ստեղծեց, ապա ինքն էր պատճառը նրա՝ լավից վատը փոխվելուն: Իսկ եթե չգիտեր, ինչո՞ւ էր ստեղծում նրան, երբ չգիտեր, թե ինչպիսին է լինելու: Ապա պատասխանում է.

«Խիստ հիմարություն է Աստծու մասին կարծել, թե անգետ էր, քանի որ Նա նախապես գիտե լինելիքը: Բայց որովհետև Աստված բարերար էություն է, չկամեցավ Իր ազնվությունը թաքցնել: Դրա համար, թեև նախապես գիտեր սատանայի մասին, որ խոտորելու է, մարդկանց էլ հանցանք է գործել տալու՝ չունկնդրելու աստվածային հրամաններին, սակայն Աստված նրան ստեղծեց, որ դրանով միաժամանակ երևա մարդու ապաստակամությունը, և հայտնի դառնա մարդկանց հանդեպ ունեցած Իր (այսինքն՝ Աստծու) բարերարության առավելությունը՝ ներելով մարդկանց՝ առաջուց գործած մեղքերի համար[27], որպեսզի, երբ սատանային տեսնեն չար դարձած ու մեջտեղից չվերացած և հասկանան, որ իրենց մեղքերի ներման համար կա հնարավորություն՝ ապաշխարությամբ, Աստծու բարերարությունը ցույց տրվի, և մարդիկ նրա շնորհը գիտենան: Իսկ եթե դա այդպես եղած չլիներ, ոչ ոք նրա բարերարության վերահասու չէր լինի: ...Եվ այն պատճառով Աստված սատանային թողել է աշխարհում, որպես մրցասպարեզում, որ, երբ իր քաջամարտիկները կռվեն ու հաղթեն նրան, նրա առաջին հաղթանակի պարծանքը այժմ վերացվի այնպիսի մարդկանց կողմից, որոնք, լավ բաների ձգտումով նրան պարտության մատնելով, հաղթական քաջագործության դրոշը կբարձրացնեն: Որովհետև մեր ոտքերի տակ տրորվելով՝ կկործանվի ու մեռած կփռվի՝ լավ բաների մեր ձգտումից պարտության մատնված»[28]:

Այս առթիվ թարգմանաբար ներկայացնում

[23] Սղմս. Ծ 12:

[24] Բ Կորնթ. 7 16:

[25] Առակաց ԻԳ 14:

[26] Basilius, München, 1925, էջ 377—379:

[27] Տես Հռովմ. Գ 25:

[28] Եզնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց, Երևան, 1970, էջ 53—56:

նեք նաև Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Հաճախապատում ճառք»-ից մի հատված. «Եվ իրենց ապատ կամքով երկնավորներն ու երկրավորները, մարդիկ ու հրեշտակները ճշմարտության ուսուցիչներ դարձան Սուրբ Հոգու շնորհներով, ճշմարիտ գիտությամբ և անմոլար խնամությամբ՝ համաձայն արդարության օրենքների: Այսպիսով, նրանք Սուրբ Երրորդության լույսով առաջնորդված՝ ճշմարիտ պատմություններով և իրենց ստեղծված լույսերով ու ճառագայթներով լցրին երկինքն ու երկիրը, ինչպես արեգակի լույսը, որ լցնում է կյանքը ի փառս երկնավորների և երկրավորների: Իսկ սատանան կամեցավ աստվածանալ, նա իրեն պայծառության մեջ տեսնելով՝ գոռոզացավ—համաձայն իր ենթադրության—և գրկվելով իր փառքից՝ կործանվեց իր պատվից ու սկսեց մարդկանց դեպի կործանում մղել: Նա դատարկ հույսով, հոգով դեպի մոլորություն առաջնորդված և Աստուծո սիրուց դուրս նետված՝ ամենվեց բազմապիսի ամբարիշտ ցանկություններով»[29]:

Այս կապակցությամբ հատկանշական է նաև Կյուրեղ Երուսաղեմացու հետևյալ տեսակետը. «Սատանան է պատճառը մեղքի և հայրը չարության: Այս բանը Աստված է ասել և ոչ թե ես. «Սատանան մեղանչեց ի սկզբանե»[30]: Նրանից առաջ ոչ ոք չէր մեղանչել: Սակայն նա չմեղանչեց նրա համար, որ մեղանչականությունը իր բնության հետ տրված էր իրեն,—այս դեպքում Արարիչը պիտի լիներ մեղաց պատճառը,—այլ նա բարի էր ստեղծվել, սակայն իր սեփական կամքը նրան սատանա դարձրեց, և այս անվանումը արդեն իսկ մատնանշում է նրա պաշտոնը: Նա մի հրեշտակապետ էր և հետագայում անվանվեց սատանա (διάβολος)՝ բանսարկության (διαβάλλειν) հետևանքով: Նա Աստուծո բարի սպասավորներից էր, սակայն սատանա դարձավ և արդարորեն ստացավ այդ անունը, որովհետև սատանա նշանակում է հակառակորդ: Այս ուսմունքը ոչ թե իմ կողմից է, այլ այն ներշնչյալ մարգարե Եզեկիելից է: Նա իր «Ողբերգ»-ի հենց սկզբում ասում է. «Դու նման էիր մի տիպի՝ լի իմաստությամբ և կատարյալ գեղեցկությամբ, դու Աստուծո դրախտի փափկության մեջ գտնվեցիր»[31]: Եվ անմիջապես ավելացնում է. «Քո ստեղծված օրվանից դու անարատ մնացիր քո կյանքում, մինչև այն ժամանակ, երբ քո մեջ հայտնվեցին մեղքերը»[32]: Տեղին է ասել՝ «քո մեջ հայտնվեցին մեղքերը», որովհետև նրանք դրսից ներս չեն բերվել, այլ հենց դու ինքդ ես մեջտեղ բերել մեղքը: Վերոհիշյալ խոսքերին զուգընթաց մատնանշվում է նաև մեղքի պատճառը. «Քո սիրտը գեղեցկությանդ դեմ ապստամբվեց. Քո մեղքերի բազմության պատճառով գցեցի քեզ դեպի երկիր»[33]: Սրան համապատասխանում է նաև այն, ինչ Տերն Ավետարանում ասաց. «Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպես փայլակը»[34][35]:

Մակար եգիպտացին գրում է. «Բանականությամբ օժտված բոլոր էակները, այսինքն՝ հրեշտակները, հոգիները և դևերը, ստեղծվել են Արարչից իրենց անարատության և վսեմագույն պարկության մեջ: Նրանցից ոմանք իրենց սեփական կամքով հեռացան ճշմարիտ բանականությունից: Իսկ եթե ասենք, որ նրանք այդպես էին ստեղծվել Արարչի կողմից, այդ դեպքում Աստուծուն, որ սատանային կրակի մեջ շպրտեց, մի անարդար դատավոր պիտի համարենք: Կան այսպիսիք հենց աղանդավորների մեջ[36], որոնք պնդում են, թե նյութը անսկիզբ է և դա այն նախանյութն է, որ ինքնին մի զորություն է, այն էլ՝ Աստուծուն հավասար մի զորություն: Դրա դեմ կարող ես պատշաճորեն հակաճառել. ո՞րն է այն զորությունը, որ վերջում պիտի հաղթի. անշուշտ դա Աստուծու զորությունը պիտի լինի: Հետևաբար, հաղթվողը չի կարող նույնագո կամ հավասարազոր լինել: Նրանք, ովքեր ասում են, թե չարը անկախաբար ինքնագո է, այդպիսիք ոչինչ չեն հասկանում, որովհետև Աստուծու մեջ ոչ մի չար բան գոյություն ունենալ չի կարող՝ հենց նրա զորության և աստվածության պատճառով: Մեր մեջ, սակայն, չարը ազդում է մեր յուրաքանչյուր կարողության և զգացումի վրա՝ տալով նրանց ամեն տեսակ անմաքուր ցանկություններ[37]»:

Այստեղ պետք է նշել նաև, որ սատանան կամ նրա իշխանության տակ գտնվող հրեշտակները հաճախ հանդես են գալիս տարբեր անվանումներով: Քրիստոս, օրինակ, նրա համար օգտագործում է նաև **Բեհեզեբուղ**[38] բառը: Պողոս առաքյալը նրան անվանում է **Բելիար**[39]: Ղևտացվոց գրքում (գլուխ ԺԶ 9, 10) հանդիպում ենք **Ազազել** անվան,

[29] Հաճախապատում ճառք, Վենետիկ, 1954, էջ 26:

[30] Ա Հովհ. Գ 8:

[31] Եզեկիել ԻԸ 12:

[32] Անդ, ԻԸ 15:

[33] Անդ, ԻԸ 17:

[34] Ղուկ. Ժ 18:

[35] Cyrillus, München, 1922, *էջ 36*:

[36] Նկատի ունի մանիքեցիներին:

[37] Makarius, München, 1913, *էջ 153*.

[38] Մաթ. Ժ 25, ԺԲ 27, Մրկ. Գ 22, Ղուկ. ԺԱ 18, 19.

[39] Բ Կորնթ. Զ 15:

որն անապատային մի դև է: Աստված Մովսեսի միջոցով հաղորդում է Ահարոնին, որ երկու նոխազ առնի և նրանց վրա վիճակ գցի: Նրանցից մեկը Աստծու, իսկ մյուսը Ազազելի համար պետք է լինի: Ազազելին վիճակ ընկնող նոխազը պետք է արձակվի անապատի մեջ: Սույն պատումը խորթ է Յահվեի պաշտամունքին: Նոխազի անապատ արձակումով հավանաբար ցույց է տրվում մեղքերի վանումը Իսրայելի միջից: Հայերեն գրաբար բնագիրը չունի Ազազել բառը. այնտեղ, փոխանակ եբրայեցերեն բնագրի համաձայն «Վիճակ մի Տեառն և վիճակ մի Ազազելի» լինելու, գրված է՝ «Վիճակ մի Տեառն և վիճակ մի արձակելոյ»: Տովբիթի գրքում հանդիպում ենք **Ազմոդևս**[40] անուն մի դևի, իսկ Եսայու մարգարեության մեջ չարը կոչվում է **Լևիաթան**[41]: Գրաբարն այստեղ Լևիաթանի փոխարեն **վիշապ օձ** ունի: Քրիստոնեական Եկեղեցին օգտագործում է նաև **Լուցիֆեր** անունը: Այս բառը եբրայական տեքստում գոյություն չունի, դրա փոխարեն գրաբարն ունի **արուսյակ,** իսկ եբրայականը՝ **ճառագայթող որդի,** որը **Հելելն** է՝ արշալույսի որդին: Սա, ըստ բաբելոնյան դիցաբանության, երկինք բարձրանալիս կործանվել էր: Հենց այս **ճառագայթող որդին** է, որ Վուլգատայում թարգմանվել է **Լուցիֆեր** (Lucifer), որն առավոտյան աստղն է: Իսկ Եսայի մարգարեն սույն արտահայտությունը ոչ թե սատանայի համար է օգտագործում, այլ՝ ամտնանշելու համար Բաբելոնի թագավորի կործանումը[42]:

Որպես եզրակացություն՝ պետք է ասել, որ գոյություն ունի մի չար իրականություն և այն մարմնավորված է սատանայի կերպարանքում, որը ինքնագո չէ: Նա ստեղված չէ որպես չար, որովհետև Աստծու ստեղծագործության մեջ խորթ երևույթ է չարը կամ անիերդաշնակությունը, այլ նա, մերկանալով բարուց, ինքն իր համար ստեղծել է մի նոր դրություն, և այս նոր դրությունը որակվում է չար դրություն: Մարդիկ հաճախ անձնատուր են լինում սատանայի կամքին և ինքնաբերաբար հեռանում բարուց: Սակայն աղջումով և աղոթքով նրանք ի վիճակի կլինեն նորից միանալու բարուն և կատարելու կամքն Աստծու, որը աղբյուրն է ամենայն բարության:

[40] Տովբիթ Գ 8:

[41] Եսայի ԻԷ 1:

[42] Եսայի ԺԴ 12—21:

ԽԱՉՔԱՐ ԺԹ ԴԱՐԻ ԲԵՐՎԱԾ Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔԻՑ ԵՎ ՋԵՏԵՂՎԱԾ ՄԱՑՐ ԱԳՈՒՈՒ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

ՀԵՍՐՀԷ ԱԲԵԱՄ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ՆԱԽԱԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (Ա—Գ ԴԴ.)

ա. Հալածանքներ Ա դարի վերջերին և Բաբելասի «հակականոն» ընտրությունը

Առաջին քրիստոնյաների կյանքը չի անցել խաղաղ ու երջանիկ, այլ բազմիցս խռովվել է հալածանքների պատճառով: Մոտ երեք դար քրիստոնեական եկեղեցին կենաց և մահու կռիվ էր մղում հեթանոսական բիրտ ուժի դեմ: Եղել են ժամանակներ, երբ թվում է, թե խաղաղ պիտի մարեր քրիստոնեության վերջին ջահը, բայց նորից հանգամանքները փոխվել են, ահեղ փոթորիկներին հաջորդել են խաղաղ ու արևոտ օրեր, մինչև որ քրիստոնեությունը ինքը նվաճել է աշխարհը:

Հայաստանում էլ եղել են քրիստոնյաների դեմ հալածանքների մի քանի շրջաններ, որոնք տարածվել են նաև Սյունյաց քրիստոնեական համայնքի վրա: Այս հալածանքների մասին փաստաթղթեր կամ վավերագրեր, դժբախտաբար, չեն հասել մեզ: Բայց եթե ուշադիր կարդանք Ստեփանոս Օրբելյանի Պատմության գիրքը, կտեսնենք, որ այնտեղ անուղղակի խոսք կա Սյունիքում քրիստոնյաների հալածանքների մասին:

Այս հարցի վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար հարկավոր է նաև մի քանի խոսք ասել Արտապի Աթոռի վերաբերյալ: Մեր նախորդ հոդվածում ի միջի այլոց հիշատակեցինք Արտապի Աթոռը[1]: Ըստ ավանդության՝ Արտապի Աթոռը հիմնադրել է Ս. Թադեոս առաքյալը, և այնտեղ էլ գտնվում է իր գերեզմանը[2]: Արտապի Աթոռը, նվիրագործված Ս. Թադեոս առաքյալի գերեզմանով, ամբողջ նախագրիգորյան շրջանում եղել է Մայր Աթոռը և կենտրոնը Հայաստանում գտնվող քրիստոնեական բոլոր համայնքների: Հայտնաբերված մի հին վավերագրի համաձայն, հայտնի՝ Արտապյան հիշատակարան անվամբ՝ «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտապու» վերնագրով[3], Ա—Գ դդ. Արտապի Աթոռի վրա Ս. Թադեոս առաքյալին հաջորդել են ութ եպիսկոպոսներ: Տալիս ենք նրանց ցանկը՝ ըստ Թորգոմ աբեղա Փոստաճյանի[4].

Զաքարիա Հայրապետ—68—72 թթ.
Զեմենտոս Հայրապետ[5]—72—76 թթ.
Ատրներսեհ Հայրապետ—76—92 թթ.
Մուշե Հայրապետ—93—123 թթ.
Շահեն Հայրապետ—125—150 թթ.
Շավարշ Հայրապետ—151—171 թթ.
Ղևոնդիոս Հայրապետ—171—190 թթ.
Մեհրուժան Հայրապետ[6]—221—251 թթ.
(ըստ Օրմանյանի 240—270 թթ.):

---

[1] **Վարդան սրկ. Բաղդասարյան.** Քրիստոնեությունը Հայաստանում Ա—Գ դդ. և քրիստոնեական առաջին համայնքի սկզբնավորումը Սյունիքում. «Էջմիածին», Ը. էջ 26, 28:

[2] **Մատաթիա արքեպ. Օրմանեան.** Ազգապատում, Բեյրութ, 1959, Ա, էջ 29:

[3] Արարատ, Ա (1868 թ.), էջ 102—105:

[4] Տես **Թորգոմ աբեղա Փոստաճեան.** Հայ Եկեղեցւոյ ծագումն ու զարգացումը. «Հայրենիք» ամսագիր, 1955, էջ 28:

[5] Այս երկու Հայրապետները հիշվում են նաև Թադեոսի վկայաբանության մեջ, Սոփերք Հայկականք, Ը. էջ 75:

[6] Արտապյան հիշատակարանը լռում է Մեհրուժան Հայրապետի մասին: Բայց Եվսեբիոս Կեսարացու

Ինչպես նշում է Մաղաքիա արքեպ. Օրմանյանը, նախագրիգորյան շրջանում Սյունյաց Աթոռը «երբեք նախապատիվ և գլխավոր չներկայացավ»[7], այլ միշտ կախում է ունեցել Արտապի Աթոռից, ընդունել վերջինիս առաջնորդի գերագահությունը: Նախագրիգորյան շրջանում Արտապի Աթոռն է, որ նշանակել է Սյունյաց Աթոռի առաջնորդներին կամ վավերացրել նրանց նշանակումը: Սակայն Բաբելասի պարագայում այդպես չի լինում: Ստ. Օրբելյանը գրում է, որ սյունեցիք Կումսիի մահվանից հետո «ոչ կամեցան առանց առաջնորդի մնալ **և այլ ուրեք ոչ ունէին ակընկալութիւն** (ընդգծումը իմն է—Շ. ա. Բ): Ապա կացուցանէին իւրեանց առաջնորդ կխուժիկ ոմն Բաբելաս անուն»[8]:

Մեջբերված հատվածից պարզ երևում է, որ սյունեցիք այլ տեղից, այսինքն՝ Արտապից ակնկալություն չեն ունեցել, այդ պատճառով էլ ստիպված եպիսկոպոս են ընտրել իրենց համայնքից մեկին՝ Բաբելասին, որպեսզի անառաջնորդ չմնան: Բայց այն պարագան, որ Արտապի Աթոռն էր Սյունյաց Աթոռի հաւմար առաջնորդներ նշանակում կամ վավերացնում՝ կասկածից վեր է, որովհետև Բաբելասից հետո սյունեցիք, քաջալերված Ս. Հոգուց, Արտապի Աթոռ են ուղարկում Մուշե անունով մեկին, որպեսզի իրենց վիճակի համար եպիսկոպոս ձեռնադրվեր[9]: Այս Մուշեն որոշ պատճառներով չի կարողանում վերադառնալ (ստորև կտեսնենք պատճառները), և հետագայում սյունեցիք Արտապի Աթոռից իրենց համար առաջնորդ են խնդրում Մովսես Տարոնացուն[10]:

Բերված վկայություններից երևում է, որ նախագրիգորյան ժամանակաշրջանում քրիստոնեությունը Հայաստանում եղել է որոշ չափով կազմակերպված վիճակում: Տարբեր համայնքներ միմյանց հետ գտնվել են փոխադարձ կապի մեջ: Այդ փոխադարձ կապը, գոնե Սյունյաց և Արտապի Աթոռների պարագայում, սկզբնավորվել է դեռևս առաքյալների ժամանակ: Բարթողիմեոս առաքյալի վարքում գրված է, որ առաքյալը Սյունիքում եկեղեցի հիմնելուց հետո «փութացաւ հասանել ի վիճակ Թադէոսի ըստ հրամանի Հոգւոյն Սրբոյ» (Սոփերք Հայկականք, էջ 24):

Հարց է առաջանում, թե ինչո՞ւ Բաբելասին սյունեցիք իրենք են ընտրում և նշանակում իրենց առաջնորդ: Չէ՞ որ Արտապի Աթոռը կենտրոնական Աթոռն էր, և նրա վրա էր դրված քրիստոնեական այլ և այլ համայնքների կամ Աթոռների ղեկավարությունը ողջ Հայաստանի տարածքի վրա: Պատասխանը հայտնի է. քրիստոնյաները գտնվում էին խիստ հալածանքների մեջ, այդ պատճառով նրանք ի վիճակի չէին ապարեկ իջնելու: Նման դեպքերում քրիստոնեական տարբեր համայնքների միջև կապը բնական է, որ խզվեր: «Այլ ուրեք ոչ ունէին ակնկալութիւն», գրում է պատմիչը: Հալածանքների ահն ու սարսափը, գուցե նաև քաղաքական ծանր պայմանները, ստիպում են քրիստոնյաներին ավելի զգույշ հանդես գալ:

Ըստ Օրմանյանի՝ Բաբելասի ընտրությունը տեղի է ունեցել Արտապի Զաքարիա Հայրապետի օրոք[11]: Բայց բացառված չէ, որ ընտրությունը տեղի ունեցած լինի ոչ թե Զաքարիա Հայրապետի օրոք, այլ նրա նահատակությունից անմիջապես հետո: Ըստ Արտապյան հիշատակարանի՝ Զաքարիան նահատակվել է Փրկչի նահատակությունից քառասուներկու տարի հետո[12], այսինքն՝ 70-ական թվականներին: Հետևաբար, Զաքարիայի նահատակության պատճառով Արտապի Աթոռի ժամանակավոր անգլուխ մնալու հանգամանքը ևս պիտի պարտադրեր սյունեցիներին «այլ տեղից ակնկալություն չունենալ» և իրենց համայնքի ներսից ընտրել իրենց եպիսկոպոսին:

Օրմանյան սրբազանը գտնում է, որ հենց այս նույն ժամանակներում է, որ տեղի է ունեցել նաև Ոսկյանց քահանաների մարտիրոսությունը[13]: Սրանք ազգությամբ հռոմեացիներ էին կամ հույներ, որ պաշտոնով եկել էին Հայաստան, այստեղ հանդիպել Թադեոս առաքյալին, ազդվել նրա քարոզությունից, դարձի եկել և քրիստոնյա մկրտվել: Առաքյալի նահատակությունից հետո, որպեսզի խույս տան հալածանքներից, առանձնացել

Պատմությունից հայտնի է, որ Դիոնիսիոս Ալեքսանդրացի Հայրապետը նամակ է գրել հայոց Մեհրուժան (Mitrozane) Հայրապետին (Եվս. 517): Եվ քանի որ նախագրիգորյան շրջանում Հայրապետական Աթոռը Արտապի Աթոռն էր, այդ պատճառով էլ պատշաճ է Մեհրուժանին ևս դնել Արտապի եպիսկոպոսների ցանկի մեջ: Այնուամենայնիվ այս հարցը որոշ կասկածելի երեսներ ունի և կարոտ է լուրջ ուսումնասիրման:

[7] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան,** Ազգապատում, Ա, էջ 42:

[8] **Ստ. Օրբելեան,** Պատմութիւն, էջ 22:

[9] **Ստ. Օրբելեան,** Պատմութիւն, էջ 22:

[10] Նույնը, էջ 23:

[11] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան,** Ազգապատում, Ա, 45:

[12] **«Արարատ»,** Ա, 1868 թ., էջ 102:

[13] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան,** Ազգապատում, Ա, էջ 46:

են Ծաղկանց լեռներում[14], ի վերջո, երբ հալածանքների մի նոր շրջան է սեսվել Զարթոնքի Հայրապետի օրոք, որտեղ էլ նահատակվել են[15]:

Հիշատակության արժանի է նաև Ալթնանքի լուսավորիչ Եղիշե առաքյալի աշակերտներից մեկի նահատակությունը Սահառն քաղաքի մեջ, առ նույն ժամանակաշրջանում[16]: Ըստ այդ ավանդության՝ սրա երկու ընկերները ուրանում են քրիստոնեությունը և դնում «գլխի խոզխոզիչ արանցն»[17]:

Տեսնում ենք, թե ինչպես միմանցից բոլորովին տարբեր ավանդություններ հաստատում են, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանում իրապես տեղի են ունեցել քրիստոնյաների հալածանքներ: Սրանցից, անշուշտ, իրենք էլ անմասն չեն մնացել այդ հալածանքներից: Թերևս նրանց միաձակը համեմատաբար ավելի ապահով է եղել սրանց անմասնչելի ու անանցանելի լեռների շնորհիվ: Այդ պատճառով էլ նրանք կարողացել են ոչ միայն որոշ չափով խուսափել հալածանքներից, այլ նույնիսկ իրենց համար եպիսկոպոս են ընտրել իրենց համայնքի անդամներից մեկին, որ Արտապի Աթոռի անապահով, թերևս նաև անգլուխ միաձակում գրաբարեու պատճառով հնարավորություն չի ունեցել անձամբ գնալու և ձեռնադրվելու Արտապի Աթոռի ընդհանրական Հայրապետի կողմից:

բ. Հալածանքներ Սանատրուկ արքայի օրոք և նրանից հետո. Մուշե Հայրապետ

Բաբելասի աթոռակալության հետագա շրջանը, համեմատաբար խաղաղ մի ժամանակաշրջան, զուգադիպել է Արտապի Զենենտոս (72—76) և Աստներսեհ (76—92) Հայրապետների տարիներին: Ճիշտ է, հայտնի է նրա խաղաղական վախճանը, սակայն նրա մահից անմիջապես հետո, Աստներսեհ Հայրապետի վերջին տարիներին, Հայաստանում սկսվում է հալածանքների մի նոր շրջան: Վերևում տեսանք, որ Բաբելասի մահվանից հետո սրանցից Արտապի Աթոռ են ուղարկում Մուշեին, որպեսզի եպիսկոպոս ձեռնադրվի Սրանց Աթոռի համար: Սակայն Մուշեն չի կարողանում վերադառնալ: Օրմանյան սրբազանի կարծիքով՝ հենց այս ժամանակաշրջանում տեղի են ունենում քրիստոնյաների հալածանքները, որոնց պոռ է դառնում նաև Արտապի Աստներսեհ Հայրապետը[18], որի համար Արտապյան հիշատակարանը ասում է, թե՝ «ապա յետ կառավարելոյ զժողովուրդս ԺԵ-ամ **նահատակեցաւ ի բարբարոսաց**»[19] (ընդգծումը իմն է—Շ. ա Բ.):

Այս նույն ժամանակաշրջանում է տեղի ունենում նաև Սուքիասյանց վկաների հայտնի նահատակությունը[20]: Սրանք քրիստոնեությունը ընդունել էին Ռանցանց քահանաներից, ապա քառասունչորս տարի խոտաճարակությամբ զբաղվել Սուկավետ լեռան վրա[21]:

Աստներսեհի նահատակության պատճառով Արտապի Աթոռը թափուր է մնում: Սակայն այդ պատճառով Մուշեն, որ մինչ այդ արդեն եպիսկոպոս էր ձեռնադրվել Սրանցաց Աթոռի համար, չի կարողանում վերադառնալ իր միաձակը և կոչվում է Հայրապետական գահի վրա[22]:

Իսկապես, Արտապյան հիշատակարանն էլ գրում է, թե Աստներսեհին փոխարինում է ոմն Մուշե: Ճիշտ է, հիշատակարանում սրա մասին ասված է, որ պարսից երկրից էր, բայց այս հանգամանքը չի բացառում, որ նա Սրանցաց համայնքի անդամ լիներ: Մեր նախորդ հոդվածում ցույց տվեցինք, որ Սրանցաց համայնքում ընդհանրապես մեծ տեղ էր գրավում օտար տարրը[23]: Հայտնի են նաև Բաբեռաց և Զրմանդարը, որոնք, ինչպես իրենց անունն է ցույց տալիս, հավանաբար պարսիկ էին:

Քրիստոնյաների այս երկրորդ հալածանքը, որ շատ ավելի մեծ չափեր էր ստացել, քան նախորդը, տևում է բավական երկար մի ժամանակահատված, թերևս քառորդ դարից ավելի, քանի որ Մուշե Հայրապետի համար ասվում է, որ իր սուրբ կյանքի ընթացքում ժողովականներին կառավարում էր բաքառոգներում. «Սորա յաջորդեաց Մուշէ կամ Մուշեղ եպիսկոպոս երկրէն Պարսից. սա ետ կառավարեալ զժողովս սրբոց ի թաքստեան իբր Լ (30) ամ վճարեաց զկեանս իւր»[24]:

Այս հալածանքները մեծ չափով տարածվում են սրանցեցիների վրա: Նրանք մնում են

---

[14] Ենիսան գետի ակունքների շրջանը, ըստ Ա. Երեմյանի. Տե՛ս Ա. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 74:

[15] Տես Սոփերք Հայկականք, ԺԹ, էջ 59—66:

[16] **Մովսիսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 17:

[17] Նույն տեղում:

[18] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան.** Ազգապատում, էջ 46:

[19] «Արարատ», Ա, 1868 թ., էջ 103:

[20] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան.** Ազգապատում, էջ 51:

[21] Սոփերք Հայկականք, ԺԹ, էջ 38:

[22] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան.** Ազգապատում, էջ 50:

[23] **Վարդան արիւ. Բաղդասարեան.** նույնը, էջ 29:

[24] «Արարատ», Ա, 1868, էջ 102:

«ասնտերանչք» վիճակում, «բնակեալ այսր և անդր»[25]: Համայնքը ցրվում է, ոմանք բարձրանում են Գարուա լեռը և անցնում միայնակեցության:

Սյունյաց Աթոռի այս անմխիթար, անգլուխ ու անօգնական վիճակը հավանաբար տևում է բավական երկար, մինչև որ վերջանում են հալածանքները, և սյունեցիք նոր առաջնորդ են խնդրում Արտավի Աթոռից, գուցե հենց Մուշե Հայրապետից՝ իրենց համայնքի նախկին անդամից, որ բավական երկար ժամանակ պաշտոնավարել և մեծ ջանքերի գնով կարողացել է վառ պահել քրիստոնեական մարող ջահը:

Իսկ ո՞ր թագավորի օրոք են տեղի ունեցել այս հալածանքները: Օրմանյան սրբազանը գտնում է, որ հալածանքները տեղի են ունեցել հայոց Արտաշես թագավորի օրոք: Ահա թե ինչ է գրում նա իր «Հայոց Եկեղեցին» աշխատության մեջ. «...պատմութիւնն ալ կը յիշէ, թէ հայոց թագաւորներէն **Արտաշէս 110-ին ատենները** (ընդգծումը իմն է— Շ. ա. Բ.), Խոսրով շուրջ 230-ին, և Տրդատ 287-ին պաշտօնապէս հալածանքներ հրամայեցին քրիստոնէութեան դէմ»[26]: Սակայն պետք է նկատել, որ 110 թվականի ժամանակները հայոց Արտաշես անունով թագավոր հայտնի չէ: Այդ շրջանում հայտնի է հայոց Աշխադարայ թագավորը (110—113), որ իր գահակալության բավական կարճ և հռոմեա-պարթևական բարդ ու իր համար ոչ նպաստավոր հարաբերությունների ընթացքում, դժվար թե հասցներ այդքան նեղություն պատճառել փոքրիկ և գրեթե անհայտ քրիստոնեական համայնքներին, երբ իր համար ավելի կարևոր հարց էր պահպանել իր իշխանությունը հայոց գահի վրա, մի բան, որ չկարողացավ[27]: Բացի դրանից, հալածանքները, ինչպես տեսանք վերևում, տևել են շատ ավելի երկար մի ժամանակամիջոց, սկսած Ատրներսեհ (76—92) Հայրապետի վերջին տարիներից: Իսկ այդ տարիները կուգադիպում են հայոց Սանատրուկ արքայի գահակալության առաջին տարիներին. նա իշխել է Վաղարշակ արքայի (66—68) մահվանից քիչ հետո (ճիշտ թիվը հայտնի չէ), մինչև 109 թ.[28]:

Սանատրուկ արքան եղել է քրիստոնեության ահեղ հալածիչ: Նրա մասին կան բավմաթիվ ավանդապրույցներ, որոնցից ամենահայտնին բերել է Մովսես Խորենացին[29]: Սանատրուկի մասին պատմված ավանդապրույցների մեջ մեծ տեղ են գրավել նրա ձեռնարկած հալածանքները քրիստոնյաների դեմ: Հետագայում այդ պրույցները միացել են Ա դարում Հայաստան եկած և այստեղ քարոզած Թադեոս առաքյալի մասին պատմված ավանդապրույցներին և այդպիսով ստացվել է Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հայտնի վկայաբանությունը[30]: Այդ վկայաբանությանը ծանոթ է եղել Մ. Խորենացին, քանի որ նա համառոտ պատմելով Թադեոսի Հայաստան գալը, նահատակությունը և այլն, ավելացնում է. «Այս ամենայն... յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ՝ ոչ ինչ կարևորագոյն համարեցաք ոճով երկրորդել»[31]:

Փաստորեն, Սանատրուկի և նրա դստեր նահատակության մասին պատմված պրույցները, միանալով Թադեոս առաքյալի ավանդությանը, շփոթության մեջ են գցել վարքագրին և Խորենացուն, որոնք կատարել են ժամանակագրական մեծ սխալ՝ Բ դարի Սանատրուկ թագավորին տանելով Ա դարի կեսերը՝ առաքյալների քարոզության ժամանակները:

Այսպիսով, Սանատրուկ արքայի վրա ծանրանում է ոչ թե Թադեոս առաքյալի, այլ նրա հաջորդներից Ատրներսեհ Հայրապետի նահատակությունը: Ատրներսեհին հաջորդած Մուշեն, որը եկել էր Սյունիքից, արդեն ապացինք, որ, ստիպված, քաշվել ու մնացել է թաքստոցում:

Սանատրուկը մահանում է 109 թ.[32] (մ. թ.): Բայց քրիստոնյաները Հայաստանում դեռևս հանգիստ չեն գտնում: 114 թ. Հռոմի Տրայանոս կայսրը, օգտագործելով պարթևական Խոսրով թագավորի՝ հայոց Աշխադար արքային ինքնակամ կերպով գահընկեց անելու և նրա եղբորը՝ Պարթամասիրին գահ բարձրացնելու ձեռնարկը, հարձակվում և գրավում է Հայաստանը՝ այն վերածելով հռոմեական նահանգի: Այս շրջանում բնականաբար պետք է ավելի սաստկանային

[25] **Ստ. Օրբելեան,** Պատմութիւն, էջ 23:

[26] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան,** Հայոց Եկեղեցին, էջ 24:

[27] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. Ա, Երևան, 1971, էջ 772:

[28] Հայ ժող. պատմ. հտ. Ա, էջ 766:

[29] Մովսես Խորենացին իր Պատմության ԼԶ գլխում պատմում է, որ ուժեղ բուքի ժամանակ փոքրիկ արքայազնի դայակը՝ Սանոտը, մնում է ձյան տակ և մանկանը երեք օր պահում ստինքների մեջ, այդ ձևով փրկելով նրա կյանքը: Այդ պատճառով էլ մանկանը կոչում են Սանատրուկ, այսինքն՝ Սանոտի տվածը (Մ. Խորենացի, Պատմութիւն, Տփղիս, 1913, էջ 160—161):

[30] «Վկայաբանութիւն և գիւտ նշխարաց Ս. Թադէի առաքելոյ և Սանդխտոյ կուսի», Սուփերք Հայկականք, Ը:

[31] **Մ. Խորենացի,** Պատմ., էջ 157:

[32] Հայ ժող. պատմ. հտ. Ա, էջ 772:

քրիստոնյաների հալածանքները, քանի որ Տրայանոսը հալածի էր օրենս քրիստոնեության հալածող, և այդ ժամանակ սկսել էին քրիստոնյաների հալածանքները ամբողջ Հռոմեական կայսրության տարածքում[33]: Իսկ Հայաստանը, ինչպես ասվեց, վերածվել էր հռոմեական նահանգի, որեմն այնտեղ ևս նույն վիճակը պետք է լիներ:

Սակայն 117 թ. Հայաստանը նորից դուրս է գալիս Հռոմեական կայսրության կազմից, և հայոց գահին է բարձրանում Վաղարշ Ա (117—140) թագավորը: Սրա օրոք, հավանաբար, քրիստոնյաները Հայաստանում կարողանում են շունչ քաշել, նույնիսկ՝ ավելի աշխուժանալ: Շրջակա երկրներից այստեղ են գաղթում շատ քրիստոնյաներ:

Վաղարշ Ա-ի օրոք Հայաստանը ապրում է բարգաքական և տնտեսական մեծ վերելք, զարգանում է առևտուրը[34]: Այս երևույթները նախադրյալ պիտի հանդիսանային քրիստոնյաների տարածման համար: Տարբեր հանգամանքների միջև նորից սկսվում են փոխհարաբերությունները: Պատեցիք, որ երկար ժամանակ ծպտված էին մնացել, այս ժամանակ է, որ նորից հանախմբվում են և իրենց առաջնորդ խնդրում. «Ապա գնացեալ սոցա խնդրեցին իրենց առաջնորդ և եռ այր մի տարօնացի Մովսէս անուն»[35]: Հավանաբար Մուշի Հայրապետն է, որ Պատեցաց Աթոռի համար նշանակում է Մովսես Տարոնացուն: Մուշի Հայրապետը, որ իր պաշտոնավարության մեծ մասը անցկացրել էր հալածանքների մեջ, թաքստոցներում, կյանքի վերջին տարիներին, որ կուգադիպում էր Վաղարշ թագավորի գահակալության առաջին տարիներին, օգտվելով նպաստավոր պայմաններից, բնականաբար պետք է ասպարեզ իջներ և կարմակերպեր երկարատև հալածանքների պատճառով ցրված ու կազմալուծված իր հաստատը:

* * *

Հայաստանում նախագրիգորյան շրջանում հայտնի են քրիստոնյաների հալածանքների նաև այլ վկայություններ: Դրանք մեկ առ մեկ թվարկում է Հ. Ղևոնդ Ալիշանը[36]: Այդ հալածանքներից հիշարժան է հատկապես հայոց Ղևոնդիոս եպիսկոպոսի նահատակությունը՝ Բ դարի վերջին, հռոմեացի Մարկոս Ավրելիոս կայսեր գահակալության վերջին տարիներին և հայոց Վաղարշ Ա թագավորի գահակալության սկզբի տարիներին, այսինքն՝ 186 թ.[37]: Հիշատակության արժանի են նաև Վաղարշ Բ-ի որդի Խոսրով Ա-ի ձեռնադրած հալածանքները, որոնց մասին անդրադարձել է Կեսարիայի Փիլիպիանոս եպիսկոպոսը իր «Պատմության հալածանաց եկեղեցւոյ» գրքում (կորած), ինչպես անուղղակի կերպով տեղեկանում ենք Մովսես Խորենացու Պատմությունից[38]:

Նման հալածանքները շարունակվել են մինչև Տրդատ Գ-ի ժամանակները: Իհարկե, պետք է ենթադրել, որ այդ հալածանքները տարածվել են նաև Պատեցաց հանդիպի վրա, բայց քանի որ այդ մասին ոչ մի հիշատակություն չկա և, բացի դրանից, փաստերը շատ անորոշ են ու սակավ, մեր նպատակից դուրս ենք համարում դրանց մասին խոսել առանձին-առանձին: Շատ հնարավոր է, որ ապագայում գտնված նոր փաստեր կամ տվյալներ նոր լուսաբանումների առիթ տան:

[33] **Երուանդ Տէր-Մինասեանց.** Ընդհ. եկեղեցական պատմութիւն, հտ. Ա, Ս. Էջմիածին, 1908, էջ 95—96:

[34] Հայ ժող. պատմ., հտ. Ա, էջ 778—779:

[35] **Սամ. Օրբելեան.** Պատմութիւն, էջ 23:

[36] Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան.** Աբջարոս Քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ—Ս. Ղազար, 1920, էջ 73—94:

[37] **Հ. Գրիգոր Անանեան.** Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի թաղարանին առաջ, Վենետիկ, 1979, էջ 44:

[38] **Մ. Խորենացի.** Պատմութիւն, էջ 213:



ԵՂՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ «ԲԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ ԱՌ ՎԱՐԴԱՊԵՏՍՆ ԱՂՈՒԱՆԻՑ» ԹՈՒՂԹԸ

Ստեփանոս Սյունեցին, անկասկած, Ը դարի հայ եկեղեցական մատենագրության կարկառուն դեմքերից մեկն է:

Թեև նրա գրական գործունեությամբ զբաղվել են մի շարք բանասերներ[1], սակայն մինչև օրս էլ նրա մատենագրական վաստակը ամբողջությամբ չի ուսումնասիրվել և չի հրապարակվել:

Մեր այս հոդվածով ցանկանում ենք ներկայացնել նրա անտիպ գործերից մեկը՝ «Բան պատասխանոյ առ վարդապետսն Աղուանից» փոքրածավալ թուղթը:

Այս թղթի մասին առաջին անգամ խոսում է հայր Գարեգին Զարբհանալյանը հետևյալ բառերով. «Մոտերս ուրիշ երկու թուղթեր ալ գտնվեցան հանուն Սյունեցվույն, մեկը գրված առ պատրիարքն Անտիոքա, և մեկալը առ վարդապետս Աղվանից, որ համառոտ գրված մըն է»[2]:

Հայր Գարեգին Զարբհանալյանի հիշատակած թուղթը երևան է գալիս հայր Բարսեղ Սարգսյանի՝ Վենետիկի Մխիթարյան մատենադարանի հայերեն ձեռագրերի նկարագրության առիթով. **«Երանելոյն քերթողի Ստեփանոսի Սիւնեցւոյ՝ Պատասխանի առ վարդապետսն Աղուանից:** Սկ. Սկիզբն և հիմն ամենայն պահոց զուրբաթ և զչորեքշաբաթ գտաք առաքելական հրամանաւն՝ յաշակերտաց Տեառն... վջ. Զի ասէր, թէ սուրբ կոյսն երեսուն աւր յառաջ քան զփոխումն իւր պահեաց. սովորեցան և այլ կանայք պահել»[3]:

Խոսելով Վենետիկի նույն ձեռագրի մասին՝ հայր Բարսեղ Սարգսյանը նշում է, որ այդ արտագրել է հայր Արսեն Բագրատունին Փարիզի կայսերական գրատան հին թվահամարով հմր. 44, 45, 88 երկաթագիր ձառընտիրներից և հմր. 47 Հայսմավուրքից, որոնց մասին տեղեկություններ կարելի է ստանալ Ֆր. Մակլերի կազմած ձեռագրացուցակից[4]: Դժբախտաբար Ֆր. Մակլերի ձեռագրացուցակում տրված չեն ձեռագրերի բովանդակությունները և հետևաբար հնարավոր չէ ճշտել, թե հատկապես ո՞ր ձեռագրից է հայր Արսեն Բագրատունին ընդօրինակել Ստ. Սյունեցու մեզ հետաքրքրող թուղթը:

---

[1] **Գալուստ Տէր-Մկրտչեան,** Ստեփանոս Իմաստասէր, Վաղարշապատ, 1902:

Սահակ վրդ. Ամատունի, Ժամակարգութեան մեկնութիւն ընդարձակ և համառօտ Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի և նորին պատճառ հիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյ, Ս. Էջմիածին, 1917:

Գարեգին կթող Յովսէփեան, Մխիթար Այրիվանեցի, Երուսաղէմ, 1931: Ստեփանոսի Սիւնեցւոյ Մեկնութիւն չորից աւետարանչաց, Անթիլիաս, 1951—52, (գիրքը չի հրապարակվել) և այլն:

Մեսրոպ վրդ. Գ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ, 1958: Նորայայտ հատուած մը Ստեփանոս Սիւնեցւոյ Արարածոց մեկնութենէն, «Հանդէս Ամսօրեայ» 1964, 4—6, էջ 129—142: Նիւթեր Ստ. Իմաստասէր Սիւնեցւոյ կեանքի և գրութեանց մասին, «ՀԱ», 1965, 4—6, էջ 207—220: Ճշդումներ և յաւելումներ Ստեփանոս Իմաստասէր Սիւնեցւոյ կենսագրութեան և գրութեանց մասին, «ՀԱ», 1966, 10—12, էջ 437—460: Շարականներ, որ Սիւնեցւոյ չեն պատկանիր, «ՀԱ», 1973, 4—6, էջ 203—204: Ե դարուն ապրած Ստեփանոս Սիւնեցի եպիսկոպոսի մը գոյութիւնը վիճելի, «ՀԱ», 1975, 4—6, էջ 164—182:

Ասատուր Մնացականյան, Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղեր, «Բանբեր Մատենադարանի», 11, Երևան, 1973, էջ 275—290, և այլն:

[2] **Հ. Գ. Զարբհանալեան,** Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 494:

[3] **Հ. Բարսեղ Սարգսեան,** Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Բ, էջ 194, ձեռ. 210, ձառընտիր ԺԱ, հին թիւ 1352, 1824 թ., էջ 56ա—56բ: Տե՛ս նաև **Հ. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, Երևան, 1948, էջ 604:

[4] **F. Macler,** Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens de la bibliothèque Nationale, Paris 1908.

1953 թ., երբ Նորայր եպս. Պողարյանը հրատարակում է Երուսաղեմի հայերեն ձեռագրացուցակի համառոտ տարբերակի Բ հատորը, երևան է գալիս Ստ. Սյունեցու՝ Աղվանից վարդապետներին ուղղած թղթի մի այլ ձեռագիր[5]: Թեև այդ ձեռագրի նկարագրության առիթով Նորայր եպս. Պողարյանը տպիս է միայն թղթի վերնագիրը՝ «Երանելոյն քերթողի Ստեփաննոսի Սիւնեցոյ պատասխանի առ վարդապետսն Աղուանից», սակայն իր մի այլ գրքում տպիս է նաև նույն թղթի սկզբամասը. «Սկիզբն և հիմն ամենայն պահոց զուրբաթ և պչորեքշաբաթ գտաք...»[6]: Իսկ Երուսաղեմի հայերեն ձեռագրացուցակի Բ՝ ընդարձակ հրատարակության մեջ՝ Նորայր եպս. Պողարյանը նշում է, թե խնդրո առարկա թուղթը տպված է «Արարատ» ամսագրում (1917 թ., էջ 199): Ստուգելով այս հղումը, հաստատեցինք, որ այդտեղ ոչինչ չկա մեկ հետաքրքրող թղթի մասին, այլ այնտեղ տպվածը Սահակ վրդ. Ամատունու հրատարակած «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատճառ հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ» գործն է (էջ 199—204):

Աղվանից վարդապետներին ուղղած Ստ. Սյունեցու թուղթը ներկայացնելու մի փորձ է արել Մեսրոպ վրդ. Գ. Գրիգորյանը իր «Ստեփանոս Սիւնեցի» գրքի «Պատասխանի առ վարդապետսն Աղուանից» ենթավերնագրի տակ: Այդտեղ նա խնդրո առարկա թղթի մասին ասում է հետևյալը. «Նոր ժամանակներու ուսումնասիրություններն կարգ մը հայոմական եկեղեցականներ կշանան այս նամակի հեղինակությունը վերագրել ուրիշի, որպեսզի կարենան ըսել թե Ստ. Սյունեցի քաղկեդոնական է (տես Զամչ. Բ հատ. էջ 556—559): Ո՛չ, Սյունեցի՛ն գրած է խնդրո առարկա թուղթը, ինչպես կկայեն բոլոր կենսագիրներն ու նամակին ձեռագիրները, և ան քաղկեդոնիկ չէ: Ահա փաստեր»[8]: Այնուհետև նա մեջ է բերում «Առ Գերմանոս» թղթից երեք հատված՝ ապացուցելու համար Սյունեցու հակաքաղկեդոնական լինելը, ապա հիշում է խնդրո առարկա թղթի երկու՝ մինեռիկյան և երուսաղեմյան ձեռագրերը[9]:

Ընթերցելով Մեսրոպ վրդ. Գ. Գրիգորյանի ստանձնած հայր Մ. Չամչյանի հատուցատասխան հատվածը՝ մեզ չհաջողվեց գտնել ոչ մի խոսք Ստ. Սյունեցու Աղվանից ուղղված թղթի մասին: Այնտեղ բացառապես խոսվում է Ստ. Սյունեցու՝ «Առ Գերմանոս» թղթի մասին: Մյուս կողմից պետք է նշել, որ Ստ. Սյունեցու՝ Աղվանից ուղղած թուղթը, ինչպես պետք է տեսնենք քիչ հետո, ոչնչով չի առնչվում քաղկեդոնականության հետ: Հետևաբար, սխալված չենք լինի, եթե ասենք, որ Մեսրոպ վրդ. Գ. Գրիգորյանի «Ստեփանոս Սիւնեցի» գրքի «Պատասխանի առ վարդապետսն Աղուանից» ենթավերնագրի տակ շարադրվածը, բացի վերջին հատվածից, իրականում վերաբերում է Սյունեցու «Առ Գերմանոս» թղթին:

Այսպիսով, Մեսրոպ վրդ. Գ. Գրիգորյանի՝ Սյունեցու Աղվանից ուղղված թղթի ներկայացումը սահմանափակվում է այդ թղթի երկու ձեռագրերի հիշատակությամբ միայն:

Եթե այս ամենի վրա ավելացնենք նաև այն, որ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ Մատենադարանի—Ե.ք.Պ.) ձեռագրացուցակում հիշվում են ևս երկու ձեռագրեր՝ հմր. 2042 (ԺԴ դ.)[10] և 7443 (ԺԴ, ԺԶ դդ.)[11], որոնք պարունակում են Սյունեցու՝ Աղվանից ուղղած թուղթը, ապա մենք ամփոփած կլինենք այն ամենը, ինչ որ ասվել է այդ թղթի մասին հայ բանասիրության մեջ:

Սակայն իրականում ի՞նչ է իրենից ներկայացնում Ստ. Սյունեցու՝ Աղվանից ուղղած թուղթը, ի՞նչ բովանդակություն ունի, ի՞նչ վիճակով է մեզ հասել այն: Ահա հարցեր, որոնց պիտի փորձենք պատասխանել մեր այս հոդվածով:

Որպեսզի մեր խոսքը ավելի առարկայական և դյուրըմբռնելի լինի, նախ ցանկանում ենք այստեղ հրապարակել Սյունեցու այդ թուղթը, ըստ Մատենադարանի հմր. 2042 (էջ 304բ—305ա) = Ա, և 7443 (էջ 583բ—584ա) = Բ ձեռագրերի:

Երանելոյն քերթողի Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Բան պատասխան[ւ]ոյ առ վարդապետսն Աղուանից

Սկիզբն և հիմն ամենայն պահոց զուրբաթ և պչորեքշաբաթ գտաք առաքելական հրամանաւն յաշակերտաց Տեառն, և զպահ սուրբ յառաջնորդացն, և զերիս զայս ի բաց կալ

[5] **Նորայր եպս. Պողարեան,** Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. Բ, Երուսաղէմ, 1953, էջ 6, ձեռ. 145, էջ 741բ—742ա:

[6] **Նորայր եպս. Պողարեան,** Հայ գրագիր, Երուսաղէմ, 1971, էջ 114:

[7] **Նորայր եպս. Պողարեան,** Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. Ա, Երուս 1966, էջ 413:

[8] **Մեսրոպ վրդ. Գ. Գրիգորեան,** Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ, 1958, էջ 39:

[9] Անդ, էջ 39—40:

[10] **Ե. Եգանեան, Ա. Ձեթունեան, Փ. Անթաբեան,** Ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Ա, Երևան, 1965, էջ 707:

[11] **Նույնը,** հատ. Բ, Երևան, 1970, էջ 534:

ա. Բ.—Երանելոյն քերթողի Ստեփաննոսի Սիւնեցու

ի կոոց կոհից՝ և ի հեղձուցելոց՝ և յարենէ: Իսկ պահք Վարդավառին ի սրբոյն Յակոբա՝ եդեալ է, զի յայսմ տաւնի եղև սկիզբն պատարագի մատուցանել և աղ աւրհնել՝ ձեռամբ սրբոյն Յակոբա՝. եղբաւր Տեառն: Իսկ պահք Սուրբ Նշանին և Աստուածածնին՝ յորժամ սուրբ՝ առաքելքն յԵրուսաղէմ ժողովեցան, յուրբաթէ յուրբաթ անսուաղութեամբ՝ ամենեքեան պահեցին յոտ[ա]նաւոր տքնութեամբ, ի պատիւ սպասաւորութեան սրբուհւոյն՝: Եւ ապա զփայտեղէն անաթն եդ ի վերայ՝ երեսաց՝ իւրոց, աղաչանաւք սուրբ առաքելոցն: Կին մի՝՝, սպասաւոր սուրբ կուսին, Նոյեմկարա՝՝ անուն նորա, գնաց զկնի սրբոյն Թոմայի ի Հնդիկս, զերեսուն աւր պահէր, զի ասէր, թէ սուրբ կոյսն երեսուն աւր յառաջ քան զփոխումն իւր պահեաց: Սովորեցան և այլ կանայք պահել:

Ինչպես երևում է արդեն, այս գրությունը մեկ է հասել բավականին աղճատված և փոխված վիճակով: Այն չունի նամակին հատուկ ոչ սկիզբ և ոչ վերջ: Բացահայտ է, որ այն Ստ. Սյունեցու Աղվանից ուղղած թղթի ամբողջությունը չէ, այլ մի հատվածը միայն:

Բարեբախտաբար Մատենադարանի ձեռագրերից մեկում՝ հմր. 2152-ում, էջ 247ա—բ, մեկ հաջողվեց գտնել Ստ. Սյունեցու՝ Աղվանից ուղղած թղթի մի ավելի ամբողջական տարբերակ՝ «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, թէ ո՞յք են առաքելական պահք» վերնագրով:

Այդ տարբերակը հետևյալն է. «Հիմն ամենայն պահոց զուրբաթ և զչորեքշաբաթ գտաք յաշակերտաց սրբոց առաքելոցն՝ առաքելական հրամանաւն, և զպահս սրբոց քառասնորդացն: Եւ նախագոյն քան զսոսա ինքեանց սրբոց առաքելոցն կարգեալք զերիսս զայսոսիկ՝ ի բաց լինել ի զոհելոյ կոոց և ի հեղձուցելոց և յարենէ, և կարևորացս յայսցանէ ի բաց լինել: Իսկ պահք Վարդավառին ի սրբոյն Յակոբայ եդեալ են, և զի յայսմ պատկի* եղև սկիզբն պատարագի Քրիստոսի մատուցման և աղ աւրհնութեան ձեռամբ սրբոյ առաքելոյն Յակոբայ եղբաւրն Տեառն:

Իսկ պահք Սրբոյ Նշանին եդեալ են ի սրբոյն Կիւրղէ Երուսաղէմի հայրապետէ: Իսկ պահք սրբոյն Գէորգեայ ի սրբոյն Գրիգորէ եդեալ եղեն, տանս Հայոց: Իսկ պահք Աստուածածնին Մարիամայ սրբուհւոյն՝ յորժամ եղեն ժողովեալ առաքելքն յիւրաքանչիւր վիճակաց աստուածահրաշ սքանչելի զօրութեամբն ի սուրբ քաղաքն Երուսաղէմ յաւուր ուրբաթու ամենեքեան միաբան, նախ ինքեանք պահեցին անսուաղութեամբ և յոտանաւոր տքնութեամբ մինչև ցնոյն ուրբաթ, ի պատիւ սպասաւորութեան Աստուածածնին սրբուհւոյ, և ապա եդեալ անօթ փայտեղէն ի սուրբ դէմսն իւր սրբուհւոյն՝ աղաչանօք սրբոց առաքելոցն, զի մի եղիցին զրկեալք ի նորա սուրբ երեսացն տեսլենէ, կերպացաւ և ձևացաւ պատկեր սրբուհւոյն ի յանօթն փայտեղէն, նմանակերպ սքանչելեօք իբրև զիւրն իսկ զսուրբ պատկերն: Իսկ յորժամ փոխեցաւ սուրբ Աստուածածինն առ Որդին իւր միածին ի փառսն յանճառս և յանպատումս, անմահ և անապական եղեալ, դարձեալ սփռեցան առաքելքն յիւրաքանչիւր տեղիս և քարոզեցին զպահքս զայս յիւրաքանչիւր վիճակս իւրեանց: Իսկ կին մի սպասաւոր սրբուհւոյն, անուանակոչութեամբ կնոջն Նոյի, Նոյեմկարա անուն նորա, գնաց զկնի սուրբ առաքելոյն Թումայի ի Հնդիկս և անդ երեսուն օր սուրբ պահէր զպահս սուրբ Աստուածածնին: Քանզի ասէր. «Երեսուն աւուրբ յառաջ ասաց մեզ սրբուհին զփոխումն իւր»: Ուսան և կանայք Հնդկաց և պահեն երեսուն օր մինչև ցայսօր: Իսկ պատկեր սրբոյ Աստուածածնին [բերեալ] եղև ի ձեռն սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի [ի Հայս] և ի կեանս իւրեանց ընդ ինքեանս պահելով: Իսկ զհետ կատարման սրբոց առաքելոցն անյայտ եղև սուրբ պատկերն և ոչ ուրեք գտանէր: Դարձեալ զկնի .մկզ. ամաց անցանելոյ փոխման սրբոց առաքելոցն, յորժամ յաջորդեաց զաթոռն առաքելական սուրբն Գրիգոր, երիցս երանեալ Լուսաւորիչն Հայոց, Պարթևն մեծ, Սուրէնն պալիաւ Արշակունին յազգէ, երկատեսակ փառօք զարդարեալ. լաւն և վեհն ի բնաւս, որ ծնօղ մեր ըստ աւետարանին, որ եբաց մեզ դուռն լուսոյ ճշմարիտ աստուածգիտութեան, յետ ԺԵ ամի Տրդատայ կալեալ զաթոռ Հայրապետ[ո]ւթեանն յելանել նորա ի վիրապէն, ասեն զերևումն լինել սրբոյ պատկերի Աստուածածնին սքանչելի լուսոյ ծագմամբ** ի գաւառին Անձաւացեաց, ի խորաձոր վիմամուտ տեղիս Ոգեաց վանս տեղւոյն անուանեալ կոչի: Եւ սրբոյն Գրիգորի հաւեալ ի տեղին և հաստատեալ զբնակութիւն սրբուհւոյն իւրով իսկ անձամբ շինեալ եկեղեցի յանուն սրբոյ Աստուածածնին: Իսկ զպատմութիւն երևման սրբոյ պատկերին թէ ո՞րպէս կամ զիա՞րդ կամ ի ձեռն ո՞յր ու-

Պատասխանի առ վարդապետս Աղաւնայից: բ. Բ.—զոհոց. գ. Ա.—հեղցուցանելոյ, Բ.—հեղձուցելոյ: դ. Բ.—Յակովբա: ե. Բ.—աւրհնեալ: զ. Բ.—չիք: է. Ա.—անսվաղութեամբ: ը. Ա, Բ.—սրբուհոյն: թ. Ա.—ի վերա: ժ. Բ.—երեսացն: ժա. Ա.—մի ի: ժբ. Ա.— Նոյիմկարա:

* Պետք է լինի՝ տաւնի?

** Ձեռագրում՝ ծագման;

լոր և կամ և՛ բր. գոանի պատմութիւնդ մօտ ի Ձեզ. ի վանդ որ Զրվշտիկդ կոչի. մատ ի քաղաքիդ. որ Պարտաւդ անուանի: Ողջ լերուք ի Տէր. միշեա՛ զմեզ յաղօթս սրբութեանդ Ձերոյ»:

Այս գրության վերջին նախադասությունը արդեն կանոնավոր նամակի վերջավորություն է: Այս տեքստի օգնությամբ արդեն լրացվում, ամբողջանում և հասկանալի են դառնում առաջին՝ համառոտ տարբերակի ադճատված մասերը: Թեև այս տեքստի վերնագիրը չի թելադրում, թե ում է ուղղված այն, սակայն վերջին նախադասությունները անաստարկելիորեն վկայում են, որ այն ուղղված է Աղվանից վարդապետներին, երբ ասում է, թե Աստվածածնոր պատկերի պատմությունը գտնվում է «մօտ ի Ձեզ, ի վանդ որ Զրվշտիկդ կոչի. մատ ի քաղաքիդ, որ Պարտաւդ կոչի»: Արդ, թե՛ Զրվշտիկ վանքը և թե՛ Պարտավը գտնվում էին Աղվանից աշխարհում: Սակայն և պետք է նշել, որ նամակի վերջին բառերը՝ «միշեա՛ զմեզ յաղօթս սրբութեանդ Ձերոյ» ենթադրել են տալիս, որ նամակի ընկալողը ոչ թե մի քանիսն են, այլ մեկը, այն էլ բարձրաստիճան եկեղեցական:

Որքան էլ որ այս ընդարձակ տարբերակը ամբողջական տեսք ունի համառոտի նկատմամբ, այնուամենայնիվ այն չի կարելի ամբողջական և նախնական օրինակը համարել: Բանն այն է, որ մեզ հաջողվեց գտնել նաև Ստ. Սյունեցու՝ Աղվանից ուղղած թղթի մի երրորդ տարբերակ, Մատենադարանի Խմ. 1216 ձեռագրում (էջ 217ա—բ), գրված 1283 թ.-ին, անվերնագիր, որի մեջ կան մի քանի տարբեր, որոնք բացակայում են նախորդ երկու տարբերակներում, իսկ որոշ կետերում էլ այն տարբերվում է վերջիններից:

Այս տարբերակում Ստ. Սյունեցու թղթից առաջ դրված է այդ թղթի գրության պատմությունը, որ և մեջ է բերված մի հատված Ստ. Սյունեցուն ուղղված նամակից, որի պատասխանն է հանդիսանում Սյունեցու՝ Աղվանից ուղղած թուղթը, թեպետև այստեղ Սյունեցուն հարցում անողը ոչ թե Աղվանից վարդապետներն են, այլ՝ Հայոց: Այնուամենայնիվ, այս տեքստը նույպ ամբողջական է նախորդ ընդարձակ տարբերակից:

Ստորև բերում ենք Սյունեցու՝ Աղվանից ուղղած թղթի երրորդ տարբերակը.

«Յետ ամենայն հարցմանց վարդապետաց Հայոց ընդ մեծ իմաստասէրն Հայոց տէրն Մանեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս. յաւելին և զայս հարցանել. «Ո՛վ մեծ լուսաւորիչ և ակն պատուական տանս Թորգոմեան, որ զիմաստն անգիտութեան հալածեցեր յաշխարհէս և լցուցեր զամենիսեան լուսով գիտութեան: Աղաչեմք զքեզ. զի գրով պատուական աչոյ և աշխատասէր մատանց Ձերոց առանդեսցես մեզ. եթէ ո՛յր են պահք առաքելադիրք. կամ թէ ո՛ր են եղեալ վարդապետացն Յունաց. և կամ այլոց վարդապետացն»: Եւ նա գրով յայտ արարեալ. եթէ բայտնի և անվրէպ վարդապետութեամբ հաստատեցաք. եթէ՝ Սկիզբն ամենայն պահոց է ուրբաթն և չորեքշաբաթն՝ կարգեալ յառաքելոցն սրբոց: Եւ պահք քառասներորդացն ի նոցունց իսկ յառաքելոցն սրբոց և ի Յակոբայ արդարոյ հաստատեալ է: Եւ պահք Ծնունդեանն Տեառն ի մեծէն Կիւրղէ յերուսաղէմի հայրապետէն հաստատեցաւ ամենայն երկրի: Եւ պահք Սրբոյ Աստուածածնին յառաքելոցն սրբոց կարգաւորեցաւ ինն աւր. բանզի ասէին եթէ զինն աւր կացին ի պահս և յաղաւթս ընդ Տիրամարն: Իսկ կին մի ի սպասաւորաց Տիրամարն. անուամբ կնոջն Նոյի Մամբազայ. երթեալ ընդ սրբոյ առաքելոցն Թումայի ի Հնդիկս և անդ երեսուն աւր պահէր զպահս Աստուածամարն: Բանզի ասէր. եթէ երեսուն աւուրբք յառաջ քան զփոխումն [է]ան նա հրաման ի հրեշտակէն և անաւաղ պահեաց: Ուստն ամենայն կանայքն Հնդկաց և երեսուն աւր պահեն մինչն ցայսաւր // ժամանակի: Բայց զպատկեր Տիրամարն տարե[ա]լ հանգուցաւ Ձեռամբ առաքելոյն Բարթողոմէոսի յաշխարհն Անձնացէց. ի տեղին որ կոչի Հոգեաց վանք: Զոր յետոյ մեծն Ներսէս եկեալ ի Հայս և զամենայն բարեկարգութիւն յարինեալ յաշխարհիս՝ Ժողովեալ զամենայն բոլոսս աշխարհիս և տարեալ ի պատկեր Տիրամարն՝ դեղ բժշկութեան գտանել անդ. բարեխաւսութեամբ իսկուտ[ւ]ոյն և Աստուածածնին: Եւ հրամայէ ամենայն աշխարհիս ամ յամէ անդ ժողովել. արանց և կանանց. ծերոց և տղայոց. և մեծաւ փափագանաւք զիշատակս նորա կատարեալ՝ ի փառս և ի գովութիւն Աստուծոյ. որում փառք յաւիտեանս. Ամէն»:

Քննելով Ստ. Սյունեցու՝ Աղվանից ուղղած թղթի երեք տարբերակները կատարվածքային տեսակետից՝ ունենում ենք հետևյալ պատկերը.

Առաջին համառոտ տարբերակը մի մասանի է և բովանդակում է առաքելական պահքերի հիմնադրման պատմությունը:

Երկրորդ՝ ընդարձակ տարբերակը բաղկացած է երկու մասից և վերջաբանից: Առաջին մասը վերաբերում է առաքելական պահքերին, իսկ երկրորդը՝ Աստվածածնի պատկերի պատմությունն է:

Երրորդ տարբերակը եռամաս է՝ թղթի գրության պատճառը, պահքերի մասը և Աստվածածնի պատկերի պատմությունը:

Այժմ քննենք ամեն մի մաս առանձին-առանձին:

*
* *

Ա.—Երեք տարբերակներում էլ առկա է պահքերի հաւուածը, թեպետև նկատելի տարբերություններով:

Սյունեցու՝ Աղվանից ուղղած թղթում խոսվում է հետևյալ պահքերի մասին.

ա.—**Ուրբաթ և չորեքշաբթի օրերը.**—Երեք տարբերակներն էլ նշում են, որ այս օրերի պահեցողությունը հաստատվել է առաքյալների կողմից և ըստ Ա և Բ տարբերակների՝ հեթանոսական կուռքերին մատուցվող զոհերից հեռու մնալու նպատակով:

բ.—**Քառասնորդական պահք.**—Երեք տարբերակներն էլ նշում են, որ այս պահքը նույնպես հաստատվել է առաքյալների կողմից, իսկ Գ տարբերակը առաքյալների կողքին ավելացնում է նաև «և ի Յակովբայ արդարոյ»: Ըստ Ա և Բ տարբերակների՝ այս պահքը նույնպես հաստատվել է հեթանոսական կուռքերին մատուցվող զոհերից հեռու մնալու նպատակով:

գ.—**Վարդավառի պահք.**—Ըստ Ա և Բ տարբերակների՝ հաստատվել է Հակոբոս առաքյալի կողմից:

դ.—**Սուրբ Նշանի պահք.**—Ըստ Ա տարբերակի՝ հաստատվել է առաքյալների կողմից, սակայն ավելի հավանական է թվում Բ տարբերակի տեղեկությունը, ըստ որի հաստատվել է Կյուրեղ Երուսաղեմացու կողմից, քանի որ Ա տարբերակի այդ հատվածը աղավաղված է թվում:

ե.—**Աստվածածնի պահք.**—Երեք տարբերակներն էլ վկայում են, որ այս պահքը հաստատվել է առաքյալների կողմից: Ըստ Ա և Բ տարբերակների՝ Աստվածածնի փոխումից առաջ բոլոր առաքյալները հավաքվեցին Ս. Կույսի մոտ և ուրբաթ օրվանից մինչև հաջորդ ուրբաթ պահք պահեցին: Ըստ Գ տարբերակի առաքյալները կարգավորեցին այս պահքը՝ 9 օր պահելու համար:

զ.—**Աստվածածնի երեսնօրյա պահք.**—Համաձայն երեք տարբերակների էլ, Աստվածածնի սպասավորներից մեկը՝ Նոյեմվարա կամ Նոյիմամրապա անունով մի կին, Թովմա առաքյալի հետ գնում է Հնդկաստան և այնտեղ 30 օր Աստվածածնի պահք պահում՝ պատճառաբանելով, թե Ս. Կույսը իր փոխումից առաջ 30 օր պահք պահեց, ըստ Գ տարբերակի՝ հրեշտակի հրամանով: Եվ Հնդկաստանի կանայք էլ սովորեցին պահել 30 օր:

է.—**Տիրոջ ծննդյան պահք.**—Հաստատվել է Կյուրեղ Երուսաղեմացու կողմից՝ ըստ Գ տարբերակի:

ը.—**Ս. Գևորգի պահք.**—Հաստատվել է Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից՝ ըստ Բ տարբերակի:

*
* *

Բ.—Աստվածածնի պատկերի պատմությունը առկա է Բ և Գ տարբերակներում: Պատկերի ստեղծման պատմությունը կա միայն Բ-ում, ըստ որի առաքյալները, որպեսզի Ս. Կույսի վերափոխումից հետո չզրկվեն նրա սուրբ դեմքի տեսողությունից, աղաչում են Ս. Կույսին, որ փայտեղեն անոթը իր դեմքին դնի, որի հետևանքով Ս. Կույսի պատկերը տպվում է այդ փայտի վրա: Ըստ Բ տարբերակի՝ այդ պատկերը Ս. Թադևոս և Ս. Բարթողիմեոս առաքյալները բերում են Հայաստան և պահում իրենց մոտ, մինչև իրենց նահատակվելը, որից հետո պատկերն անհայտանում է և միայն 266 տարի անց, Տրդատի 15 տարի թագավորելուց հետո, հայտնվում է այն «սքանչելի լուսոյ ծագմամբ» Անձևացյաց գավառի Ոգյաց վանք կոչված տեղում, ուր և շտապում է Ս. Գրիգոր Լուսավորիչը և կառուցում Ս. Աստվածածնի եկեղեցին:

Գ տարբերակում ոչ մի խոսք չկա Աստվածածնի պատկերի անհայտացման և հրաշքով վերստին գտնվելու մասին: Ըստ այդ տարբերակի՝ Տիրամոր պատկերը Ս. Բարթողիմեոս առաքյալը բերում և հաստատում է Անձևացյաց աշխարհի Հոգյաց վանք կոչված տեղում: Գ տարբերակում կա մի հետաքրքիր նորություն. Մեծն Ներսեսը հավաքելով բորոտներին՝ բերում է Տիրամոր պատկերի առջև՝ Աստվածածնի բարեխոսությամբ բժշկվելու համար: Մեծն Ներսեսը նաև հրամայում է, որ ամեն տարի այնտեղ հավաքվեն արք և կանայք, ծերք և տղայք՝ Ս. Կույսի հիշատակը տոնելու համար:

Մեկ համար կարևոր նշանակություն ունի Ստեփանոս Սյունեցու այն վկայությունը, թե Հոգյաց վանքի Աստվածածնի պատկերի հայտնվելու պատմությունը գտնվում է Ջըրվըշտիկ վանքում:

Հոգյաց վանքի Աստվածածնի պատկերի պատմությունը հայ մատենագրության մեջ հայտնի է Մովսես Խորենացու անունով մեկ հասած «Պատասխանի թղթոյն Սահակայ յորում եւ բանք մարգարէականք եւ վասն փոխման Աստուածածնին թէ որպէս եղեւ կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն եւ թէ յոյր ծեղն և վինչ եղեւ պատճառք խնդրոյն կամ թէ յումմէ բերաւ ի Հայս» գրությամբ[12]:

Ա. Մ. Գարագաշյանը, քննելով այս գրու-

[12] Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 283—296;

թյանը, նկել է այն եզրակացության, թե «Աբա առասպելական գրուած, առ հասարակ ծանօթ լինելն թղթոց Խորենացոյ առ Սահակ Արծրունի՝ է գործ անվաներ...[13] հետևապես թղթոյն չէ ոչ յառաջ և ոչ յետոյ քան զԺ դար...[14] Բայց նպաստ խարէութիւնն, որ սովորական էր հին եկեղեցական մատենագրութեան՝ կը թելադրէ անանուն ոմանց գրել Ժ դարուն, թերևս վկայաբանութենէ (վէպ) ուստեք կամ առասպելէ առնելով՝ գաղտնութիւն պատկերին Հոգեաց վանուց...»[15]:

Արիստակես եպս. Սեդրակյանը իր «Հայաստանեայց Եկեղեցու պատկերագրութիւնը» գրքում, խոսելով նույն գործի մասին և քննելով դրա գոյության թվականի հարցը, եզրակացնում է, թե «անկասկած է, որ Կեղծ-Խորենացին գրել է թուղթը 786 թ. հետո և 859-ից հառաջ»[16]:

Եթե ըստ Ա. Մ. Գաբրագաշյանի՝ «Նպատակ թղթոյն կը թուի թէ էր ցուցնել պերկիրն Անձևացեաց իբրև ասպարէզ առաքելութեան Բարթողիմէոսի»[17], ապա ըստ Արիստակես եպս. Սեդրակյանի՝ «Նպատակը միմիայն կեդրոնանում է Հոգեաց վանքի առաքելահաստատ լինելու նախապատվությունն և նրա պատկերը առաքելական ծագումն և հնաոտուծ ստացած սքանչելաբարոյ կորոյությունն ապացուցանելու վրա»[18]:

Մեր նպատակը չէ այստեղ քննել Խորենացու անունով մեզ հասած այս գործի հեղինակային պատկանելության և թղթի գրության թվականի հարցերը:

Սակայն Ստեփանոս Սյունեցու՝ Աղվանից ուղղած թուղթը մեզ հնարավորություն է ընձեռում խոսելու մի կարևոր հարցի մասին: Արիստակես եպս. Սեդրակյանը Խորենացու անունով մեզ հասած թուղթը համարելով 8—9-րդ դարի գործ՝ փորձում է այդպիսով մի կողմից մերժել Հոգեաց վանքում գտնված Աստվածածնի պատկերի հնագույն ծագումը և մյուս կողմից ապացուցել Հայ Եկեղեցու պատկերամարտական դիրքորոշումը: Հետևաբար, Սյունեցու՝ Աղվանից ուղղած թուղթը մի թանկագին փաստաթուղթ է վերոհիշյալ երկու հարցերի վերաբերյալ:

Համեմատելով Ստեփանոս Սյունեցու և Մովսես Խորենացու անունով պահպանված վերոհիշյալ թղթերը՝ նկատում ենք նախ և առաջ դրանց սերտ կապը: Այսպես, մի շարք մտքեր և նախադասություններ համընկնում են միմյանց, ինչպես, օրինակ.

Մովսես Խորենացի	Ստեփանոս Սյունեցի
Յովհաննէս ընդ այլ առաքեալսն աղաչէր զՏիրամայրն՝ դնել զփայտեղէն անօթն ի վերայ աստուածատիպ երեսաց իւրոց...[19]	**Ա տարբերակ** և ապա զփայտեղէն անաւթն եդ ի վերայ երեսաց իւրոց, աղաչանաւք սուրբ առաքելոցն...
Խորհեցեալ այնուհետև և Յովհաննու ընդ այլ առաքեալսն աղաչել զՏիրամայրն իւրեանց, դնել զփայտեղէն անօթն ի վերայ աստուածատիպ պատկերին իւրոյ...[20]	**Բ տարբերակ** և ապա եդեալ անօթ փայտեղէն ի սուրբ դէմսն իւր սրբուհւոյն՝ աղաչանօք սրբոց առաքելոցն...:

Եվ կամ՝ Մովսես Խորենացու անվամբ մեզ հասած թղթում Ս. Կույսի պատկերը ներկայացված է իբրև դեղ և բժիշկ բորոտության. «և բորոտք, որ էին ի քաղաքին, զայն սո առաքեալսն և օծանէին իւղով, և տեառնագրէին սուրբ պատկերսն, և առժամայն բժշկէին յախտից»[21]:

Ստեփանոս Սյունեցու թղթի Գ տարբերակում նույնպես Աստվածածնի պատկերը ներկայացված է իբրև բորոտության հիվանդության բժիշկ. «Զոր յետոյ մեծն Ներսէս... ժողովեալ զամենայն բորոտս աշխարհիս և տարեալ ի պատկեր Տիրամայրն՝ դեղ բժշկութեան գտանել անդ»:

Ակնառանելի պետք է նշել, որ այս երկու թղթերի միջև եղած տարբերությունները ավելի շատ և հատկանշական են, քան նմանությունները. այսպես, օրինակ.

Մինչ Խորենացու անվամբ մեզ հասած թղթում Աստվածածնի պատկերը կիպարիս փայտի վրա նկարում է Հովհաննես առաք-

---

[13] **Ա. Մ. Գաբրագաշեան.** Քննական պատմութիւն հայոց, մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 84:

[14] Անդ, էջ 87:

[15] Անդ, էջ 88:

[16] **Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեան.** Հայաստանեայց Եկեղեցու պատկերագրութիւնը, մասն Ա, Ս.—Պետերբուրգ, 1904, էջ 190:

[17] **Ա. Մ. Գաբրագաշեան,** անդ, էջ 80:

[18] **Արիստակէս Եպս. Սեդրակեան,** անդ, էջ 185:

[19] **Ա. Մ. Գաբրագաշեան,** անդ, էջ 32:

[20] **Մովսէս Խորենացի,** անդ, էջ 290—291:

[21] Անդ, էջ 293:

յալը[22], ապա ըստ Ստ. Սյունեցու թղթի (Բ տարբերակ), երբ առաքյալները փայտը դնում են Աստվածածնի դեմքին, նրա վրա տպվում է Աստվածածնի նկարը: Այսինքն, ըստ Ստ. Սյունեցու թղթի, Հոգյաց վանքի Աստվածածնի պատկերը անձեռագործ է:

Ստ. Սյունեցու թղթի Բ տարբերակը խոսում է Ս. Թադևոս և Ս. Բարթուղիմեոս առաքյալների մահից հետո Աստվածածնի պատկերի անհայտացման և միայն 266 տարի հետո, Ս. Գրիգոր Լուսավորչի օրոք, նրա գյուտի մասին, մի յուրահատուկ տարր, որ չկա ո՛չ Մովսես Խորենացու անունով մեկ հասած թղթի և ո՛չ էլ Սյունեցու թղթի Գ տարբերակի մեջ:

Այս և նույնպիսի նմանությունները և տարբերությունները վկայում են, որ թե՛ Մովսես Խորենացու անունով մեկ հասած թուղթը և թե՛ Ստ. Սյունեցու՝ Աղվանից ուղղած թուղթը իբրև աղբյուր ունեցել են մի շատ ավելի հին գրություն: Արդեն Ստ. Սյունեցին իր թղթում (Բ տարբերակ) վկայում է այդպիսի մի գրության մասին:

Հետևաբար, անկախ այն հարցից, թե Մովսես Խորենացու անվամբ մեկ հասած թուղթը ո՞ր դարի գործ է, միանգամայն բացահայտ է, որ Հոգյաց վանքի Աստվածածնի պատկերը գոյություն է ունեցել Ստ. Սյունեցուց դեռ շատ առաջ: Հոգյաց վանքի Աստվածածնի պատկերի պատմության մասին խոսելիս մնում է պարզել մի այլ հարց:

Որտեղի՞ց կարող էր Ստ. Սյունեցին իմանալ, որ Աղվանքի Ջրվշտիկ վանքում կար Աստվածածնի պատկերի գյուտի պատմությունը:

Նախ՝ նա կարող էր այցելած լինել այդ վանքը և տեղում տեսնել այն: Այս անշուշտ անհավանական չէ, սակայն այդ մասին ոչ մի պատմական փաստ չունենք:

Երկրորդ՝ որևէ մեկը կարող էր Ջրվշտիկ վանքից գալ Ստ. Սյունեցու մոտ և նրան ասած լինել նման մի պատմության գոյության մասին:

Սակայն մենք ավելի հավանական ենք համարում մի այլ լուծում:

Ստ. Սյունեցին, ըստ Ստեփանոս Օրբելյանի, Դվինի Հայոց Կաթողիկոսարանում նախնական կրթությունն ստանալուց հետո, գնացել է Մաքենացվոց վանք և ուսանել. «Եւ յետ լնլոյ հասակին... գնայր ի համբաւատենչ և մեծասքանչ հանդիսարանն, ի հրեշտակերամ կրօնաստանն սուրբ և յԱստուածաբնակ առաքինարանն Մաքենոցաց, առ աստուածապգեաց սերոբէատիպ հարանց հայրն Սաղոմ... Եւ անդ տուեալ կանձն ի մեծամեծ աքնութիւնս և յանըմբերելի վարս մշտաջան առաքինութեանց...»[23]:

Օրբելյանի մեկ այլ վկայության համաձայն, երբ 727/728 թ. Մրվանի զորավարներից Բաբան պարսիկը ասպատակում է Գեղարքունիքը և ավերում «զհռչակելի ուխտն Մաքենոցաց... կրօնաւորքն նախիմաց եղեալ և յերկուս բաժանեալ՝ կէսքն գնացին ընդ հօրն Սաղոմի, ոչ առաջնոյն որ հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին աշակերտին, ի գաւառն Շիրակայ, ի սուրբ ուխտն Զրեսկ. յորում պայծառանայր սոյն այս Սաղոմն ճգնութեամբ սիւնամուտ լեալ: Եւ կէսքն գնացին ի յԱղուանս առաջնորդ կալեալ զմի ոմն յեղբարցըն՝ բնակեցան ի Միհր-Ներսէհեայ վանքն որ է Ջրվշտիկ»[24]:

Արդ, այս դեպքից մեկ-երկու տարի հետո Ստ. Սյունեցին դառնում է Սյունյաց աշխարհի միտրոպոլիտ: Հետևաբար, նա Մաքենացվոց վանքում ուսանած տարիներին կարող էր տեսած լինել Տիրամոր պատկերի պատմությունը այդ վանքի ձեռագրերում, որոնք և այդ վանքի վանականները իրենց հետ տարել էին Ջրվշտիկ վանք:

Կարծում եմ, ավելորդ չի լինի այստեղ նշել նաև, որ Ջրվշտիկ վանքը, որ կոչվել է նաև Ներսմիհրի կամ Եղիշե առաքյալի վանք, Ե դարից սկսած եղել է Աղվանքի նշանավոր վանքերից մեկը, իսկ Է դարի Բ կեսին և Ը դարի սկզբին դարձել Աղվանքի առաջին վանքը և, կարելի է ասել՝ Աղվանից Կաթողիկոսության գրապահոց-արխիվը[25]:

*
* *

Գ.—Մնում է մեկ խոսել Ստ. Սյունեցու՝ Աղվանից ուղղած թղթի երրորդ մասի՝ թղթի գրության պատճառը պարունակող հատվածի մասին, որ կա միայն Գ տարբերակում:

Այս հատվածում հիմնական հարցն այն է, որ Սյունեցուն դիմողները ոչ թե Աղվանից վարդապետներն են, այլ՝ Հայոց:

Վստահաբար կարող ենք ասել, որ սա թյուրիմացություն է, քանի որ թղթի բոլոր տվյալները վկայում են, որ այն ուղղված է Աղվանից վարդապետներին և կամ Աղվանքի մի բարձրաստիճան եկեղեցականի:

[22] Անդ, էջ 290:

[23] Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 132:

[24] Անդ, էջ 159:

[25] **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 300, 303—304, 309 և այլն:

Տե՛ս նաև **Մակար եպս. Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, Ա հտ., Վաղարշապատ, 1902, էջ 51, 52, 58, 59, 61, 86, 120 և այլն:



ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1956—1980)*

Գ. Մայր տաճարի վերանորոգման աշխատանքները սովետական ժամանակաշրջանում

Մի նոր, բախտորոշ դարաշրջան բացվեց բազմատանջ հայ ժողովրդի համար, երբ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր: Ֆիզիկական վերջնական բնաջնջման եզրին կանգնած հայ ժողովուրդը, բուժելով եղեռնի, գանգվածային տեղահանության, առաջին աշխարհամարտի ու քաղաքացիական կռիվների և դրանց հետևանքով առաջացած սովի ու համաճարակների պատճառած ծանր վերքերը, գոյատևման ու ազգային վերածնության լուսավոր ուղին բռնեց:

Ապատագրված ժողովուրդը տեր կանգնեց իր հոգևոր և նյութական գանձերին, դրանք դարձրեց պետական հոգատարության առարկա: 1923 թ. կազմակերպվեց Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտե, որի գլուխ կանգնեց սովետահայ ճարտարապետության հիմնադիր, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը: Վերջինս իր շուրջը համախմբելով հայ ազգային մշակույթի ակնառու գործիչներ Թորոս Թորամանյանին, Մարտիրոս Սարյանին, Աշխարբեկ Քալանթարին և ուրիշների, մեծ եռանդով ձեռնամուխ եղավ դարերի ընթացքում անխնամ մնացած հայրենի հնությունների պետական պահպանությունը կազմակերպելու գործին:

Հոգատարությունը պատմա-ճարտարապետական հուշարձանների նկատմամբ բնականաբար իր ոլորտն ընդգրկեց նաև հայոց հնագույն եկեղեցին՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարը:

Գևորգ Զ կաթողիկոսի գահակալության տարիներին (1945—1954 թթ.) Ս. Էջմիածնի Մայր Աթոռն ապրեց բարգավաճման մի նոր շրջան: Լուսավորչաշեն հնամյա տաճարի հիմնական վերանորոգման հարցը նորից առաջ քաշվեց:

Նախապատրաստական աշխատանքներ

Մայր տաճարի վերանորոգման գործի կազմակերպման ընդհանուր պատասխանատվությունը դրվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ճարտարապետության գործերի վարչության և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի վրա:

Նախապես քննարկման ենթարկվեց վերանորոգման և բարեկարգման աշխատանքների ընդհանուր ծրագիրը: Դրան էր ելիրված ճարտարապետության գործերի վարչության 1954 թ. ապրիլի 19-ին կայացած ընդլայնված նիստը, որին մասնակցեցին, բացի խորհրդի անդամներից, Կոստանդին Հովհաննիսյանը, Մարտիրոս Սարյանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, գրողներ Դերենիկ Դեմիրճյանը և Ստեփան Զորյանը, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Հրաչյա Գրիգորյանը, հնագետ Կարո Ղաֆադարյանը, նկարիչ Գաբրիել Գյուրջյանը, ճարտարապետ Լի-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թ. № № ԺԱ–Ժ-ից:

պարիտ Սադոյանը և ուրիշներ (տես Էջմիածնի Մայր Աթոռի շին. գրասենյակի արխիվ, գործ 16, 46—50 թթ.):

Սույն նիստում ընդունվեց Մայր Աթոռի բարեկարգման, Մայր տաճարի և հին Վեհարանի վերանորոգության վերաբերյալ ընդհանուր ծրագիր: Մայր տաճարի վերանորոգման ծրագրի մեջ կարևոր տեղ էր հատկացվել Մայր տաճարի Հովնաթանյան որմնանկարների վերականգնման և լրացման աշխատանքներին: Սույն կարևոր և պատասխանատու գործը հանձնարարվեց Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի պետական պատկերասրահի հինհայկական կերպարվեստի բաժնի վարիչ Լիդիա Ալեքսանդրովնա Դուրնովոյին:

1954 թ. մայիսի 9-ին վախճանվեց Գևորգ Զ. կաթողիկոսը: Սեղանի վրա դրվեց Էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման և նոր կաթողիկոսի ընտրության հարցը: Այս պատճառով սահմանված խիստ կարճ ժամկետում շինարարական-վերանորոգչական աշխատանքները նոր թափ ստացան (տես այս մասին «Էջմիածին» ամսագիր, 1955, մայիս, էջ 27, «Մայր տաճարի վերանորոգման աշխատանքները» հոդվածը):

1954 թ. նոյեմբերից մինչև 1955 թ. հոկտեմբերը Հայաստանի բարեխնամ կառավարությունը Մայր Աթոռի բարեկարգման և Մայր տաճարի վերանորոգման համար ներդրեց շուրջ 4 միլիոն ռուբլի (հին արժեչափով):

Գևորգ Զ կաթողիկոսի մահից հետո Մայր տաճարում շարունակվեցին շինարարական աշխատանքները. այն է՝ տանիքի կտուրի բոլոր լանջերի թիթեղապատում, մույթերի և կամարների ամրացում: Զուգահեռաբար նորոգվեցին վանգակատան աշտարակի ներսի և հին Վեհարանի ծաղկյա դահլիճի որմնակարդերը և հիմնովին վերակառուցվեց Մայր տաճարի էլեկտրական լուսավորման համակարգը:

Մայր տաճարի վերանորոգման և Մայր Աթոռի շրջապատի բարեկարգման աշխատանքները Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության շրջանում

1955 թվականի սեպտեմբերի 30-ին Ս. Էջմիածնում գումարվեց Ազգային-եկեղեցական ժողով նոր կաթողիկոսի ընտրության համար: Ազգային-եկեղեցական սույն ժողովը բացառիկ մի ժողով հանդիսացավ իր ներկայացուցչական բնույթով և պատգամավորների մեծ թվով, որոնք եկել էին ներքին և արտասահմանյան տարբեր թեմերից՝ արտահայտելու համար հայրենի երկրի և սփյուռքի հայ ժողովրդի ցանկություններն ու իղձերը նոր կաթողիկոսի ընտրության կապակցությամբ:

Ժողովը խանդավառ մթնոլորտում և ձայների ջախջախիչ մեծամասնությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանին:

Հայոց Հայրապետի ընտրությունն ու գահակալությունը հանդիսացավ մեր ազգային-եկեղեցական տարեգրության բացառիկ և անմոռանալի տարեթվերից մեկը:

Նորընտիր կաթողիկոսի ձեռնադրությունը և օծումը կատարվեց 1955 թ. հոկտեմբերի 2-ին, կիրակի օրը, համազգային մեծ շուքով և ավանդական հանդիսությամբ: Նորընտիր կաթողիկոսը 1955 թվականի դեկտեմբերի 1-ին գրեց իր անդրանիկ կոնդակը, որը, ըստ էության, նրա ապագա եկեղեցաշեն, կրթական, մշակութային և շինարարական գործունեության փայլուն և ընդարձակ ծրագիրն էր:

Հայրապետական իր անդրանիկ կոնդակում նորընտիր կաթողիկոսը իր ապագա շինարարական գործունեության մասին մեծ խանդավառությամբ և խոր հավատքով գրում էր. «Պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերապարդելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, որպիսիք են՝ Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Խոր-Վիրապը, Օշականը, Ս. Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կիանդիսանան և հռչակված տաճարները աղոթքի և ուխտի ու սփայլելի հուշարձանները հայ ճարտարապետության փառքի»:

Այդ նպատակով գահակալության հանդիսություններից անմիջապես հետո Վեհափառ Հայրապետը հղացավ, կազմեց ու գործադրության դրեց մի շարք հայ վանքերի և եկեղեցիների վերանորոգման ծրագրերը:

Մայր Աթոռում շուտով նոր թափ ստացան շինարարական աշխատանքները: Մայրավանքը դարձավ շինարարական մի մեծ հրապարակ: Այդ աշխատանքների շնորհիվ Մայր Աթոռն ստացավ իր այսօրվա արժանի շուքը, պատշաճ տեսքը, վանական ինքնամփոփ առանձնության հմայքը:

Հայոց Հայրապետի հրավերով Մայր Աթոռին առընթեր կազմվեց հայրենի անվանի ճարտարապետներից բաղկացած մի հանձնաժողով, որն ինքնաբուխ նվիրումով, հայրենանվեր գործունեության պայծառ գիտակցությամբ իր վրա վերցրեց պատմական վանքերի և եկեղեցիների վերանորոգչական-շինարարական մեծ աշխատանքների ընդհանուր վերահսկողությունը՝ մարմին տալու համար Հայոց շինարար Հայրապետի ծրագրերին;

Սույն հանձնաժողովը շատ հաճախ Վենափառում, Հայոց Հայրապետի նախագահության ներքո, նիստեր էր գումարում և ընկերակցում նրան՝ տեղում քննության առնելու համար որևէ պատմական վանքում կամ եկեղեցում կատարվելիք վերանորոգումները: Այս առթիվ Հայոց Հայրապետը կատարում էր օգտակար և շինիչ բեղադրություններ: Նա սիրում էր հաճախ հաստատել, որ իր «կյանքի ուղատակն իսկ է» մեր ճարտարապետական հայակաս կոթողների վերաշինությունը, որպեսզի «երապը անգամ մը ևս իրականություն դառնա»: Եվ Հայոց Հայրապետը անցնող 25 տարիների ընթացքում վերակառուցեց ու շինեց, «ինչ որ անցյալի մեջ չար ձեռքեր քանդեցին դարեր ու դարեր շարունակ»:

Տարիների ընթացքում ճարտարապետների հանձնաժողովի անդամներ եղան՝ ճարտ. Միքայել Մազմանյանը (Նախագահ մինչև 1971 թ.), ճարտ. Վարազդատ Հարությունյանը, ճարտ. Դավիթ Իսրայելյանը, հնագետ Կարո Դանիելյանը, ճարտ. Բաղդասար Արզումանյանը, նկարիչ Գրիգոր Խանչյանը, հնագետ Բարկեն Առաքելյանը, ճարտ. Ալեքսանդր Սահինյանը, ճարտ. Կոստանդին Հովհաննիսյանը, շինարար ինժեներ Կոստանդին Աբրամյանը և Մայր Աթոռի ճարտարապետ Արծրուն Գալիկյանը:

1971 թվականից սկսած ճարտարապետների հանձնաժողովի նախագահն է տողերիս հեղինակը:

Այս աշխատության նպատակից դուրս է թողել Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարիներին կատարված պատմական և հիշատակության արժանի այլ իրագործումների մասին: Սույն աշխատության նպատակն է Աննման Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ի գահակալության 25-ամյակի առթիվ հանդատակի, բայց ամբողջական ձևով ներկայացնել նրա շինարարական-վերանորոգչական փայլուն գործունեության պատկերը թե՛ Մայր Աթոռի շրջափակից ներս և թե՛ նրա սահմաններից դուրս:

Այս բոլորը վերաբերում է Ս. Էջմիածնի Մայր տաճարի հիմնական վերանորոգումների զուտ շինարարական կողմին: Դրանք հանդիսացան ծրագրված աշխատանքների առաջին և անհրաժեշտ փույթ և հիմք ծառայեցին հետագա միջոցառումների համար տաճարի ներքին բարեզարդման ու շրջապատի բարեկարգման ուղղությամբ, աշխատանքներ, որոնք ծավալվեցին հետագայում Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության առաջին իսկ տարիներից՝ 1956 թվականից:

Գեղումներ և հնագիտական հետազոտություններ Մայր տաճարում

Վենափառ Հայրապետի գահակալության առաջին տարիներից սկսած Մայր տաճարում կատարվեցին գեղումներ և հնագիտական հետազոտություններ:

Մայր տաճարի մույթերի ամրացման աշխատանքների ժամանակ, նրանց հիմքերի բացումից պարզվեց, որ գոյություն ունեցող խարիսխների տակ կան ավելի հին խարիսխներ: Այս հայտնագործությունն էլ թելադրեց անհապաղ գեղումներ կատարել, որի համար հրավիրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստների պատմության և տեսության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից, ճարտարապետության թեկնածու Ալեքսանդր Սահինյանը: Նա 1955 թվականի վերջերին ձեռնամուխ եղավ Մայր տաճարի շրջակայքի հնագիտական հետազոտություններին, որոնք շարունակվեցին նաև հաջորդ տարիներին:

Արդյունքներն իրոք հետաքրքրական եղան: Դրանց մասին Ալ. Սահինյանը «Էջմիածին» ամսագրում հանդես եկավ սկզբում նախնական հաղորդմամբ, ապա՝ ավելի ընդարձակ հոդվածով[24]: Հետագա տարիներին նա իր գիտական եզրահանգումները հրապարակեց նաև գիտական պարբերականներում[25] և գրքերում[26]:

Մայր տաճարի վերակառուցման աշխատանքներին զուգընթաց, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը 1955, 1956 և 1959 թվականներին ձեռնարկեց նոր գեղումներ, որոնց ընթացքում Մայր տաճարի այժմյան կառուցվածքի տակ հայտնաբերվեցին առավել հնագույն շենքի մնացորդներ:

Գմբեթակիր մույթերի խարիսխների տակ բացվեցին Էջմիածնի խարիսխներ, նրանց կից՝ նույն ժամանակաշրջանի սալահատակի մի քանի սալեր և խարիսխների հիմքերը, իսկ տաճարի այժմյան արևելյան ապսիդի ներսում՝ հնագույն ապսիդի մի քանի որմնաշարքեր:

---

[24] **Ալ. Սահինյան.** Նոր նյութեր Էջմիածնի Մայր տաճարի կառուցվածքի վերաբերյալ. «Էջմիածին», 1956, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 60—69, շարունակված նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 56—67:

[25] **Ալ. Սահինյան.** Էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տեսքը. «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 71—96:

[26] Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 115—122:

Համեմատելով բացված հնագույն խաչիսխների ձևերը բազիլիկատիպ եկեղեցիների (Քասաղ, Տեկոր և այլն) խաչիսխների ձևերի հետ՝ Ալ. Սահինյանը գալիս է այն եզրակացության, որ դրանք պատկանել են ոչ թե գմբեթակիր, այլ թաղակապ ծածկով բազիլիկ եկեղեցու: Հաջորդաբար վարգացնելով իր տեսակետը՝ նա առաջ է քաշում այն վարկածը, որ Ղազար Փարպեցու (հավանաբար այսպես ականատես, քանի որ վերանորոգումից հետո եղել է Էջմիածնի Մայր տաճարի վանահայրը) հիշատակությունը 480-ական թվականներին Վահան Մամիկոնյանի ձեռնարկած վերանորոգությունների մասին, պետք է հասկանալ այն իմաստով, որ նա հիմնովին վերաշինել է տվել տաճարը՝ տակին պահպանելով «հնացեալ գործք նախնեաց»-ը:

Այնուհետև, հանգամանորեն քննելով բացված հին մույթերի ու որմնամույթերի խաչիսխները ու հիմնվելով դրանց ձևերի վրա՝ Ալ. Սահինյանը անում է հետևյալ հիմնական եզրակացությունները.

ա. Էջմիածնի Մայր տաճարը ի սկզբանե եղել է ոչ թե խաչաձև հատակագծով գմբեթավոր շենք (ինչպես կարծել է Թ. Թորամանյանը), այլ՝ բազիլիկատիպ (համանման Քասաղի տաճարին):

բ. Մայր տաճարի այժմյան խաչաձև (դրսից ու ներսից) հորինվածքը ստեղծվել է ոչ թե Ներսես Գ Շինող կաթողիկոսի օրոք (7-րդ դարի կես) իրականացված վերանորոգումների ժամանակ, այլ դրանից շուրջ երկու դար առաջ՝ Վահան Մամիկոնյանի օրոք, 480-ական թվականներին:

գ. Հետևապես դեռ 5-րդ դարում Հայաստանում արդեն ստեղծվել էր կենտրոնագմբեթ, խաչաձև հատակագծով եկեղեցական շենքի հորինվածքը:

Նկատի ունենալով բացված հին խաչիսխների գիտական կարևորությունը՝ որոշվեց դրանցից մի քանիսը չծածկել ու դիտման համար պահպանել հաստապակյա հատակի տակ:

Ուրիշ կարգի հայտնագործություններ կատարվեցին 1959 թ., երբ Մայր տաճարի Ավագ խորանում պիտի տեղադրվեր նոր սեղան: Նախապես այստեղ ևս Ալ. Սահինյանի ղեկավարությամբ կատարվեցին պեղումներ, որոնց ժամանակ գտնվեցին ուրարտական ծագման վերագրվող որձաքարե մի կոթող և տուֆակերտ, մեծ չափերի վիմաքար: Շարունակելով պեղումները ավելի խոր շերտերում՝ հայտնաբերվեցին խաչանկարի, որմնանկարի ու ճարտարապետական բեկորներ, աբսիդի երկու անկյուններում նույն կարգի խաչիսխներ, որոնք հայտնաբերվել էին տաճարի մույթերի ու որմնամույթերի տակ: Առավել ամրապնդելու ու հետաքրքրականը եղավ մի նոր, ավելի հին աբսիդի պատերի ստորին շարքերի բացումը՝ կենտրոնում թոնրաձև, թրծված կավից պատրաստված կրակարանով[27]:

Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, 1959 թ. ապրիլի 8-ի իր նիստում, քննության առնելով պեղումների արդյունքները, արձանագրեց, որ դրանք գիտական տեսակետից խիստ կարևոր ու արժեքավոր լինելով՝ պիտի պահպանվեն: Այդ կապակցությամբ ձեռնարկվեցին կարևոր միջոցառումներ՝ պեղումներից հայտնաբերված նյութերը պահպանելու համար:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՁԱՆԳԱԿԱՏԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Մայր տաճարի երեք փոքր կաթողիկեները կանգնեցվել են հարավային, հյուսիսային ու արևելյան աբսիդների վրա 1682 թվականին, Եղիազար Այնթապցի կաթողիկոսի գահակալության օրոք[28]: Դրանցից հարավայինը փլվել է 1921 թվականի մարտի 21-ին վաղ առավոտյան:

Թ. Թորամանյանի 1923 թ. դեկտեմբերի 25-ին կազմած տեղեկագրում շարադրված են Մայր տաճարի համառոտ պատմությունն ու հարավային կաթողիկեի կործանման պատճառները և այդ կապակցությամբ ձեռնարկված միջոցառումները[29]:

Հուշարձանների հատուկ գիտա-արտադրական արվեստանոցին է հանձնարարվել Մայր տաճարի հարավային վանգակատան վերականգնման նախագծի իրականացումը:

1959 թ. գարունը բացվելուն պես ծավալվում են վերականգնման աշխատանքները, որոնք ավարտվում են նույն տարվա աշնանը՝ կազմելով Ս. Էջմիածնի Մայր Աթոռի վերաշինական բեղմնավոր գործունեության լուսագույն էջերից մեկը:

Թեև 1954—55 թթ. ընթացքում կատարվեցին Մայր տաճարի վերանորոգման ու պահպանության գլխավոր միջոցառումները, սակայն շինարարական աշխատանքները դրանով չսպառվեցին: Վազգեն Ա նորընտիր կա-

---

[27] Պաշտոնական հաղորդումը պեղումների մասին տես «Էջմիածին», 1959, մայիս, էջ 14:

[28] **Զաքարեա սարկաւագ**, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, գիրք Բ, գլ. ԾԲ, էջ 107:

[29] **Թ. Թորամանյան**, նյութեր. երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 61—66, «Էջմիածին», 1947, մայիս-հունիս, էջ 16—18:

բուլիկոսի գահակալության առաջին իսկ տարվանից դրանք շարունակվեցին: Այս առթիվ օգտագործվեցին ազգային մեծ բարերար Գալուստ Կյուլբենկյանի կուտակած նյութական միջոցները (շուրջ 400 հազար դոլարի չափով):

Երբ տաճարի մույթերի և կամարների ամրացումը ապահովեց նրանց հուսալի կրողունակությունը, ապա, ինչպես ցույց տվին կատարված հետազոտությունները, նույն կարգի միջոցառումների խիստ կարիք ունեին տաճարի պատերը, քանի որ դարերի ընթացքում կառույցի անուշադրության պատճառով ներծծված ջրերը լվացել ու քայքայել էին պատերի կրաբետոն միջուկն ու նրանցում առաջացրել դատարկություններ: Պատերի ներքին և արտաքին երեսապատումների կապը կրաբետոն միջուկի հետ վերականգնելու և նրանց մեբաին միաձույլ դարձնելու համար որոշվեց կիսասալ շաղախի ներարկում: Այն իրականացվեց պատերի մեջ տարբեր բարձրությամբ, ներքևից մինչև որմնապարզման սկզբի գծերը (ներսից) և քիվերը (դրսից) անցքեր բացելով ու դրանցով բարդ խառնուածքի (1 կիր, 1 ցեմենտ, 3 ավազ) հեղուկ շաղախ ներարկելու միջոցով: Դատելով հեղուկ շաղախի այն մեծ քանակությունից, որ պարտակեցին իրենց մեջ տաճարի պատերը, կարելի է եզրակացնել, թե ինչպիսի մեծ չափերի էին հասել դատարկությունները և որքան օգտակար եղավ այս միջոցառումը նրանց կրողունակությունը վերականգնելու տեսակետից:

Ներարկման համար պատերի ներսի երեսներից (որմնապարզերից ցածր) ծեփը հեռացնելիս, հյուսիսային պատի շարվածքի մեջ բացվեցին բավականաչափ լավ պահպանված փայտյա հակաերկրաշարժային գոտիներ (խալիթներ)[30], ինչպիսիք եկեղեցական հնագույն շենքերում մինչ այդ հայտնի էին միայն Տեկորի տաճարում: Զուգահեռաբար բացվեցին և ուսումնասիրվեցին տաճարի պատերի հիմքերը, ստորգետնյա ջրերի մակարդակն ու նրանց տատանումները[31]:

Մայր տաճարի կառույի թիթեղապատումը ևս հուսալի կերպով շենքն ապահովեց խոնավության ներծծումից, սակայն առաջացրեց գինկապատ թիթեղի աններդաշնակություն քարերի հետ: Անդրադառնալով գեղագիտական տեսակետից առարկություն հարուցող այդ ծածկանյութի հարցին, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովը, որի նիստին մասնակցում էին Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա և Գալուստ Կյուլբենկյան հաստատության ներկայացուցիչ ճարտարապետ Էդուարդ Ռեմուձանը, ընդունեցի հարեց վերջինիս առաջարկը՝ գինկապատ թիթեղը կապարի թիթեղով փոխարինելու մասին:

Կապարի թիթեղը արտասահմանից ստացվեցին և 1960—61 թթ. ընթացքում կառույի բոլոր լանջերը պատվեցին կապարի թիթեղով, որոնք փոխեցին ուղղակի քարե սալածածկի վրա:

Զուտ շինարարական բնույթի հաջորդ միջոցառումը հանդիսացավ տաճարի հատակի ամբողջական մարմարապատումը (բացի գրիչեթակիր մույթերի միջև ընկած գմբեթատան հարթությունից, որն արդեն մարմարապատված էր:

Մարմարապատումը կատարվեց Աղվերանի (Հայաստան) մարմարով. Այնուհետև տաճարի նեղսում կատարված աշխատանքները (որոնց կանդրադառնանք հաջորդաբար), հիմնականում բարեզարդման բնույթ կրեցին:

Մայր տաճարի Ավագ սեղանի վերակառուցումը

Ավագ խորանի նոր, երկաթբետոնյա հատակը կառուցելուն զուգընթաց Վեհափառ Հայրապետի պատվերով ճարտարապետ Ռաֆայել Խրայելյանը մշակում էր Ավագ սեղանի նախագիծը: Ներկայացված բազմաթիվ նախագծերից հավանության արժանացածը, ըստ հեղինակի մտահղացման, նեռամաս էր՝ բուսկացած պատվանդանից, բուն սեղանից և ուղղաձիգ վերնամասից: Հատակագծում մոտավորապես սեղանակերպ (հետնամասում 2,15 մ., առաջամասում 3,1 մ. լայնություն և 2,1 մ. ընդհանուր խորություն ունեցող) պատվանդանի արևմտահայաց ճակատի միջին մասը մշակված է կամարակապ 13 դեկորատիվ խորշերով, իսկ անկյունները՝ թեները խոնարհած արծիվների (որոնց մյուս թեները շրջանցում են կողքերի ճակատները) բարձրաքանդակներով: Բուն սեղանը քառաստիճան է (առաջին աստիճանը 0,65 մ., իսկ հաջորդները՝ 0,25 մ. լայնությամբ)՝ առաջին աստիճանի աջ և ձախ ծայրերին տեղադրված ութանիստ խաչակիր սյուներով: Սեղանի վերջին աստիճանը պսակող ուղղաձիգ, վերնամասում երկաստիճան ճակատնով ավարտվող հարթությունը երկու կողմից մշակված է կամարներով պսակված եռանկյունաձև խորշերով, իսկ Աստվածամոր պատկերը սանտիմետր համար նախատեսված սր-

[30] ՀՀԿ արձ-ներ, թ. 125:

[31] Ըստ ուսումնասիրության, գետաբարձից կառուցված հիմքերի խորությունը կազմում է 1,5 մ., տաճարի ներսի շրջանում ջուրը հատակից ցածր է 3,5 մ., բարձրացումը կազմում է 50—60 սմ. (տես նույն արձ-ները, թ. 125):

րանց միջև գտնվող հարթությունը վերնամասում ավարտվում է երկաստիճան կամարով:

Նախագծի վերջնական բարեփոխումներից հետո հեղինակը կազմեց բանվորական գծագրեր, որոնց համաձայն բոլոր տարրերի (բաղկացած 189 կտորից և 2 խաչակիր սյուներից) պատրաստումը պատվիրվեց Իտալիայում (Կարարայի մարմարից): Դրանք ստացվելուն պես, սկսվեց սեղանի հավաքումը, ըստ որում արծիվների և խաչերի քանդակները իրականացվեցին տեղում, ըստ քանդակագործ Արա Հարությունյանի պատրաստած գիպսե մոդելների: Այնուհետև, սեղանի վրա տեղադրվեց Վեհափառ Հայրապետի կողմից իտալահայ նկարիչ Գրիգոր Շիլդյանին պատվիրված Աստվածամոր պատկերը: Համաչափ ու ներդաշնակ, Աստվածամոր պատկերի հայկական ավանդական ձևերը նորովի մեկնաբանված ու գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված այս նկարը գոհունակությամբ ընդունվեց որպես տաղանդաշատ հեղինակի լավագույն ստեղծագործություններից մեկը:

Իջման սուրբ սեղանի վերակառուցումը

Հաջորդ կարևոր գործը Մայր տաճարի Իջման փայտակերտ սեղանի վերակառուցումն էր: Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի ճարտարապետ Ա. Գալիկյանին էր հանձնարարել Իջման նոր սեղանի նախագծի մշակումը: Վերջինիս կողմից 1959 թ. դեկտեմբերին ավարտված աշխատանքային գծագրերի համաձայն (որոնք ուղարկվեցին Իտալիա՝ մարմարյա քարերը պատրաստելու համար), սեղանի չորս պատերը պիտի ծածկվեին պատմա-կրոնական բովանդակություն ունեցող նկարներով:

1961 թ. Իջման սեղանի քանդակապարդման էսքիզների մշակումը հանձնարարվեց ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանին, որի ներկայացրած էսքիզը քննության առնվեց ու հավանության արժանացավ:

Ըստ Իջման սեղանի վերակառուցման նախագծի, Իջման սեղանը պետք է փոխարինվեր նորով՝ իր վրա պահպանելով մարմարակերտ սյունապարդ ամպիոնին (1682 թ.:) Հետագա քննարկումների ժամանակ վեճերի առարկա դարձավ ամպիոնու պահպանման նպատակահարմարությունը. նախ այն պատճառով, որ խարխլված էր ու ամրացման կարիք էր զգում, ապա նաև, որ տաճարի կենտրոնում տեղադրված լինելով, խանգարում էր դիտել Ավագ սեղանը: Դրանք նկատի առնելով, ամպիոնին հանվեց:

Կարևորություն տալով դրա պատմա-ճարտարապետական արժեքին, հետագայում այն տեղադրվեց Ս. Գայանեի եկեղեցու Ավագ խորանում: Նախագծով իրականացված Իջման նոր սեղանը մարմարակերտ է, ցածրանիստ ու խորանարդաձև: Հիմքի չափերն են՝ 0,83×1,16 մ., բարձրությունը՝ 1,17 մ. (արևելյան կողմում) և 0,89 մ. (արևմտյան կողմում): Նախորդի պես այն տեղադրված է տաճարի կենտրոնում, գմբեթի ճիշտ տակին, երկաստիճան նախկին հարթակի վրա: Սեղանի ծավալա-տարածական հորինվածքում ընդգծված է դիրքորոշումը դեպի տաճարի Ավագ սեղանը: Արևմտյան կողմից հարթ սեղանը արևելյան կողմից եռաստիճան է, որոնցից վերջինը պսակված է մարմարակերտ ցանցկեն կարդանախշով՝ կենտրոնում խաչ: Սեղանի բոլոր չորս պատերի վերնամասերը, ներառյալ նաև աստիճանավոր մասերը, ամբողջ պարագծով երիվված են հայաոճ նրբին կարդանախշերով ծածկված արծաթյա ժապավենով:

Այլ վերանորոգչական աշխատանքներ Մայր տաճարում

Ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով իրականացվեց նաև դասը ատյանից անջատող մարմարակերտ բապրիքի կառուցումը՝ բրոնզաձույլ դռնակներով, կենտրոնական, հարավային և հյուսիսային հատվածներում: Մայր տաճարի ներքին բարեկարգման մաս կազմեցին նաև բեմի նոր վարագույրը (ճարտ. Ա. Գալիկյանի էսքիզով), բյուրեղապակյա հինգ նոր ջահերը (բերված Չեխոսլովակիայից), պատուհանների երկաթյա վանդակները (նկարիչ Գ. Խանջյանի էսքիզով), դեպի տաճարի Ավագ խորանը տանող աստիճանների, ինչպես և թանգարանի սենյակների հատակների մարմարապատումը, հարավային և հյուսիսային խորաններում տեղադրված նոր սեղանները և Մկրտության նոր ավազանը (ճարտ. Ա. Գալիկյանի էսքիզով): Վերջինիս մեջ ամփոփված Քրիստոսի մկրտության պատկերով որմնանկարը գործն է նկարիչ Հովհաննես Մինասյանի:

Միևնույն ժամանակ, շարունակելով խնամքը տաճարի որմնանկարների և նկարների նկատմամբ, թարմացվեցին ու լրացվեցին 12 առաքյալների նկարները՝ ատյանի կենտրոնում գտնվող օնիքսյա պատին, մաքրվեցին նաև տաճարի պատերին կախված սրբանկարները և վերակախվեցին:

Սա է ոչ լրիվ թվարկումը տաճարի ներսում իրականացված բարեկարգման աշխատանքների:

(Շարունակելի)



ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

1918 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԱԿԻՑՆԵՐԸ

ՏԵՐ ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է Աշտարակի շրջանի պատմական Փարպի գյուղում 1871 թվականին: Սկզբնական կրթությունն ստացել է փարպեցի Առաքել վարդապետի մոտ: Որոշ ժամանակ գյուղի եկեղեցում կատարել է դպիրի պարտականությունը: Այնուհետև կրթությունը շարունակել է Գեորգյան ճեմարանում:

Ճեմարանը դեռ չավարտած՝ բախտը նրան գցում է Շուշի քաղաքը, որտեղ կատարելագործում է իր ուսումը, որից հետո տեղի դպրոցում տասը տարի պրաղվում է ուսուցչությամբ: Ամուսնանում և ունենում է հինգ աղջիկ:

1903 թվականին վախճանվում է Փարպի գյուղի քահանան: Գյուղի համայնքի որոշմամբ նրան Շուշիից ետ են կանչում և ձեռնադրում քահանա: Ուսումնասեր նորընծա քահանան առաջին հերթին գյուղի բոլոր երկսեռ մանուկներին ընդգրկում է դպրոցում, իսկ չքավորներին նյութական օգնություն է ցույց տալիս, որպեսզի դպրոցից դուրս չմնան: Ընտրվում է դպրոցի հոգաբարձու և միաժամանակ դասավանդում հայոց լեզու և կրոն: Դպրոցի ընդունակ սաներից կազմակերպում է երգեցիկ խումբ և մասնակից դարձնում եկեղեցու ամենօրյա ժամերգություններին:

1915 թվականի եղեռնից փրկվածներին Տեր Գրիգորը մեծ օժանդակություն է ցույց տալիս՝ մեծ մասամբ իր սեփական միջոցներից:

1918 թվականի մայիսի 18-ին թուրքական շարդարար բանակը տիրում է Շիրակի լայնածավալ դաշտերին և Արագածի հյուսիսային լանջերով հասնում Ապարանի սահմաններին:

Զարդերից փրկված Շիրակի ժողովրդի մի փոքրիկ մասը շնչասպառ իրեն գցում է Ապարան: Ապարանի ուղղությամբ թուրքերի հարձակման լուրը հասնում է նաև Փարպի գյուղը: Տեր Գեորգի մեջ վառվում է հայրենասիրական կրակը: Նա եկեղեցու զանգերի միջոցով տագնապ է բարձրացնում: Ժողովուրդը, վինված, հավաքվում է իր քահանայի շուրջը: Կարճ ու ոգևորիչ խոսքերով նա բացատրում է վտանգի մեծությունը: Ինքը սպառազինված, աշխարհազորային մեծ խմբով, հասնում է Բաշապարան: Գյուղի վերջում, մի քաց տարածության մեջ մեծ բազմություն էր հավաքված՝ մտավորականներ, պաշտոնյաներ, հոգևորականներ, գյուղացիներ և այլն: Նրանք վինված էին ով ինչով կարողացել էր:

Տեր Գեորգի խումբը ժողովրդական մյուս խմբերի հետ շտապ գալիս է Դանագիրսաղ և գրավում առաջավոր դիրքեր: Թշնամին մեծ ուժերով, թնդանոթներով ու գնդացիրներով սկսում է գնդակոծել աշխարհազորա-

* Վերջավորություն: Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի № № Ը—Թ-ից և 1983 թվականի № Ը-ից:

յինների դիրքերը: Հայ մարտիկները, լցված վրեժի ցասումով, հանուն սուրբ հավատի, հանուն հայ ազգի փրկության, կռվում են անձնապոհ կերպով՝ հաղթելու կամ մեռնելու գիտակցությամբ: Քասախ գետը խիստ վարարել էր: Բաշապարանից մի քանի կիլոմետր դեպի Դանաագիրմակ գտնվում էր Միրաքի կամուրջը, որի տակով անցնում էր Քասախը: Աշխարհազորայիններին հրաման է տրվում նահանջելու: Նրանք ետ են քաշվում և նոր, հարմար դիրքեր գրավում Միրաքի կամրջի շրջակայքում՝ թողնելով մի նեղ շերտ: Թշնամին, որ կրկնակոխ հետևում էր, կամրջի մոտ երեք կողմից ընկնում է կարկտաբեր համազարկերի տակ ու ջախջախվում:

Այդ կռվում թուրքական գոռոզ բանակի ջարդվելը մինչև հոգու խորքը վրեժի ցասումով լցված, սոված ու վատ վինված, բայց կազմակերպված աշխարհազորայինների փոքրաթիվ ուժերի կողմից կկազմի ժողովրդական պատերազմների պատմության ոսկե էջերից մեկը:

Միրաքի կամրջի տակ, ինչպես նաև հաջորդ օրը Բաշապարանի ու Մուլքի գյուղերի դիմացի ձորի մեջ թշնամու կրած պարտությունը Արագածի լանջերից դուրս են շպրտում նրան և ստիպում ամբողջ ճակատով նահանջել: Տեր Գևորգի և մյուս ժողովրդական խմբերն ու ողջ հայ բանակը պատրաստվում են երրորդ օրը թշնամուն հետապնդել մինչև Ալեքսանդրապոլ:

Կռիվը նորից է շարունակվում: Այս անգամ հայերն են գրոհում: Կարճ ժամանակում թշնամին ցույց է տալիս թիկունքը. ընկնում է խուճապահար փախուստը: Այդ ժամանակ է, որ երևում է Իսադ և Ջավիդ փաշաների պատվիրակությունը սպիտակ դրոշակով: Ապարանի ռազմաճակատի ընդհանուր զորահրամանատարն ընդունում է պատվիրակությանը: Պարզվում է, որ թուրքը վինադադար է խնդրում: Հենց նույն օրը կռիվը դադարեցվում է և վինադադար կընքվում: Աշխարհազորայինները փառքով և հաղթանակով վերադառնում են իրենց տները: Նրանք նորից լծվում են իրենց առօրյա աշխատանքներին:

Սակայն երկար չի տևում Տեր Գևորգի օրինակելի կյանքի ուղին: Նա մահանում է 1921 թվականի մարտի կեսերին:

Փարպի և շրջակա գյուղերի երիտասարդները իրենց քաջ և պանծալի քահանային մեծ հուզարկավորությամբ թաղում են Փարպի գյուղի գերեզմանատանը:

Տեր Գևորգ քահանայի անունը միշտ կմնա հայ ժողովրդի ազատագրական մարտերի պատմության մեջ:

ՏԵՐ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ծնվել է 1867 թվականին Կաղզվանի շրջանի Քերս գյուղում: Պապերը գաղթել են Արևմտյան Հայաստանից: Տոհմով եղել են հոգևորականներ: Նա տասը տարեկան էր, որ վախճանվեց հայրը: Նրա կրթության հոգսը ընկնում է մոր՝ Մարիամ Տեր-Գևորգյանի ուսերին, որը որդուն ընդունել է տալիս այդ ժամանակ գործող Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցը: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Գևորգյան ճեմարան: Հոր մահից հետո, 1896 թվականից, գյուղը հովվում էր Տաճկաստանից գաղթած Տեր Ղուկիանոս անունով քահանան: Ինքը դեռ ճեմարանը չավարտած՝ վախճանվում է նաև Տեր Ղուկիանոսը: Գյուղի համայնքը ճեմարանից ետ է կանչում նրան և 1907 թվականին ձեռնադրում քահանա: Նախքան քահանա ձեռնադրվելը նա ամուսնացել էր 25 տարեկան հասակում, ունեցել էր երկու տղա և երկու աղջիկ: Գյուղում Տեր Սարգիսը զբաղվում է հողագործությամբ: Որպես բազմակողմանի պատրաստված քահանա, նա գյուղում վայելում է ողջ հասարակության հարգանքը: 1915 թվականի եղեռնից փրկված գաղթականությանը ապահովում է բնակարանով և սննդամթերքով:

Տեր Սարգիսը մինչև 1915 թվականը հասարակական կարգով գյուղի հնգամյա դպրոցում դասավանդում է հայոց լեզու և կրոն:

Քերս գյուղը գտնվում էր տասը քրդական գյուղերի մեջտեղում: Տեր Սարգիսը նախազգալով ապագա վտանգի անխուսափելիությունը, կոչ է անում ժողովրդին զինվել: Մինչև 1918 թվականը ամբողջ գյուղը զինված, պատրաստ վիճակում էր: 1918 թվականի գարնանը օսմանյան բանակը, անցնելով հին ռուսական սահմանը, առաջ է շարժվում դեպի Ղարս՝ մեկը մյուսի ետևից գրավելով բնակավայրերը: Հարյուրավոր մոլորված քուրդ հրոսակախմբերից կազմված մի զորամաս, թուրք սպաների հրամանատարությամբ, երեք կողմից պաշարում է Քերսը: Նրանք վերջնագիր են ներկայացնում գյուղի բնակիչներին զենքը վայր դնել և անձնատուր լինել՝ խորամանկությամբ խոստանալով կամովին հանձնվելու դեպքում չկոտորել և չթալանել:

Տեր Սարգիսը նախ զինում է 700 տղամարդկանց, որոնք պաշտպանական դիրքեր են դարձնում խաղողի այգիների թմբերն ու հողե պարիսպները: Սննդամթերքի մեծ պաշարը թույլ է տալիս դիմանալ երկարատև պաշարման:

Տեր Սարգիսը, նախքան թուրքերին

վերջնական պատասխան տալը, գյուղի մեծահասակ ու փորձված մարդկանց խորհրդակցության է հրավիրում: Փոքրամասնությունը նախապատվությամբ է գտնում հանձնվել, իսկ Տեր Սարգիսը և մեծամասնությունը որոշում են կռվել, դիմադրել մինչև վերջ: Ու վերջնագիրը մերժվում է: Կռիվն սկսվում է: Մեր դիրքերի դեմը կանգնած էր հսկայական բարձրությամբ սարը, որի գագաթին դիրքեր էին գրավել թուրքերն ու նրանց ազդեցության տակ գտնվող մոդոյալ քրդերը, իսկ արևելյան կողմը ուղղաձիգ ժայռ էր (Չիպլիգ), որը անառիկ դիրք էր հայերի համար: Կռիվը կատաղի կերպով շարունակվում է երեք օր:

Չորրորդ օրը երեք հայ գինվորներ լուր են բերում, որ Կարսվանը գաղթել է, իսկ Ղարսից օգնության հույս չկա: Առանց այն էլ փամփուշտի պաշարը պակասել էր: Առանց խուճապ առաջացնելու Տեր Սարգիսը այդ օրը սովորականի պես դիմադրությունը շարունակում է, որից հետո միայն հայտնում ժողովրդին, որ ուրիշ ելք չկա, պետք է թողնել գյուղը և գաղթել, գոնե կոտորածից փրկվելու համար: Ամբողջ գիշեր անցնելով հասխարաշրջան, Ղանի և Մարգարյակ գյուղերը, կարճ ճանապարհներով նա մի քանի հազար շուն ժողովրդին անվնաս առաջնորդան հասցնում է Ալեքսանդրապոլ:

Տեր Սարգիսը ընտանիքով բնակություն է հաստատում Թալինի շրջանի Ադիաման գյուղում, որտեղ քահանա չկար: Այստեղ նա իր ժողովրդին հովվում է մինչև 1930 թվականը: Հանգամանքների բերումով Տեր Սարգիսը նորից ընտանիքով տեղափոխվում է Երևան: Հանգուցյալ Վեհափառ կաթողիկոս Չորեքյանը «Կոնդ»-ի ժողովրդի միջնորդությամբ նրան նշանակում է Ս. Հովհաննես եկեղեցում որպես քահանա: Բայց երկար չի տևում նրա բեղմնավոր կյանքի ուղին: 1943 թվականին նա վախճանվում է և թաղվում Երևանի ժողովրդական տնտեսության նախագծումների ցուցահանդեսի մոտ գտնվող գերեզմանատունը:

Տեր Սարգիսը՝ այդ քաջարի քահանան, իր ամբողջ կյանքի ընթացքում անխախտ մնաց իր հայրենասիրական և հոգևորական կոչման բարձրության վրա՝ վայելելով ժողովրդի սերը և Ս. Էջմիածնի միաբանության հարգանքը:



ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺ. Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ՔՀՆ. ՄԵՀՐԱԲՅԱՆԻ
(1916—1983 թթ.)

1983 թ. դեկտեմբերի 6-ին ի Տեր հանգյալ Էջմիածնի շրջանի Մրգաստան գյուղի Ս. Հովհաննես եկեղեցու ծիսակատար արժ. Տ. Խաչատուր քահանա Մեհրաբյանը:

Տ. Խաչատուր քահանան ծնվել է 1916 թ. Իրանի Բուրվարի շրջանի Անավշ գյուղում, հողագործի ընտանիքում:

Նախնական և միջնակարգ կրթությունն ստանում է իր ծննդավայրի ծխական դպրոցում և ապա երիտասարդ տարիքից նվիրվում հայ մատաղ սերնդի ուսման ու դաստիարակության գործին: Մինչև 1946 թ. ուսուցչական պաշտոններ է վարում Անավշում և հարևան գյուղերում:

1946 թ. ընտանյոք ներգաղթում է Սովետական Հայաստան և բնակություն հաստատում Էջմիածնի շրջանի Նուշի սովխոզում:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ 1962 թ. ձեռնադրվում է քահանա ձեռամբ Գեր. Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյանի:

Տ. Խաչատուր քահանան ծառայել է Ստեփանավանի Ս. Աստվածածին, ապա 1964—1970 թթ. Ապարանի Ս. Նշան և 1970 թ. մինչև իր մահը Մրգաստանի Ս. Հովհաննես եկեղեցիներում:

Նա ծառայասեր, խոնարհ և բարեհամբույր

հոգևորական էր՝ սիրված և հարգված իրեն ճանաչող բոլոր հավատացյալներից:

Դեկտեմբերի 8-ին, քահանայից դասի և հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ, հանգուցյալի վերջին օծման և թաղման կարգը կատարում է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը:

Հանգուցյալի աճյունը ամփոփվում է Նուշի սովխոզի գերեզմանատանը:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ 1984 г.)

1. Патриаршая проповедь по случаю праздника Святого Рождества, произнесенная в Кафедральном соборе 6 января 1984 г. (стр. 3—5).

2. Обмен приветственными телеграммами и посланиями между Католикосом Всех Армян Вазгеном I и главами братских церквей по случаю Нового года и Святого Рождества (стр. 6—8).

3. Приветственное послание Католикоса Всех Армян Вазгена I, адресованное трем иерархическим престолам Армянской церкви, епархиальным предстоятелям и церковным общинам по случаю праздников Нового года и Святого Рождества (стр. 9—10).

4. Обмен новогодними приветственными телеграммами между Католикосом Всех Армян и высокопоставленными государственными деятелями (стр. 11—13).

5. Энциклика Его Святейшества о праздновании 265-летия блаженной памяти Захарии Кагзванци, патриарха Константинопольского (20 января 1984 г., № 1239) (стр. 14—15).

6. Рождественские торжества в первопрестольном Эчмиадзине 5—6 января 1984 г. (стр. 16).

7. Новый год в первопрестольном Эчмиадзине. Патриаршее слово на новогодней вечерней трапезе 31 декабря 1983 г. (стр. 17—19)

8. Праздник св. Стефана в первопрестольном Эчмиадзине и диаконское рукоположение 26 декабря 1983 г. (стр. 20—23).

9. Проповедь епископа Персеса Позапаляна по случаю праздника св. Стефана, произнесенная в Кафедральном соборе 26 декабря 1983 г. (стр. 24—25).

10. *Церковная жизнь* (сообщения): литургии, прочие церковные обряды, проповеди, произнесенные в Кафедральном соборе в января 1984 г. (стр. 26—28).

11. Посещение армянской епархии в Азербайджане настоятелем монастыря св. Рипсим архимандритом Масисом Галстяном 5—9 января 1984 г. (стр. 29).

12. *Нерсес Катар*—Эчмиадзин (стихотворение, посвященное 1680—летию воздвижения храма св. Эчмиадзина) (стр. 30).

13. *Архимандрит Акоп Глнчян*—Несколько вопросов, связанных с дьяволом—искусителем или злом (исследование) (стр. 31—38).

14. *Иеромонах Шнорк Багдасарян*—Гонения на христиан в Сюнике в догригорианскую эпоху: I—III вв. (исследование) (стр. 39—43).

15. *Священник Ермик Петросян*—Послание Степаноса Сюнеци «Ответное слово архимандритам Агвании» (исследование) (стр. 44—50).

16. *Проф. Вараздат Арутюнян*—Начинания в области строительства, предпринятого первопрестольным Эчмиадзином в 1956—1980 гг. в период правления Католикоса Всех Армян Вазгена I (исследование) (стр. 51—56).

17. *Мигран Мурадян*—Священнослужители-участники героической обороны Армении в 1918 г. (стр. 57—59)

18. Смерть достопочтенного священника Хачатура Меграбяна (некролог) (стр. 60).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 1984)

1. Patriarchal sermon in the Holy Cathedral on the occasion of the feast of Holy Christmas, 6-th January 1984 (pages 3—5).

2. The cables and letters of greetings exchanged between His Holiness Catholicos Vasken I, and the spiritual heads of the Sister Churches, on the occasion of New Year and Holy Christmas (pages 6—8).

3. The congratulatory letter of His Holiness written to the three hierarchical Sees of the Armenian Church, all diocesan primates and church communities, on the occasion of the feasts of New Year and Holy Christmas (pages 9—10).

4. Cables exchanged between Vasken I, Catholicos of all Armenians, and statesmem of high-rank on the occasion of New Year (pages 11—13).

5. The encyclical of His Holiness to mark the 265-th birthday anniversary of Patriarch **Zakaria Kaghzvantzi**, 20-th January 1984, No. 1239 (pages 14—15).

6. The festivities of Holy Christmas in the Mother See, 5—6th January 1984 (page 16).

7. The New Year in the Mother See. The speech of His Holiness given on the occasion of the feast of New Year, 31-st December 1983 (pages 17—19).

8. The celebration of the feast St. Stephen, and ordination of deacons in the Holy Cathedral 26-th December 1983 (pages 20—23).

9. The sermon of Bishop Nerses Bozabalian, given in the Holy Cathedral during the celebration of St. Stephen, 26-th December 1983 (pages 24—25).

10. Description of the Divine liturgy services and sermon delivered in the Holy Cathedral and feasts taken place in the Mother See during the month of January (pages 26—28).

11. The visit to the Armenian diocese of Azerbaidjan of Reverend Massis Galesdian, the superior of the monastery of St. Hripsimeh at Etchmiadzin, 5—9th January 1984 (page 29).

12. **Nerses Katar**—„Etchmiadzin" (poetry devoted to the 1680-th anniversary of Holy Etchmiadzin's edification)—(page 30).

13. **Reverand Hagop Kelendjian**—„A few questions related to the spiritual temptation or the spiritual evil" (study)—(pages 31—38).

14. **Reverend Shnork Baghdassarian**—„Persecutions of christians in Syunik during the period before St. Gregory, I-III centuries" (study) (pages 39—43).

15. **Father Eznik Petrossian**—„The epistle of Stepanos Syunetzi entitled „Answer to the vardapets of Aghvank" (study) — (pages 44—50).

15. **Varazdat Harutiunian**—„The history of the architectural activity of the Holy See of St. Etchmiadzin, during the patriarchate of His Holiness Vasken I, the Catholicos of all Armenians (1956—1980)„(study)—(pages 51—56).

17. **Mihran Hovhannes Muradian**—„The clergymen participants of the heroic self-defence of Armenia during 1918": Father Gevorg Hayrapetian and Father Sarkis Ter Gevorgian (study)—(pages 57—59).

18. The death of Father Khatchatur Mehrabian (obituary)—(page 60).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 1984)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1984 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la Nativité de notre Seigneur Jésus-Christ (pages 3—5).

2. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs des Eglises soeurs à l'occasion des saintes fêtes de Noël et du Nouvel An (pages 6—8).

3. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise arménienne à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pages 9—10).

4. Echange de télégrammes entre Sa Sainteté et les hautes personnalités d'Etat de la R.S.S d'Arménie à l'occasion de la fête du Nouvel An (pages 11—13).

5. Encyclique No 1239 de Sa Sainteté publiée le 24 janvier 1984 à l'occasion du 265e anniversaire de la naissance du bienheureux Zakaria Kaghzvantsi, patriarche des Arméniens de Constantinople (pages 14—15).

6. Solennités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées à la fête de la sainte Nativité (5—6 janvier) —(page 16).

7. Description des festivités organisées au Saint-Siège d'Etchmiadzine la nuit du 31 décembre 1983 et allocution de Sa Sainteté à cette occasion (pages 17—19).

8. Le 26 décembre 1983, célébration de la fête de saint Etienne et ordination de diacres dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pages 20—23).

9. Sermon de l'évêque Nersès Bozaballan prononcée le 26 décembre 1983 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de saint Etienne (pages 24—25).

10. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de janvier 1984 (pages 26—28).

11. Visite du Père Massis Galstian, supérieur du monastère de Sainte-Hripsimée, au diocèse des Arméniens d'Azerbaïdjan, du 5 au 9 janvier (page 29).

12. **Nersès Katar**—„Etchmiadzine" (poème dédié au 1680e anniversaire de l'édification de la cathédrale de Saint-Etchmiadzine)—(page 30)

13. **Père Hakob Kelendjian**—„Quelques problèmes qui se rapportent au tentateur ou à l'esprit du mal" (étude)—(pages 31—38).

14. **Père Chenorhk Baghdassarian**—„Persécutions des chrétiens à Siounik à l'époque prégrégorienne: Ier-IIIe siècles" (étude)—(pages 39—43).

15. **Père Yeznik Pétrossian**—„L'épître de Stépanos Siounétsi intitulée „Réponse aux docteurs de l'Eglise d'Albanie [du Caucase]" (étude)—(pages 44—50).

16. Prof. **Varazdat Haroutiounian**—„Histoire des travaux de construction réalisés par le Saint-Siège d'Etchmiadzine dans les années 1956—1980 du patriarcat de Sa Sainteté Vasken Ier" (suite)—(pages 51—56).

17. **Mihran Mouradian**—„Les prêtres qui ont pris part aux combats menés en 1918 pour l'autodéfense du peuple arménien: Père Guévork Haïrapétian et Père Sarkis Ter-Guévorkian" (suite et fin)—(pages 57—59).

18. Décès du Père Khatchatour Mehrabian (nécrologie)—(page 60)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում 3

Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 6

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին . 9

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան սինձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ 11

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կոստանդնուպոլսի երջանկահիշատակ Տ. Զաքարիա Պատրիարք Կաղվանցու ծննդյան 265-ամյակը նշելու մասին 14

Սուրբ Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում 16

Ամանորը Մայր Աթոռում 17

Ս. Ստեփանոսի տոնը և սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում . . 20

Տ. Ներսես եպիսկոպոս Պողապալյանի քարոզը Մայր տաճարում Ս. Ստեփանոսի տոնին . 24

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 26

Ադրբեջանի հայոց թեմում 29

ՆԵՐՍԵՍ ԿԱՏԱՐ—Էջմիածին 30

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԲԼԸՆՃՅԱՆ—Փորձիչի կամ չարի հետ առնչվող մի քանի հարցեր . 31

ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Քրիստոնյաների հալածանքներ Սյունիքում նախագրիգորյան շրջանում (Ա—Գ դդ.) 39

ԵՂՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Ստեփանոս Սյունեցու «Բան պատասխանւոյ առ վարդապետսն Աղուանից» թուլթը 44

ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Պատմություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության օրոք (1956—1980) 51

ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ—1918 թվականին Հայաստանի հերոսական ինքնապաշտպանության հոգևորական մասնակիցները 57

Հանգիստ արժ. Տ. Խաչատուր քհն. Մեհրաբյանի 60

„Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61

„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62

„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 25.01.1984 թ.: Ստորագրված է տպագրության 23.02.1984 թ.:
Տպագրական 4 մամուլ + 3 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 77

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1984 թ.